


ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

(գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

5/2014

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
(периодический сборник научных статей)

ARMENOLOGY RESEARCHES
(periodical collection of scientific articles)



Ստեղծամակներ - 2015



ՀՏ 001

ԳՄ 72

Հ 246

*Տպագրվում է ԱրՊԿ գիտական խորհրդի որոշմամբ
Հրատարակվում է 2009 թվականից*

Խմբագրական խորհուրդ

- Բալայան Վ. Ռ. - զլիսավոր խմբագիր, պ.գ.դ., պրոֆեսոր
Սաֆարյան Վ. Ա. - պատասխանատու քարտուղար, ԱրՊԿ պատմության
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Դադայան Ս. Վ. - Արցալսի գիտական կենտրոնի տնօրեն, պ.գ.թ., պրոֆեսոր
Մնլքոնյան Ա. Ա. - «Հ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ.,
«Հ ԳԱԱ թղթակից անդամ
Հռվիաննիայան Լ. Շ. - «Հ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, բ.գ.դ., պրոֆեսոր, «Հ
ԳԱԱ թղթակից անդամ
Պետրոսյան հ. Լ. - ԵՊԿ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ.գ.դ.,
պրոֆեսոր
Մուսայելյան հ. Գ. - ԱրՊԿ բ.գ.դ., պրոֆեսոր
Սարգսյան Ա. Յ. - ԼՂՀ կրթության նև գիտության փոխնախարար, բ.գ.թ.,
դոցենտ
Կարապետյան Ս. - «ՀՃՈՒԿ կազմակերպության տնօրեն

Հայագիտական ուսումնասիրություններ: Գիտական հոդվածների
Հ 246 պարբերական ժողովածու 5/2014.- Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատ.,
2015.- 192 էջ:

ՀՏ 001

ԳՄ 72

ISBN 978-9939-1-0184-2

© Հայագիտական ուսումնասիրություններ, 2015



Редакционная коллегия:

- Балаян В.Р. - главный редактор, д.и.н., профессор
Сафарян В.А.- ответственный секретарь, зав. кафедрой истории АрГУ,
к.и.н., доцент
Дадаян С.В. - директор Арцахского научного центра, к.и.н., профессор
Мелконян А.А. - директор Института истории НАН РА, д.и.н., член корр.
НАН РА
Оганесян Л.Ш. - Институт языка НАН РА, д.ф.н., член корр.
НАН РА
Петросян Г.Л. - зав. кафедрой культурологии ЕрГУ, д.и.н., профессор
Мусаелян О.Г. - АрГУ, д.ф.н., профессор
Саркисян А.Ю..- заместитель министра Образования и науки НКР,
к.ф.н., доцент
Карапетян С. - председатель общественной организации по изучению
армянской архитектуры.

Editorial Board:

- Balayan V.R. - Editor in Chief, Ph.D. in History, Professor
Safaryan V.A. - Executive Secretary, Head of the History Department of
ASU, Ph. D. in History, Associate Professor
Dadayan S.V. - Chief of the Artsakh Scientific Centre,
Ph.D. in History, Professor
Melqonyan A.A. - Institute of History of NAS in RA,
Ph. D. in History, a member of NAS in RA
Hovhannisyan L. Sh. - Director of the Institute of Linguistics of NAS in RA,
Ph. D. in Philology, member of NAS in RA
Petrosyan H. L - Head of the Cultural Studies Department of YSU,
Ph. D. in History, Professor
Musaelyan O.G. - ASU, PhD in Philology, Professor
Sargsyan A. Y. - Deputy minister of Education and Science of NKR,
Ph. D. in Philology, Associate Professor
Karapetyan S. - Chairman of the Social Organization for the Study of
Armenian Architecture

ՍԻՐԱՆԵՍ ՎԱՐԴՊԵՏԸ ՀԱԼԻՉՈՐ ԳՅՈՒՂԻՑ*

Սերգեյ Հախվերյան

Դոցենտ

Գորիսի պետական համալսարան

Բանապի բառեր: Վարդպետ, Ամաղուի Նորավանք, Հալիծոր, Գյաճորի համալսարան, Մոսկվա:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի ենթաշրջանի տարածքում հայտնի են համահայկական ճանաչում, պատմա-ճարտարապետական, հոգևոր-մշակութային արժեք ներկայացնող շինություններ՝ Տաթևի վանք, Բղենո Նորավանք, Հալիծորի ու Տաթևի հարանց անապատներ, Վերիշենի Ս. Յօհվանի եկեղեցի և այլն: Մեզ հասել են միայն որոշ կորողների կառուցումը հովանավորած անձանց անունները, իսկ դրանց ճարտարապետների, քարգործ վարպետ շինարարների մասին տարեգրությունը լրում է: Այնուամենայնիվ, շնորհիվ վիմագիր արձանագրությունների, մեզ հայտնի է դարնում ծնունդով Գորիսի Հալիծոր գյուղացից մի նշանավոր ճարտարապետի անուն: Խոսքը միջնադարյան հայ նշանավոր ճարտարապետ-շինարար, քարգործ-վարպետ՝ վարդպետ Սիրանեսի մասին է¹:

Սյունյաց ամենաերևելի ու հզոր Օրբեյան իշխանը եղել է Սմբատը (1253-1273): Նա մահացավ Թավրիզում, թաղվեց Ամաղուի Նորավանքում: Սմբատին փոխարինած Սյունյաց իշխանաց իշխան Տարսայինը 1275թ. Սիրանես ճարտարապետին հանձնարարում է եղբոր գերեզմանի վրա կառուցելու Ս. Գրիգոր եկեղեցին, որը հայտնի է «Սմբատի դամբարան» անունով: Սիրանեսի նախագծած ու կառուցած գողտրիկ եկեղեցին Ալիշանի բնորոշմանը «սագաշեն» է², միանավ բազիլիկի տիպի, թաղակապ, երկթեք տաճիքով, իսկ արևմտյան կողմից՝ այունազարդ շքամուտքով:

Ս. Գրիգոր եկեղեցին Ամաղուի Նորավանքի եկեղեցիների խմբի կարևոր բաղադրիչներից է:

*Հոդվածը ընդունված է 17.12.14:

¹ Սիրանեսը վարդպետ է անվանված վիմագիր արձանագրության մեջ: Վարդպետը վարդապետն է: Ղ. Ալիշանի, Ք. Օրբելու և այլոց կարծիքով վիմագրերում հիշատակվող շենքեր կառուցող վարդպետ-վարդապետները ճարտարապետ-շինարարներն են (տես Գրիգորյան Գ., Նվիրատվություններ Ամիկ եկեղեցիներին ու վանքերին 9-14 դդ., Եջմիածին, 2002, էջ 112): Կարծում ենք դա նաև տեսական գիտելիք ու մեցողի բնութագրակամն է, իր մասնագիտությամբ վարդապետական գավազանի տիրացած անձի բնութագրակամը:

² Անգմբեր՝ սագի կամ տապանի նմանությամբ (տես, Ածառյան Յր. Շայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 153):

Սյունյաց տաճ պատմիչ Ստ. Օրբելյանը անդրադարձել է իր հայր Տարսայիծի կողմից հորեղբայր Սմբատի համար դամբարանատան կառուցմանը: Նա գրում է. «Իր եղբայր Տարսայիծը Սմբատի համար (այնուհետև) կառուցում է դամբարանատուն՝ սուրբ Գրիգոր ամունով Եկեղեցին, այնտեղ է փոխադրում Եղբօր աճյունը՝ հավերժական հանգստյան»¹: Պատմիչը խոսում է Ս. Գրիգոր Եկեղեցի դամբարանի կառուցման մասին, բայց չի հիշատակում Եկեղեցին կառուցող ճարտարապետի անունը, որը Եղել է իր ժամանակակիցը: Պատմիչը չի նշում նաև Եկեղեցու հյուսիսային պատի վրա իր հոր կողմից արված արձանագրության մասին: Բարեբախտաբար արձանագրությունը անխաթար վիճակում հասել է մեր ժամանակները: Այն հրատարակել կամ ուսումնասիրել են Ս. արքեպ. Զալայանցը, Ե. Լալայանը, Ղ. Ալիշանը, Ս. Բարիխուդարյանը, Գր. Գրիգորյանը՝ հայերեն, նաև ոուսերեն լեզուներով²: Սույն ուսումնասիրության շրջանակներում բովանդակությունից զատ, մեզ չեն հետաքրքրում արձանագրության առանձին բառերի տարրներցումները կամ բառերի մոտ նշված հարցականները, որոնք, ասենք, կան Ալիշանի մոտ: Մեզ համար առավել ընդունելի է պրոֆ. Գր. Գրիգորյանի հրապարակած այդ արձանագրության ամբողջական տեքստը՝ մեկնաբանություններով հանդերձ: Այնտեղ կարդում ենք. «... որ Եկեղեցի տվի շինել Սիրանէս վարդպետին ու գՅալէճորի Շնիերոյ նրայ հայրենիք տվի, ու ինչ գեկեղեցին լմնեցին խիլայ կատարաք: Շ: (500) սպիտակ, ի այն խիլային փոխան զԱղազար Ըղուերծեցին տվաք՝ նրանց հայրենիք լինի...»³: Ուրեմն վարդպետ Սիրանեսին որպես աշխատանքի վարձատրություն Տարսայիծ իշխանը, անտարակույս վարդպետ Սիրանեսի իսկ խնդրանքով, որպես «հայրենիք»՝ ասյինքն ժառանգական իրավունքով նրան կալվածք-տարածքներ է տալիս ներկայիս Գորիսի Շինուհայր և Յալիճոր գյուղերի սահմանների հատման վայրում: Նույն բովանդակությամբ, սակայն ավելի հակիրծ ու սեղմ արձանագրություն կա և Յալիճոր գյուղի Խաչին խուր կամ Վնսար (Վանասար) վայրում կանգնած խաչքարի պատվանդանին⁴: Նույն Խաչին խութում Սիրանեսը իր եղբայր Յգարմելի հետ իրենց ծնողների՝ հայր Գոքայի և մայր Թեմի-

¹ Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, թարգմ. մերած. և ծանոթագր. Ա. Արրահայանի, Երևան, 1986, էջ 335:

² Տես Զալայեանց Ս., ճանապարհորդութիւն ի Մեծն Յայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 172, Լալայան Ե., Ազգագրական համելս, գիրք 26, Թիֆլիս 1898, էջ 503, Ալիշան Ղ., Սիսական, Վեմետիկ, 1893, էջ 191: Բարիխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, գիրք 3, էջ 234-235, Գրիգորյան Գր., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 123, Գրիգորյան Գր., Օչերку истории Сюника IX-XV вв, Ереван, 1990, 319:

³ Գրիգորյան Գր., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 123:

⁴ Տես Բարիխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, ի լլ, Երևան, 1960, էջ 52:

կայի հիշատակի խաչքարի ճակատին արել են չորստողանոց արձանագրություն¹: Վերոհիշյալ արձանագրություններին առնչված բոլոր ուսումնասիրողները միակարծիք են, որ Սիրանես ճարտարապետ-վարդպետը եղել է բնիկ Յալիձոր գյուղացի²:

Սիրանես վարդպետին վերաբերող արձանագրությունները որոշակի արժեքավոր նյութեր են պարունակում միջնադարյան Յայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար:

Ուսումնասիրողների մոտ տակավին տարակարծություններ կան, թե որքան է կազմել և ինչ սահմաններում է ընդգրկվել Շինուհայր և Յալիձոր գյուղերի հողատարածքում որպես հայրենիք Սիրանես ճարտարապետին շնորհված տարածքը: Ոմանք կարծում են, որ ճարտարապետին տրվել է նաև Շինուհայր գյուղը³: Պրոֆ. Գր. Գրիգորյանը, Ելմելով վիմագիր արձանագրություններից ու դրանց տեղադրությունից, հստակ տալիս է վարդպետին նվիրված հողատարածքի անվանադիր սահմանները և գտնում է, որ վերոհիշյալ երկու գյուղերն ամբողջապես չեն տրվել Սիրանեսին, քանի որ դրանք արդեն իսկ նույն իշխանի կողմից այլ հինգ գյուղերի հետ տրված էին Տարեկի վաճրին:⁴ Սիրանեսին տրված կալվածքը եղել է Որոտան գետի գեղատեսիլ կիրճում, Շինուհայր և Յալիձոր բնակավայրերի արանքում: Գնել Գրիգորյանը համամիտ է այս կարծիքին ու նույնիսկ փորձել է տալ տարածքի մոտավոր չափերը՝ 10-20 հեկտար, «... որի մի մասը հարմար էր անասնապահության, իսկ մյուս ցածրադիրը՝ այգեգործության համար: Այնտեղ նա (Սիրանեսը – Ս. Յ.) հաստատել է ազարակի բնույթի տնտեսություն, շինել բնակարաններ, մատուռ: Այնտեղ են գտնվել Սիրանեսի տոհմի անդամների տապանաքարերը»⁵:

Իշխան Սմբատ Օրբելյանի նախաձեռնությամբ ու հանձնարարությամբ, Սիրանես ճարտարապետը վերակառուցել է Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցու գավիթը⁶: Գավիթի արևանդյան ճակատի վերնամասում լուսամուտի կիսաշրջանաձև, խորանիստ ճակատակալի վրա Սիրանեսը արել է մի հրաշագեղ պատկերաքանդակ, որն իր լուծումներով դուրս է գալիս ավելի բարձր հորիզոններ, քան հայ ազգային քանդակագործության

¹ Նույն տեղում, էջ 53:

² Տես Բարիսուղայան Ա., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 75:

³ Գրիգորյան Ա., Վայոց ձորի և Որոտանի մամրամկաշուրջում XIII – XVII դդ., Երևան, 2003, էջ 150:

⁴ Գրիգորյան Գր., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 124:

⁵ Գրիգորյան Գ., Նվիրատվություններ Ամիր Եկեղեցիներին ու վաճքերին IX – XIV դդ., Էջմիածին, 2002, էջ 112:

⁶ ԿՄԴ հ. 8, Մանագական Ա., Երևան, 1972 թ., էջ 378:

շրջանակներն են¹: Այն աղերսներ ունի Բղենո-Նորավանքի բարձրաքանդակների հետ:

Սիրանեսը եղել է Տարսայիծ Օրբելյանի «Դրան»՝ իշխանական տան ճարտարապետը, ունեցել օգնականներ: Նա կառուցմեր է թողել նաև Արատեսի վանքում, ուր Տարսայիծ իշխանը շինարարական աշխատանքներ ծննդարկեց՝ այն դարձնելու Նորավանքի եպիսկոպոսական ամառանոցի վայր: Որ Արատեսի գեղատեսիլ գավիթներից լավագույնը կառուցել է Սիրանեսը, իր Գրգորիկ օգնականի հետ², անտարակուտելի է: Դա է վկայում նաև համալիրը իհմովին ուսումնասիրած Ս. Բարիսուդարյանը՝ ասելով, որ այստեղ բժիշկ Քաջերումին գավիթի վերին կամարից ընկած մի քարի վրա կարդացել է. «ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՍԻՐԱՆԵՍԻՆ», քարն այժմ չկա, անհետացել է: Նույն գավիթի հյուսիս-արևմտյան մույթի խոյակի վրա գրված է. «ԳՐԳՈՐԻԿ»³: Արատեսի գավիթի շինարարական աշխատանքներն ավարտվել են կամ 1268 թ. կամ 1270 թ.:

Սիրանեսի կառուցած գավիթը Արատեսի վանական համալիրի զարդն է և հայ ճարտարապետության մեջ ունի ուրույն տեղ՝ իր անկրկնելի խաչվորվող կամարներով: Գավիթն ունեցել է կենտրոնից ելնող շքաքարային մշակումով երդիկով զմբեթ:

Սիրանեսը սոսկ արհեստավոր քարգործ-վարդպետ կամ շինարար ճարտարապետ չի եղել: Նա ունեցել է տեսական խոր գիտելիքներ և ըստ պրոֆ. Գր. Գրիգորյանի դասավանդել է Գլածորի համալսարանում. «... - կարելի է ենթադրել, որ Գլածորի համալսարանում դասավանդվել է նաև ճարտարապետություն, որը հավանորեն ուսուցանել են Օրբելյանների պալատական ճարտարապետներ Սիրանեսը և նրա տաղանդավոր աշակերտ Մոմիկը»⁴: Սիրանեսի գործի շարունակողը եղել է նրա աշակերտ Մոմիկը, որը ավարտին հասցրեց Անաղուի Նորավանքի չքնաղագեղ համալիրը: Իսկ Սիրանեսը, ունենալով առաջացած տարիք, որոշում է իր կյանքի վերջալույսն անցկացնել ծննդավայր Յալիձորում, ստանձնելով իրեն շնորհված կալվածքի տնօրինումը: Կասկած չկա, որ նա մասնակցություն է ունեցել իր ծննդավայրում կամ կալվածքում շինությունների, աղբյուրների կամ կամուրջների, խաչքարերի ստեղծնան աշխատանքներին:

¹ Տես Թրիստոնյա Յայաստան, համրագիտարան, Յայրաբյան Ա., Երևան, 2002թ., էջ 811:

² Գրգորիկ անվանը համրիպում ենք Յալիձորի Ծոցիկ վայրում կամքմեցված խաչքարի արձանագրությունում: Թերևս նա էլ է եղել հայիձորցի:

³ Բարիսուդարյան Ստ., Դիվան հայ վիմագրության, հ. 3-րդ, Երևան, 1967թ., էջ 125:

⁴ Գրիգորյան Գր., ճշկ. աշխ., էջ 163:

Պատմաբանները անդրադառնալով Սիրանեսին հիշատակող արձանագրություններին, ուշադրություն են դարձրել ճորտատիրությանը բնորոշ մի երևույթի արձանագրմանը, ըստ որի կալվածքների հետ մեկտեղ, որպես հայրենիք, Սիրանեսին է տրվել Աղազար Ըղվերծեցին, որպեսզի նա որդոց որդի ծառայի¹: Վերոհիշյալը վիմագրական եզակի փաստերից է և վկայում է Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններում ճորտատիրության երևույթի առկայությունը, թեաբետ այն կրել է ոչ մասսայական, մասնավոր բնույթ:

Հայ մարդու շինարարական-ճարտարապետական տաղանդը երկրամասի բնակիչների մոտ արտահայտվել է նաև նոր ժամանակներում: Միջնադարյան հայ երևելի ճարտարապետ-շինարարի ժառանգական գեներն արտահայտվել են Գորիս քաղաքի շինարարության ու ճարտարապետության մեջ: Պատահական չէ, որ Գորիսը մասնագետների կողմից համարվել է 19-րդ դարավերջի հայ ճարտարապետության գոհար²:

Ամփոփում

13-րդ դարում Սիրանեսը եղել է հայ քանդակագործության նշանավոր դեմքերից մեկը: Նա ծնվել է Գորիսի շրջանի Յալիձոր գյուղում: Անաղուի Նորավանքում նա կառուցել է սուրբ Գրիգորի անվան եկեղեցին: Այդ մեջ գործի համար նա Տարսայի Օքբելյան իշխանից հայրենի Յալիձորում կալվածք է ստացել: Այդ նվիրատվության մասին արձանագրությունը պահպանվում է ինչպես Անաղուի Նորավանքում, այնպես էլ Յալիձորում:

Սիրանեսի աշակերտն է եղել նշանավոր հայ քանդակագործ Մոմիկը:

¹ Ընդվերծը Սյունիքի Ծղուկ գավարի գյուղերից է: Ըստ Ա. Դասրաբյանի 16-17-րդ դդ. այն վերանվանվել Դարբաս-Դարբաս (Դասրաբյան Ա., Պատմահնագրություններ, Երևան, 1985, էջ 137, տես նաև Դավթյան Շ., Սիրիանի բնակավայրերի պատմությունը, Երևան, 1997, էջ 52):

² Արյունյան Բ., Կаменная летопись армянского народа, Ереван, 1985, стр. 124-125: Գորիսում ուրույն ճարտարապետներ են ապրում նաև այսօր: Նրանցից մեկն է շնորհաշատ Ալաղա Զաքարյանը, որն իրականացրեց Գորիս քաղաքի Սրբագործությունը՝ կառուցումը, տվեց Գր. Տաքանացուն նվիրված հուշակոթողի ճարտարապետական ամերկնելի լուծումը և այլն:

Сиранес вардапет из села Алидзор

Сергей Ахвердян

Резюме

Ключевые слова: Вардапет (мастер), Амагунский Нораванк, университет Гладзора, Момик.

Сиранес был одним из выдающимся личностей армянского зодчества 13 в. Родом он был из села Алидзор Горисского района. Он построил церковь св. Григора в Амагунском Нораванке и от князя Тарсач Орбелян в родном Алидзоре получил земельный участок. Об этом дарении сохранились каменные надписи и в Амагунском Нораванке и в Алидзоре.

Учитником Сиранеса был талантливый армянский зодчий Момик.

Siranes Vardapet from the village of Halidzor

Sergey Hakhverdian

Summary

Key words: Vardapet (Master), Noravank of Amaghu, Halidzor, the university of Gladzor, Momik.

One of the most outstanding people of the 13th century's architecture is Siranes. He is a descent of the village Halidzor, of Goris region. He built St. Grigor church in Amaghu at Noravank and in return he got a piece of land in his native village Halidzor from the Prince Tarsayitch Orbelyan in return got a land as a gift. Lithograph records about that donation have been preserved both in Amaghu and in Halidzor. The alented armenian architect Momik used to be Siranos' apprentice.

**ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ ԽVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ¹**

Գոհար Մխիթարյան

ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Բամալի բառեր. Հյուսիս-արևելյան Այսրկովկասի, Շաքի, ջիզա, Դերբենդ, Սեֆյան իրան, Դուբա, կոնալդա, Շամախի, Ֆաթ Ալի խան, Բաքու, Օսմանյան կայսրություն, Նադիր շահ, Ղարաբաղ, Թերիմ խան, Դակոր Շամախեցի, խանություն, գլխահարկ:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասը մեծ տերությունների ռազմաքաղաքական, առևտուրա-տնտեսական ու քաղաքակրթական խաչմերուկի կիզակետում գտնվելով, մշտապես իր վրա է կրել պատմական բոլոր ժամանակաշրջանների վայրիվերումները: Դրանք առաջին հերթին իրենց բացասական (Երբեմն՝ կործանարար) ազդեցությունն են ունեցել տեղի ժողովուրդների, մասնավորապես, հայերի սոցիալ-իրավական դրության վրա:

Հնուց ի վեր հայերը բնակվել են Հյուսիս-արևելյան Այսրկովկասի ողջ տարածքում և ենթարկվել տարածաշրջանում կատարվող ռազմաքաղաքական փոփոխությունների ազդեցությանը: Հայ ազգաբնակչությունը մշտապես ստիպված է եղել պայքարել իր կրոնի և մշակութային արժեքային համակարգի պահպանման համար: Ֆիզիկական գոյության օրիսական խնդրին զուգընթաց առաջնահերթ էր հայ ինքնության պահպանումը: Բացառություն չէր նաև Իրանի, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի ակտիվ դերակատարմանը պայմանավորված XVIII դարի պատմական և քաղաքական իրադարձություններով լի երկրորդ կեսը:

Այսպես, Նադիրշահի (1736-1747) մահից հետո Իրանում ծայր առաջ քաղաքական անկայուն իրավիճակը վրացական տարեգիրներն իրավանք «խռովություն» էին անվանում²: Իրանական պետության տրոհման հետևանքով Շիրվանում առաջանում են Շաքի, Դերբենդի, Դուբայի, Շամախի և Բաքվի կիսանկախ խանությունները՝ էթնիկ խայտաբղետ պատկերով:

Խանությունների ինքնուրույն գոյությունը իր բացասական հետևանքն ունեցավ առավելապես տարածաշրջանի ոչ մուսուլման բնակչության՝

¹ Հոդվածը ընդունված է 17.12.14:

² Վրաց աղյուրները Հայաստանի և հայերի մասին, հու. Գ (ԺՀ-ԺԹ դդ.), Թարգմանեց՝ Լ. Մելիքսեր-Բեկ, Եր., 1955, էջ 107:

հայերի, հրեաների և հնդիկների սոցիալ-իրավական կարգավիճակի համար:

Հայագիտության մեջ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի XVIII դարի երկրորդ կեսի հայերի սոցիալական և իրավական կարգավիճակի խնդիրը գրեթե լուսաբանված չէ: Հոդվածի շրջանակներում XVIII դարի երկրորդ կեսի աղբյուրագիտական հենքի վրա հիմնախնդրի նորովի լուսաբանումը կոչված է լրացնելու պատմագիտական բացը և վերահիմաստավորելու տարածաշրջանի սոցիալ-իրավական պատմությունը:

Հայտնի է, որ XVI-XVIII դարերի ընթացքում Հյուսիս-արևելյան Այսրկովկասը կամ Շիրվանը մտել է Սեֆյան Իրանի պետական համակարգի ֆինանսա-վարչական ու հարկային կարևորագույն բաղադրիչներից մեկը համարվող «Ազարբայջան» միավորի մեջ¹: Սոցիալ-իրավական հարաբերությունները Իրանի կենտրոնական իշխանության և հպատակ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի հետ, կառուցվում էին այդ համակարգի միջոցով և նրա սահմաններում: Սեֆյան պետության կազմում հայերը, ինչպես և հրեաները, բացի այլ հարկերից, պարտավոր էին շահին վճարել ջիզյա (զիսահարկ՝ յուրաքանչյուր հասուն տղամարդու հաշվարկով)²:

Հայերից գանձվող ջիզյան ժամանակի ընթացքում անընդիատ ավելացող լրացուցիչ գումարների ու տոկոսների պատճառով խոշորացել էր և հաճախ կազմում էր մի ամբողջ գյուղից գանձվող հարկերի կեսից ավելին³: Հայտնի է, որ Սեֆյան վերջին շահ Սուլթան Հուսեյնի օրոք խստացվում է հարկահավաքության համակարգը: Այսպես է վկայում Եսայի Հասան Զալայյանը «...զամենայն սահմանս երկրի, զիւղորդից և ազարակաց, զիոռ, զջուր, զայգի, զանդաստան, զծառ, զտունկ և զամենայն ինչ գրեցին»⁴: Նրա պատկերավոր խոսքով՝ «նորահնար չա-

¹ Խոսքը Սեֆյան պետության չորս (Բրաք, ֆարս, Ազարբայջան և Խորասան) Ազարբայջան վարչական ու ֆինանսական միավորի մասին է (Tadhkirat al-muluk: A Manual of Safavid Administration. (circa 1137/1725). Persian text in facsimile (B.M. Or. 9496). Translated and explained by Minorsky V., London, 1943, p. 162: Վերջինն իր մեջ էր միավորում Աստրատականի (Հենտրոնը՝ Թավրիզ), Չուխուր-Մասլի, Ղարաբաղի և Շիրվանի բնկարքեկությունները (նույն տեղում, էջ 164-168):

² Նոյն տեղում, էջ 180:

³ Հ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական բաղարականության հարցի շուրջը, - «Բանբեր Մատենադարանի», 1956, N 3, Եր., էջ 87: Հմմ. Ա. Պալազյան, Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Ер., 1972, с. 235.

⁴ Եսայի Հասան Զալայեանց, Պատմութիւն համառու Աղուանից երկրի, Երուսաղէմ, ի տպարանի Առաքելական Աքոռոյ Ս. Յակովեանց, 1868., էջ 16:

րիք»¹-ն իր ծանր հետևանքներն ունեցավ հայերի համար, քանի որ ջիզյան եռապատկվել էր:

Խորհրդային պատմագիտության մեջ այն տեսակետն է արտահայտվել, թե XVIII դարի Երկրորդ կեսին կիսանկախ խանությունների ժամանակաշրջանում ջիզյան կամ գլխահարկը դադարել էր գոյություն ունենալ: Արևելագետ Ի. Պետրուշևսկին թյուրիմացաբար որպես հիմք ընդունում էր Կովկասում ռուսական հրամանատարության կողմից 1823 թ. Ղարաբաղի, Շաքի և Շամախիի նահանգներում իրականացրած վիճակագրական «Նկարագրություններում» այդ հարկատեսակի բացակայության փաստը²: Նա եզրակացնում էր, որ հետագայում ևս Նադիր շահի կողմից ջիզյաի վերացման կարգը որոշ խանություններում պահպանվել էր: Սակայն ըստ Հ. Փափազյանի՝ Հայաստանում ջիզյա հարկատեսակը շարունակել է գոյություն ունենալ մինչև XVIII դարի վերջը³: Թեև հարցին յուրովի լուծում է տալիս նաև Վ. Գրիգորյանը Երևանի խանության 1780-1790-ական թթ. պատմությունը շարադրելիս. հիմք ընդունելով Հայկական մարզի կառավարիչ Ալ. Ճավագվածեի և Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի միջև 1828 թ. նամակագրությունը, նա եզրակացնում է, որ խանության ժամանակաշրջանում «հայերը ազատ են եղել հավատի հարկից»⁴:

Վերը նշված փաստարկները ժամանակագրական, պատմաքաղաքական հրավիճակի ու ռազմաքաղաքական հրադարձությունների զարգացման տեմպերի առումով չեն կարող ամբողջապես համապատասխանել իրականությանը: Օրինակ, Շաքի խանությունում խանական կառավարման ժամանակաշրջանում մահալները դեկավարվում էին սովորաբար ու բեկերի կողմից, իսկ ռուսական իշխանության օրոք 1820-1830-ական թթ. վարչական նոր բաժանումների հետևանքով ստեղծվում է մահալային նայիրի պաշտոնը⁵: Այս տրամաբանության մեջ է ընկալվում նաև այն իրողությունը, որ 1820-ական թթ. ռուսական իշխանությունների կատարած

¹ Նույն տեղում:

² И. Петрушевский, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв.*, Ленинград, 1949, 285.

³ А. Папазян, նշվ. աշխ., էջ 234:

⁴ Հարցիշուրց մանրամասն տե՛ս Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Եր., 1958, էջ 54:

⁵ Акты, собранные Кавказскою археографическим комиссиею, Под ред. Ад. Берже, Тифлис, т. VIII, 1881, с. 473.

խանությունների նկարագրություններում միևնույն մահալի տարբեր գյուղերի նույն հարկատեսակի չափը տարբեր է: Օրինակ՝ բաշ-վուլին (գլխահարկ) Ղարաբաղում Տաթևի մահալի Տաթև գյուղի 53 ծխերից հավաքագրվում էր 200 ռուբլի խանական փողով, Շինատակ գյուղի 12 ծխերից՝ 50 ռուբլի, իսկ Շինգեր գյուղի 56 ծխերից՝ 360 ռուբլի և այլն¹:

Հայտնի է, որ 1807 թ. Շաքիի խանության հայերը աղերսագիր են գրուն ի. Գուղովիչին՝ միջամտելու Ջաֆար Ղուլի խանի հավատի դիմաց գանձվող հարկի համար: Հետաքրքականն այն է, որ շաքեցիները մատնանշում են այն հանգանակը, որ Շաքիի կառավարության իրավունքը ստանալով՝ խանը հարկահավաքմամբ «վերադառնում է» իրենց տառապանքներ պատճառելուն²: Այսինքն՝ XVIII դարի երկրորդ կեսին ջիզայն պետք է, որ գոյություն ունենար Շաքիում, ինչպես նաև մյուս խանություններում:

Ավելին, 1770-1790-ական թթ. սկզբնաղբյուրներն ի տարբերություն խորհրդային պատմագիտական մտքի պնդումների՝ ուղիղ հակառակն են փաստում³: Այսպես, Վ. Զուբովի 1796 թ. Կասպիական արշավանքի մասնակից Պ. Բուտկովի վկայությամբ Ղուբայի խանության հայերն ու իրեները սահմանված հարկերից բացի պարտավոր էին խանին վճարել՝ ամուսնացածները՝ 1 ռուբլի, իսկ չամուսնացածները՝ 55 կոպեկ⁴: Արշավանքի մյուս մասնակից Ֆ. Սիմոնովիչի աղբյուրների համաձայն՝ ամուսնացածները խանին վճարում էին 2 ռուբլի 10 կոպեկ, իսկ չամուսնացածները՝ 1 ռուբլի 10 կոպեկ⁵:

Հայերի սոցիալ-հրավական դրությունը նույնն էր նաև Շամախիում, ուր բնակչությունը խանի գանձարան հաստատագրված հարկեր էր վճարում

¹ Описание Карабагской провинции, составленное в 1823 году, действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-м, Тифлис, 1866, с. 122, 123.

² Присоединение Восточного Армении к России. Сборник документов, т. I, Под ред. Ц. Агаяна, Ер., 1972, с. 429, 430, 431.

³ С. Гмелин, Путешествие по России для исследования трех царств естества, часть III, половина, СПб., Тип.императорской академии наук, 1785; Ф.Симонович, Описание Южного Дагестана. 1796 г., - История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М. Косвена и Х. Хашаева, Москва, Изд-во «Восточная литература», 1958 (հետայրություն՝ ИГЭД); Н.Дренякин, Описание Ширвана. 1796 г., - Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г., - ИГЭД; А.Серебров, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., - ИГЭД.

⁴ П. Бутков, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письем». 1796 г., - ИГЭД, с. 205.

⁵ Ф. Симонович, նշվ. աշխ., էջ 150:

յուրաքանչյուր ընտանիքից 100 ռուբլու չափով¹: Շամախիի հայ ազգաբնակչությունը հարկերից բացի պարտավոր էր խանին ջիզյա վճարել տարեկան 2 ռուբլի և 40 կրաքակ, չամուսնացածերը՝ 1 ռուբլի և 20 կրաքակ, իսկ մինչև 20 տարեկանները ազատված էին հարկերից²: Ավելին, անհրաժեշտության դեպքում Շամախիում խանը ցանկացած ձանապարհով հավաքում էր պահանջվող մթերքը, պարենը, ձիերը, անասունը, փողը, սակայն իհմնական ծանրությունն ընկնում էր հայերի վրա³:

1780-ական թթ. առաջին կեսին ռուսական լրտեսական աղբյուրների փոխանցմանը, «հասարակ ժողովուրդը» և «պարսից ազգաբնակչությունը, մասնավորապես, հայերը» ինչպես Ֆարի Ալի խանից, այնպես էլ իրենց մյուս խաներից դժգոհ էին, քանի որ շուրջ երեսուն տարի ծգվող ավատատիրական կրիպները հյուծել էին տեղի ժողովուրդներին՝ անսելի չափերի հասցնելով հավաքվող հարկերը և գինվորագրելով բնակիչներին⁴:

Կիսանկախ խանությունների քաղաքներում հայերը, պարսիկներն ու թաթարները խառն էին ապրում և պարտավոր էին հյուրընկալության (կոնալդա)⁵ պարտավորությունը կատարել: Այսպես, Ղարաբաղի խանությունում Շուշիի բնակիչները պարտավոր էին խանի հյուրերին ընդունել, հոգալ նրանց և ձիերի կարիքներն առանց դրամական վարձատրման⁶: Ըստ ակադեմիկոս Ս. Գմելինի, Ղերբենդում հայերը «խանին ոչ մի հարկ չեն վճարում»՝ փոխարենը պարտավորվելով ոստիկանական պարտավորություններ կատարել⁷: Հայերը Շամախիում և Ղերբենդում օտարերկրացիներին բնակարաններ տրամադրելուց բացի, պարտավոր էին քաղաքի դարպասների մոտ պահակային ծառայություն կատարել, քանի որ «ինչպես Ղերբենդում, այնպես էլ Շամախիում առավել շատ վստահում էին հայերին, քան թաթարներին ու պարսիկներին»⁸: Ղերբենդում հայերի վստահելի բնակիչներ լինելու մասին է վկայում Ս. Գմելինի հաղորդած

¹ С. Гмелин, նշվ. աշխ., էջ 96:

² Նոյն տեղում, էջ 96:

³ Նոյն տեղում, էջ 97-98:

⁴ Г. Цинцадзе, Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), - «Исторический вестник», N 23-24, Архивное управление при совете министров Груз. ССР, Тбилиси, 1970, с. 21.

⁵ А. Папазян, նշվ. աշխ., էջ 238: Հայկական աղյուրներում այս հարկատեսակը հիշատակվում է բրնակուր անվանումով (Հմմ. Հայոց պատմություն, Խո. Դ, Եր., 1972, էջ 272):

⁶ Описание Карабагской провинции, составленное в 1823 году, с. 8.

⁷ С. Гмелин, նշվ. աշխ., էջ 19:

⁸ Նոյն տեղում, էջ 98-99:

այն փաստը, որ խանի շրջապատում մշտապես հայեր կային¹: Դա այն դեպքում, երբ Ղերբենդը Ֆարի Ալի խանի ժառանգական տիրույթը չէր, այլ Վերջինից նվաճվել էր զենքով, իսկ տվյալ պարագայում վստահել տեղացիներին (այն էլ այլադավան)՝ մեծ ռիսկ էր: Մյուս կողմից, խանի կողքին «մշտապես» ներկայություն կարող էին ունենալ միայն նրա վստահելի մարդիկ: Ֆարի Ալի խանի և Դաղստանի տիրակալների միջև 1774 թ. Ղուբայի խանության Գավղուշան կոչվող դաշտավայրում տեղի ունեցած ճակատամարտում խանի զորքի շարքերում արիաբար կրվում էին շուրջ 70 հայեր, որոնից 20-ը զոհվում են՝ մեծ կորուստներ հասցելով թշնամուն²:

Ս. Գմելինը գրում է, որ բարձր հարկեր սահմանելու համար Բաքվի հասարակ քաղաքացիները Մելիք Մուհամմադ խանին չէին սիրում ու տարածված էր այն համոզմունքը, որ Բաքվում «արդարադատություն չես գտնի»: Հատկապես այդ միտքը առկա էր հայերի շրջանում, որոնք ցանկանում էին այնքան գումար գտնել, որ կարողանան խանի Ճնշումներից ազատվել: Բաքվեցիները դժգոհում էին նաև խանի պահանջած գումարի չափերից, քանի որ իրենք գրեթե ի վիճակի չէին լինում այն վճարել³:

Նշելի ժամանակաշրջանում հայերը նկատելի դերակատարում և մեծ ավանդ ունեին տարածաշրջանի տնտեսական զարգացման գործում: Ինչպես XVIII դարի առաջին կեսին, այնպես էլ նրա երկրորդ կեսին Շիրվանում կատարվող առևտորի հիմնական մասը կատարվում էր հայերի և այնտեղ գտնվող հնդիկների միջոցով⁴: Ճանապարհորդ Զ. Նորստերի խոսքերով՝ հիշյալ հայ և հնդիկ վաճառականները միասին կարող էին ապահովել Շիրվանի ապրանքաշրջանառությունը⁵: Ի դեպ, հայ վաճառականները տարածի ու լեզվի հմացության շնորհիվ առավել նախընտրելի վիճակում էին նախկին իրանական պետության սահմաններում:

¹ Նոյն տեղում, էջ 44:

² Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сборник документов, Отв. ред. В. Гаджиев, Москва, Изд-во «Наука», 1988, с. 152.

³ Ը. Գմելին, նշվ. աշխ., էջ 84:

⁴ J. Forster, A Journey from Bengal to England, London, through the northern part of India, Kashmir, Afghanistan, and Persia, and into Caspian-sea, vol. II, London, 1798, p. 228:

⁵ Նոյն տեղում, էջ 256:

Իրանական տարածքներում հայերը հաջողությամբ էին զբաղվում նաև աղամանդի և մարգարիտի վաճառքով¹:

Փաստորեն, ինչպես հարյուր տարի առաջ, այնպես էլ XVIII դարում, հայերի դերը իրանական առևտորում անգերազանցելի էր մնում: Այս առնչությամբ հիշատակության են արժանի Պիեդրո դելա Վալեի խոսքերը, թե հայերը պարսից շահի համար այն նույն նշանակությունն ունեն, ինչ շենովացիները՝ հսպանական թագավորի համար. «ո՛չ թագավորը կարող է առանց նրանց, ո՛չ էլ նրանք՝ առանց թագավորի»²:

Աղբյուրների վկայությամբ՝ Կասպից ծովի արևմտյան ափին և Շամախիում հայ վաճառականները զբաղվում էին մաքսանենգությամբ³: Ավելին, Հյուսիս-արևելյան Այսրկովկասում հայերի ֆինանսական հնարավորությունները թույլ էին տալիս իրենց ձեռքում պահել խանությունների ոչ միայն առևտորական, այլև տնտեսական զգալի լծակները: Օրինակ, հացաբույսերի մշակության առումով Ղերբենդի խանությունում հարուստ հողատարածքներ չկային, և հացի պակասություն էր զգացվում: Ս. Գմելինի վկայությամբ, իրավիճակն ավելի էր սրվում «պարսկական իշխանիկների» նույնիսկ ամենաշնչին ընդհարման դեպքում, և այուրի գինը հասնում էր 15 և ավելի ռուբլու: Նադիր շահի՝ Շիրվան կատարած արշավանքի ժամանակ Ղերբենդում այսուրի գինը հասել էր 20-30 ռուբլու, ինչի հետևանքով շատ հայեր արագ հարստանում են⁴:

XVIII դարի երկրորդ կեսի գրավոր սկզբնաղբյուրների վերլուծությունը փաստում է, որ հայերը կարողանում էին փողով իրենց գյուղերը որոշ չափով զերծ պահել այլ ժողովուրդների բնակեցումից: Այսպես, Ղուբայի խանության Շարրանի մահալում կողք-կողքի ապրող հայկական և մուսուլման ընտանիքները թեև ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում էին, սակայն խանին ավելին էին վճարում, որպեսզի իրեաներն իրենց

¹ ՀՀԲԱ ֆ. 52, օռ 1/194, գ. 270, լ. 41 օճ.

² Viaggidi Pietro della Valle il Pellegrino, descritti da lui medesimo in Lettere familiari all'eruditissimo Amico Mario Schipano, La Persia, parte II, vol. II, Roma, 1658, Lettera 14 da Sphahande' 24 di settembre 1621, par. VIII, p. 244; B. Zekiyán, The Iranian Oikumene and Armenia, - «Iran & the Caucasus», vol. IX, N 2, 2005, p. 245.

³ W. Coxe, Travels in Poland, Russia, Sweden and Denmark, the fifth edition, vol. III, London, Printed for T. Cadell, Jun. and W. Davies, 1802, p. 323:

⁴ С. Գմелиն, նշվ. աշխ., էջ 19-20:

մոտ չապրեն¹: Մեկ այլ վկայություն էլ Վերաբերում է Մայր Աթոռի ֆինանսական միջոցներից կաթողիկոսի կողմից Երևանի խանին վճարվող 5000 ռուբլի գումարին որպեսզի հայկական գյուղերում մուսուլմաններ չբնակեցվեն²:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի հայ ազգաբնակչության սոցիալ-իրավական կարգավիճակի հաջորդ հարթակը պայմանավորված էր Հայոց Եկեղեցու հետ հարաբերություններով: Այսպես, Բուն Աղվանք-Ալբանիայի տարածքը թեև XVIII դարի երկրորդ կեսին վաղուց կորցրել էր իր պատմա-քաղաքական ու հոգևոր-մշակութային նշանակությունը, սակայն, ըստ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի, «Գեանջայ քաղաքն, Շամախի, Շիրվան, Բագու, Դարբանդ, Նուխի, Պարտաւ, Խաչենու Երկիրն, և բոլոր տունն Աղուանից» շարունակում էին ձանաչել Մայր Աթոռի առաջնորդությունը³: Վերջինս Աղվանից կաթողիկոսությունից ինչպես տերունի կոչվող մյուս թեմերից (օսմանյան, պարսիկ, վրաց և ռուսաց ենթակայությամբ տարածքներից) երեք տարին մեկ հոգեբաժնի և այլ եկամուտներ էր հավաքում:

Ս. Գմելինը հիշատակություն է թողել նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասի կրոնական ու դավանական իրավիճակի մասին: Նրա խոսքերով՝ Բաքրու քաղաքի «գլխավոր օրենքը» շիա ուղղության մուսուլմանությունն էր, սակայն հանդուրժողականություն էր ցուցաբերվում նաև սուննիների նկատմամբ, իսկ հայերն իրենց պատարագը գաղտնի էին կատարում⁴: Դա փաստում է, որ խանական իշխանությունները հետապնդում էին հայերին ազատ դավանանքի համար: Շամախիում Ս. Գմելինը ականատես է լինում մի տեսարանի, երբ հայկական երկու վանքերը պատ-

¹ J. Reineggs and M. Bieberstein, *A General Historical and Topographical Description of the Mount Caucasus. Translated from the works of Dr. Reineggs and Marshal Bieberstein, by Charles Wilkinson, vol. I, London, 1807, p. 162.*

² С. Бурнашев, *Описание областей Адребиженских в Персии и их политического состояния*, Курск, Типография курского приказа общественного призрения, 1793, с. 18:

³ Զամքը, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող քննակց որպեսութեանց Արքոյ Արքուոյ և իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմեօնէ ցաւահար և վշտակոծ կարուղիկոսէ Երեւանցոյ, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1873, էջ 51:

⁴ С. Гмелин, նշվ. աշխ., էջ 81: Բարվի Սր. Աստվածածին Եկեղեցու կառուցման տարեթիվը չի պահպանվել սակայն հայտնի է, որ վերանորոգվել է 1789 թ (Ս. Ամրատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սաղմանի և միւսվան օրէից եւուստատեղէաց և սեւ քաղաքացներ զիւղորէիցորքի Շախախուոյ թէմի, Տիխիս, տպ. Մովսէս Վարդանեանցի, 1896, էջ 373):

րաստվում էին խանին 1000 ռուբլի նվիրատվություն տալ և վախենում էին, որ Ֆաթ Ալի խանը մոտ ապագայում կարող էր կրկնել պահանջը¹:

Այսպիսով, կիսանկախ խանությունների ժամանակաշրջանի համար կարևոր հարց էին նաև հայերի նկատմամբ իրականացվող ոչ միայն սոցիալական հալածանքները, այլև կրոնական անհանդուրժողականությունը: Չուզահերներ անցկացնելով XVIII դարի առաջին քառորդում հայերի սոցիալ-իրավական կարգավիճակի հետ, կարող ենք փաստել, որ Իրանում կենտրոնական իշխանության թուլացմանը պարբերաբար հետևում են հալածանքները հայ բնակչության նկատմամբ: Այսպես, Ճիգ-Վիտ Յոհան Լա Մազը 1702 թ. սեպտեմբերի 1-ին Շամախիից գրում էր, որ հայերն այնտեղ զարմանալի չափերի հասնող խոշտանգումների են ենթարկվում: Հոգևորականը նշում էր, որ նրանց վրա անհիմն տուգանքներ են նշանակվում, իսկ գյուղացիներն այն աստիճան են կեղեքված, որ գրեթե բոլորը մտածում են քաղաքներից ու գյուղերից հեռանալու մասին և եթե ապաստանելու տեղ ունենային, ապա նրանցից ոչ ոք չէր մնա՞:

XVIII դարի սկզբին ռուս պետական գործիչ Ա. Կոլինսկու տեղեկություններով՝ նահանգի բոլոր քաղաքներում և գյուղերում առկա էր հայկական հոծ բնակչություն իրենց վանքերով: Քրիստոնյաների նկատմամբ ծանր հարկային քաղաքականության հետևանքով նրանցից շատերը ստիպված դավանափոխ էին լինում³:

XVIII դարի 20-ական թթ. Իրանում Սեֆյան արքայատոհմի անկումից հետո Հյուսիս-արևելյան Այրկովկասում ծայր առած քաղաքական խժդությունները իրենց հետևանքն են թողնում Շիրվանի Էթողավանական իրավիճակի վրա: Կապաղակ (Ղաբալյայում), որտեղ հայերն ամենաշատն էին և բավական հարուստ էին, ավերածություններից ու թալանից գերծ մնալու համար փրկագին են վճարում Հաջի Ղավուդ բեկին: Ֆիգիկական բնաշնջումից բացի նրանց սպառնում էր նաև դավանափոխությունը, որը հաճախակի երևույթ էր դարձել բեկի որդու՝ Կապաղակի նորանշանակ (1727 թ.) նայիրի իշխանության օրոք: Ժամանակակցի հաղորդմամբ՝ հայերը դիմանում են ամեն տեսակի կտտանքների և հալածանքների, սակայն դավանափոխ չեն լինում: Այդ ժամանակ նայիրը բռնի

¹ С.Гмелин, նշվ. աշխ., էջ 97-98:

² Письма и донесения иезуитов о России конца XVII и начала XVIII века, СПб., 1904, с. 107.

³ Путешественники об Азербайджане. Сборник. Под ред. Э. М. Шахмалиева, т. I, Сост. и автор вступ. статьи З. И. Ямпольский, Баку, 1961, с. 375.

ուժով է նրանց մզկիթներ տանում և դավանափոխություն պարտադրում¹: Հաջի Դավուդ բեկը մերժելով դրանում իր մասնակցության հնարավորությունը՝ առաջարկում է հայերին մեծամեծ նվերներով այցելել իրեն ու քրիստոնեությունը ազատ դավանելու իրավունք ստանալ²: Ի վերջո հայերը և հրեաները ստիպված էին տարբերանշան կրել՝ դեղին լարի կտորի տեսքով³:

Ի դեպ, կրոնական հալածանքները քրիստոնյաների (հայերի) նկատմամբ չեն շրջանցում նաև Շիրվանի մուսուլման բնակչությանը: Ըստ Ի. Գերբերի՝ Շամախիի, Ջավադի, Ղարալայի, Սալիհանի մուսուլման բնակչության մեծ մասը նախքան խառնակ ժամանակները (1720-ական թթ.) շիաներ են եղել: Շամախիում Սուրբսայ խանի և Դավուդ բեկի քաղաքական իշխանության հաստատման հետևանքով շիա դավանանքի մուսուլման բնակչությունը վախից թաքցնում էր այդ հանգամանքը, երբեմն էլ ստիպված դաշնում էր սուննի⁴: Այդ քաղաքականությունը պայմանավորված էր նրանով, որ խռովարար խանն ու բեկը թուրքամետ քաղաքականություն էին վարում և շիա լինելը սպառնում էր ֆիզիկական ոչնչացմամբ⁵:

Ճնշումները հայ ազգաբնակչության նկատմամբ շարունակվում էին նաև 1730-ական թթ.: Այսպես, 1736 թ. Մուղանի դաշտում անցկացվող համաժողովի օրերին Աքրահամ Կրետացի կաթողիկոսը խնդրում է Նադիր շահին թույլ տալ Շամախիի ամրոցից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող վայրում շամախեցի հայերին բնակություն հաստատել, քանի որ «զի էր օդն ապականեալ, և տեղն՝ շողային և ջուրն՝ պակաս և տաճկումք, որք են լակաիք և սուննիք, վշտացուցանէին և նեղացուցանէին զտառապեալսն, այսինքն՝ զազգն մեր»: Կաթողիկոսի խնդրանքի մեջ պարտադիր մաս էր կազմում նոր վայրում եկեղեցի կառուցելու իրավունք ստանալը. «զի ամինար է հայոց ազգին առանց եկեղեց[ւ]ոյ

¹ Հայերի քոնի ուժով դավանափոխի լինելու մասին հաղորդումներ տէ՞ս նաև Զ. Արգումանյան, Փաստաթղթեր Անդրկովկասի քաղաքական դրության մասին (1723 թ. առաջին կես), - ԼՀԳ, 1974, N 3, էջ 109:

² И. Гербер, Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728, - ИГЭД, с. 116-117.

³ П. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., ч. II, СПб., 1869, с. 10-11.

⁴ И. Гербер, նշվ. աշխ. էջ 95:

⁵ Նոյն տեղում, էջ 94-96, 99-100:

բնակիլ ի տեղի մի՝ թէև դրախտ իցէ»¹: Ավելին, Աքրահամ Կրետացու ջանքերով շահը Վերացնում է նաև հավատի համար գանձվող հարկատեսակը՝ ջիզյան: Նադիր շահի հրամանի (1741 թ.) համաձայն՝ բոլոր հաքիմներից ու ամիլներից պահանջվում էր «թույլ չտալ» հայ կանանց, տղաների և աղջիկների «բռնի պարտադիր մուսուլմանացումը»՝ սպառնալով պատժել կարգազանցներիմ²:

Սիմեոն Երևանցին նշում է, որ համաձայն Ազադ խանի ռադամի (հրամանի) «զի Հայքն օրունս իրեանց համարձակ պաշտիցեն, և կաթողիկոսն ըստ օրինին իրեանց կառավարեսց զազգն իւր, և մի՛ ոք խառնիցի և կամ ներհակիցէ»³:

Աղբյուրների վկայությամբ՝ Քերիմ խան Զենդի օրոք Իրանում հայերին թույլատրվում էր քրիստոնեական համայնք ունենալ և Եկեղեցիներ կառուցել: Շիրազում գտնվող «Գուրգեն անունով մի հայ հանդիսանում էր իր ազգի առաջնորդն ու սուլթանը», իսկ Քերիմ խանը նրան իր մոտ ընկերն էր համարում⁴:

Սիմջեռ Ֆարի Ալի խանի դաժանությունները չեն շրջանցում նաև հայ ինգևոր սպասավորներին: Այսպես, Մուղանի դաշտում ավագակախմբով թափառող Շամախիի կույր Աղասի խանին այսուր վաճառելու համար Ֆարի Ալի խանը հրամայում է հայկական վանքերից մեկի քահանային հրապարակայնորեն և մեծ դաժանությամբ պատժել:

Հին և Նոր Շամախիների միջակայքում գտնվում էին հինգ հայկական գյուղեր՝ Մերգանի, Մադրասա, Սաղիան, Քերքենջ և Քելուխոնի, որոնք խիստ ավերածությունների էին ենթարկվել Ֆարի Ալի խանի կողմից Շամախիի գրավման ժամանակ (1769 թ.)⁵: Այս գյուղերի շրջանում գտնվող երկու վանքերի ինգևոր սպասավորները վախենում էին բացահայտորեն օգտագործել Եկեղեցական անոթներ, սրբապատկերներ և այլ պարագաներ, քանի որ խանը կարող էր բռնագրավել դրանք: Այդ պատ-

¹ Աքրահամ կաթողիկոսի Կրետացու Պատմագրութիւն անցիցն իւրոյ եւ Նասր-Շահին պարսից, ի վաղարշապատ – U. Էջմիածին, 1870, էջ 65:

² Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, Դրակ 4 (1734-1797), կազմեց Ք. Կոստիկյան, Եր., 2008, վավերագիր 17, էջ 50:

³ Հմմ. Զամբոր, էջ 226:

⁴ J. Reinegg and M. Bieberstein, նշվ. աշխ., էջ 109:

⁵ C. Գմելին, նշվ. աշխ. էջ 96:

Ճառով էլ հայկական վանքերում Աստվածանոր սրբապատկերից բացի ոչինչ ցուցադրված չէր, գրում է Ս. Գմելինը¹:

XVIII դարի երկրորդ կեսին կիսանկախ խանությունների գոյության ընթացքում կրոնական և հարկային ճնշումները մեծանում են նաև ոչ քրիստոնյաների նկատմամբ: Այսպես, Դերբենդի խանության Ուլուսի մահալի Թոփրակ Կալե կոչվող բնակավայրը հիշատակվում է որպես կրապաշտների՝ կրակապաշտ գաբրերի² քաղաք: Ա. Սուվորովի խոսքերով՝ 1780-ական թթ. սկզբին քաղաքի և նրա բնակիչների՝ իրանալեզու գաբրերի մասին միայն ավերակներն էին հիշեցնում, քանի որ բնակիչներն արդեն չկային³: Տարածքը պատկանում էր Ֆաթ Ալի խանին և դատելով այն փաստից, որ Դերբենդի խանությունը նա նվաճել էր դեռևս 1759 թ., ապա Ենթադրելի է, որ քաղաքի ու գաբրերի ճակատագրի հարցում խանը բացասական դերակատարում է ունեցել, և բնակավայրը դատարկվել էր:

Նման ճակատագրին էին արժանացել նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասի մյուս հնաբնակները՝ կրակապաշտ հնդիկները: Քերիմ խանի ժամանակ Բաքվի խանությունում ապրող կրակապաշտ հնդիկները խանին պարբերաբար հարկեր էին վճարում և արտակարգ այլ միջադեպերի համար դրանական վճարներ էին կատարում: Սակայն Իրանի Վեքիլի մահից հետո (1779 թ.) իրավիճակը փոխվում է հօգուտ խաների անսահմանափակ իշխանության, որը սահուն կերպով կամայականության էր վերածում⁴:

Ընդհանրացնելով աղբյուրագիտական նյութը կարող ենք փաստել, որ ի տարբերություն իրանական զահակալների (Նադիր շահ, Ազադ խան, Քերիմ խան Չենդ) Հյուսիս-արևելյան Այսրկովկասի ինքնիշխան խաները այլադավանների՝ հայերի, հեթաների և հնդիկների նկատմամբ, կրոնական հանդուրժողականություն գրեթե չեն ցուցաբերում:

¹ С. Гмелин, նշվ. աշխ. էջ 107:

² Գաբրերի մասին տե՛ս Պ. Յնձով, *Картина кавказского края, принадлежащего России и сопредельных оному земель, в историческом, статистическом, этнографическом, финансовом и торговом отношениях*, ч. IV, СПб., 1835, с. 80-83; չեն. Ս. Գմելին, նշվ. աշխ. էջ 66-67; J. Reineggs and M. Bieberstein, նշվ. աշխ., էջ 163; Ս. Բրոնևսկий, *Новейшие географические [статистические и этнографические] и исторические известия о Кавказе, собранные и пополненные Семеном Броневским*, ч. II, Москва, 1823, с. 407-410; Ղ. Ալիշան, *Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկի, ի Մխմարայ Վանս. ի Սակար, 1855*, էջ 92-93; *The encyclopaedia of Islam*, V. II, Leiden, 1991, p. 970-971.

³ Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13, л. 23.

⁴ А. Серецов, նշվ. աշխ., էջ 178-179:

XVIII դարի երկրորդ կեսին տարածաշրջանում ծայր առաջ քառսի հետևանքով ակտիվանում են բնակչության տեղաշարժերը: Հակոբ Շամախեցի կաթողիկոսը նշում է, որ Սեֆյան պետության անկումից հետո շուրջ 40 տարի «բազարության կարմրագլխաց» չէր հանդարտվում»¹: Ապակայունացած իրավիճակը թափրիզի շրջակա գյուղերից և այլ վայրերից մի խումբ հայերի ստիպում է ընտանիքներով 1753 թ. մեկնել Ենգելի՝ Աստրախան տեղափոխվելու և այնտեղ հիմնավորվելու նպատակով²:

Բնակչության (հատկապես, հայերի) տեղաշարժերն Այսրկովկասում այնքան էին ահազնացել, որ տեղերում որոշ հոգևորականներ չէին կարողանում ճիշտ կազմակերպել հոգևոր տուրքերի հավաքագրումը: Հարցը կարգավորելու նպատակով միջամտում է Հակոբ Շամախեցի կաթողիկոսը՝ կարգադրելով, որ ժողովուրդը որ վիճակում որ հաստատված է, այնտեղ էլ վճարի Եկեղեցուն հասանելիք տուրքը³:

Տարածաշրջանի էթնոքաղաքական պատկերի փոփոխման գործում բացասական ազդեցություն ունեցավ Աղա Մուհամմադ (1742-1797) խանի 1795 թ. արշավանքը: Վարդան Օձնեցու վկայությամբ՝ 1796 թ. սկզբին «եղև սաստիկ սովոյ աշխարհին Աղուանից, Արցախս, Սիւնեաց և Գանձակայ, քանզի ասպատակ օօրաց Մահմադ շահի այթեալ էին զարմտիս երկրին», որի հետևանքով մեծ ծավալների է հասնում գաղթը⁴:

Վ. Զուբովի Կասպիական արշավանքը (1796 թ.) ողբերգական հետևանք ունեցավ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի հայ ազգաբնակչության համար: Ուստական զորքի հանկարծակի նահանջի հետևանքով հայերը հայտնվել էին խաների վրեժինդրության հեռանկարի առջև: Հետևաբար, Ղերբենդի, Ղուբայի, Շամախիի, Բաքվի խանությունների հայերը զանգվածաբար սկսեցին լքել իրենց բնակավայրերը՝ Աստրախան և Հյուսիսային Կովկաս գաղթելով⁵: Միայն Ղերբենդից և Մուշկուրից

¹ ՍՄ, ձեռ. 2911, էջ 102: Հմն. J.Perry, *The Zand Dynasty, - The Cambridge history of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, Cambridge, 1991, vol. VII, p. 96.*

² ՍՄ, Վարողիկոսական դիվան (հետոյսուլ՝ ԿԴ, թղթ 1, վավ. 26, էջ 1-2:

³ ՍՄ, ԿԴ, թղթ. 1, վավ. 52, էջ 1:

⁴ «Քաղումը ի Հայոց և սակար ի տաճկաց անցին ի Վրաստան, ի Սոմբէթ, յԵրեւան, ի Կարս և յաշխարհն Սարմատացոյ՝ ի Մօղոքը և Ղզար» (ՍՄ, ձեռ. 4331, էջ 91-92ա):

⁵ Հր. Աձառյան, Հայ զաղքականության պատմություն, Եր., 2002, էջ 108: Տե՛ս Պ. Չորանյան, Հայերի իրավական ու տնտեսական կարգավիճակը Ռուսաստանում XVIII դարի 80-90-ական թթ., - ՊԲՀ, 1998, N 1-2, էջ 75-94:

դեպի Հյուսիսային Կովկաս էր գաղթել 610 ընտանիք՝ 5212 մարդ¹: Սենատի 1799 թ. ապրիլի 15-ի որոշմամբ՝ Ղերենդից գաղթած հայերին մերձակա պետական հողերից հատկացումներ են կատարվում²:

Աղա Մուհամմադ խանի 1795 և 1797 թթ. արշավանքները աղետաբեր եղան նաև Արցախի հայ բնակչության համար: Սովոր սարսափելի հետևանքների մասին Հ. Արդությանը 1796 թ. ցավով գրում էր. «մինչ զի զորդիս վաճառել և զկինս՝ առօրեայ կտորիկ հացի միոյ, և որ անտանելին է, սաստկութիւն սովուն և զհաւատն սուրբ տայ ուրանալ»³: Այսրկովկասում ծագած խառնակ իրավիճակից շուրջ 5000 ընտանիք Դարաբաղից հեռացել էր Շաքի, Շիրվան և շրջակա այլ վայրեր⁴: Արցախահայերին հաջողվում է Շաքի-Շիրվան պատմական հատվածում հիմնադրել հայկական շուրջ հարյուր բնակավայր⁵՝ ապահովելով ինքնության շարունակական գոյությունն այդ տարածքներում: Իսկ XVIII դարի վերջին հայ ազգային մտավորականության ազատ Հայրենիք ստեղծելու ջանքերը դարձան Հայաստանի քաղաքական ու սոցիալ-մշակութային ձգտումների «կարապի երգը»⁶:

Ամփոփելով նշենք, որ XVIII դարի երկրորդ կեսին իրանում կենտրոնացված պետության բացակայության պայմաններում Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ձևավորված կիսանկախ խանություններում կտրուկ վատթարանում է հայերի և մյուս ոչ մուսուլման ժողովուրդների սոցիալական և իրավական դրությունը՝ իրենց բնույթով հիշեցնելով XVIII դարի առաջին քառորդին Շիրվանում գոյություն ունեցող իրավիճակը: Ինչպես պատմական նախորդ ժամանակաշրջաններում, XVIII դարի երկրորդ կեսին ևս հայ ազգաբնակչությունը պարտավորված էր գիսահարկ վճարել կիսանկախ խաններին: Վերջիններիս Ճնշումներից գերծ չէին նաև հայոց հոգևոր կենտրոնները՝ վանքերն ու եկեղեցիները: Ի տարբերություն իրա-

¹ Տէ՛ս Պ.Չորանյան, Ռուսահայոց գաղթօջախի բնակչության քանակական կազմը (XVIII դարի վերջին քառորդ), - ՊԲՀ, 1998, N 3, էջ 64:

² Полное Собрание Законов Российской Империи. Собрание первое, 1649-1825 гг., Под ред. М. М. Сперанского, СПб., Тип. Потдделения собственной Е. И. В. Канцелярии, т. XXV, с. 619.

³ ՍՄ, ձեռ. 2951, էջ 121թ:

⁴ Russia and the Armenians of Transcaucasia, 1797-1889. A documentary record. Annotated translation and commentary by George A. Bournoutian, Costa Mesa, 1998, p. 19.

⁵ Տէ՛ս Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեյչանին բռնակցած շրջաններում, Եր., 1999, էջ 12:

⁶ A. Ferrari, Nobility and Monarchy in Eighteen Century Armenia; Preliminary Remarks to a New Study, - «Iran & the Caucasus», vol. VIII, 2004, N 1, p. 62.

նական տիրակալների (Նադիր շահ, Ազադ խան, Թերիմ խան Զենդ) Հյուսիս-արևելյան Այսրկովկասի ինքնիշխան խաները այլադավանների նկատմամբ կրոնական հանդուրժողականություն գրեթե չէին ցուցաբերում: Խաների կրոնական ճնշումները պարբերական բնույթ էին կրում՝ հայ բնակչությանը ստիպելով թաքցնել իր դավանանքը:

Ամփոփում

XVIII դարի երկրորդ կեսին Յյուսիս-արևելյան Այսրկովկասի կիսանկախ խանություններում հայ ազգաբնակչության սոցիալ-իրավական կարգավիճակի լուսաբանումը աղբյուրագիտական իենքի վրա պարզեց, որ ինչպես պատմական նախորդ ժամանակաշրջաններում, XVIII դարի երկրորդ կեսին ևս ֆիզիկական գոյության օրիհասական խնդրին զուգընթաց առաջնահերթ էր նաև հայ ինքնության՝ իր կրոնի և մշակութային արժեքային համակարգի պահպանումը:

Այսպիսով, խաների կրոնական, սոցիալական և իրավական ճնշումների քաղաքականությունը հայ ազգաբնակչության նկատմամբ պարբերական բնույթ էին կրում՝ հայերին ստիպելով թաքցնել իր դավանանքը և բռնել գաղթի ճամփան:

Социальныи и правовой статус армян северо-восточного Закавказья во второй половине XVIII века

Гоар Мхитарян

Резюме

Ключевые слова: Северо-восточное Закавказье, Шаки, Дербенд, Сефевидский Иран, Шамахи, фат Али хан, Баку, Османская Империя, Надир Шах, Карабах, Акоп Шамахеци, подумный налог, ханство.

Анализ социально-правового статуса армянского населения Северо-Восточного Закавказья на основе первоисточников выявил, что во второй половине XVIII века как и впредыдущих исторических периодах, параллельно угрозе физического уничтожения существовала проблема сохранения самобытности армян с целью защиты религиозных и культурных ценностей.

Таким образом, социальная, правовая и религиозная политика ханов по отношению к армянскому населению носила систематический характер, приуждая армян скрывать свою конфессиональную принадлежность и эмигрировать.

The Social and legal status of north-east Transcaucasia in the second half of the
18th century
Gohar Mkhitaryan
Summary

Key words: North-east Transcaucasia, Shaki, Derbend, Sefian Iran, Ghuba, Shamakhi, Fateh Ali khan, Baku, The Ottoman Empire, Nadir Shah, Karabakh, Hakob Shamakhetsi, a head tax, khanate.

In the second half of XVIII century the elucidation of social-legal status of Armenian population in semi-independent khanates of North-East Transcaucasia on the source basis found out that as in previous historical periods, also in the second half of XVIII century parallel with the fatal problem of physical existence it was also priority to keep the Armenian identity, value system of his religion and culture.

Thus, the policy of religious, social and legal pressures of khans towards the Armenian population had regular nature, compelling the Armenians to hide their belief and to emigrate.

**ՂԱՐԱԲԱԴ՝ ԳՅՈՒԼԻՍԱԾԱԻ ՊԱՅՄԱՆԱԿՐԻ ԶԼՈՒԾՎԱԾ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵճԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ¹**

ՆԵԼԻ Բաղդասարյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱրԴՀ

Բանալի բառեր՝ Ղարաբաղ, ռուս-պարսկական պատերազմ, Գյուլիսուանի պայմանագիր, Ա. Երմոլով, Ա. Վելյամինով, Արքաս-Միրզա, Վրաստան, տարածք, շահարկում, «գործարք»:

Համաշխարհային պատմության փորձը ցույց է տալիս, որ ազդեցության գոտիների, տարածքների համար մղվող պատերազմների արդյունքում ստեղծված իրավիճակը ոչ միշտ է բավարարում կողմերին, ուստի նոր պատերազմի անհրաժեշտություն է առաջանում: 19-րդ դարասկզբին բռնկված և գրեթե մեկ տասնամյակ տևած ռուս-պարսկական պատերազմը, այսպես կոչված, «անավարտ» պատերազմի օրինակ էր:

1813 թ. հոկտեմբերի 1-ին կնքված 50-օրյա գինադադարով իր ավարտին է մոտենում ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմը: 1813թ. հոկտեմբերի 12-ին Ղարաբաղի Գյուլիսուան բերդավանում կնքված ռուս-պարսկական պայմանագիրը նշանավորում է ռուսական գենքի փայլուն հաղթանակը: Ռուսաստանի կողմից պայմանագիրը ստորագրում է Վրաստանում և Կովկասում գտնվող ռուսական գորքերի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Ն. Ռոտիչչկը, Պարսկաստանի կողմից՝ Միրզա Աբրուլ Հասան խանը: Պայմանագիրը կնքած կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում էր հավատարիմ մնալ «*Status quo ad presentem*» սկզբունքին, «այսինքն՝ որպեսզի յուրաքանչյուր կողմի տիրապետության տակ մնան այն հողերը, խանություններն ու տիրակալությունները, որոնք ներկայումս գտնվում են նրանց կատարյալ իշխանության ներքո»: Պայմանագրի 3-րդ հոդվածով. «Նորին շահական մեծությունը իրու ապացույց նորին Մեծության Ամենայն ռուսաց կայսեր նկատմամբ իր տածած անկեղծ բարեկամության, սրանով հանդիսավոր կերպով ինչպես իր կողմից, այնպես էլ Պարսկական զահի բարձր ժառանգների կողմից, որպես Ռուսաստանյան կայսրությանը պատկանող սեփականություն է ճանաչում Ղարաբաղի և Գյանջայի խանությունները, որոնք ներկայումս վերածվել են Ելիզավետպոլյան անունը կրող նա-

¹ Հոդվածը ընդունված է 16.12.14.

հանգի, ինչպես նաև Շեքիի, Շիրվանի, Ղերբենտի, Ղուբայի, Բաքվի, և Թալիշի խանությունները, սույն խանության այն հողերի հետ, որոնք այժմ գտնվում են Ռուսաստանյան կայսրության իշխանության տակ:

Ընդ որում, ամբողջ Դաղստանը, Վրաստանը Շորագյալի նահանգով, Իներեթիան, Գուրիան, Մինգրելիան և Արխագիան, հավասարապես այն տիրույթներն ու հողերը, որոնք գտնվում են այժմ ռուշակած սահմանի և կովկասյան գծի միջև՝ այս վերջինին և Կասպից ծովին հարող երկրներով ու ժողովուրդներով»¹:

Գյուլիստանի պայմանագիրը խուճապ առաջացրեց անգլիական և թուրքական կառավարող շրջաններում: Կուլիսների հետևում ընթացող քննարկումներից հետո Անգլիայի ռողմանք Ռուսաստանում գտնվող պարսկական դեսպան Միրզա Աբդուլ Հասան խանը 1816 թ. կիսավերջնագրային ձևով դիմեց ռուսական կառավարությանը՝ առաջարկելով «ավելի մանրամասն պայմանագիր» կնքել և շահին վերադարձնել այն խանությունները, որոնք Ռուսաստանին էին զիջվել Գյուլիստանի պայմանագրով: Առաջարկությունն իր պաշտպանությունը գտավ նաև անգլիական դեսպան Կատկարտի կողմից, սակայն կտրականապես մերժվեց Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության կառավարիչ Կ. Նեսելրուեի կողմից: Սակայն պարսկական կողմի տարածքային նկրտումները շարունակվեցին նաև հետագա տարիներին:

Փաստորեն, ռուս-պարսկական պատերազմը և Գյուլիստանի պայմանագիրը ոչ միայն վերջ չտվեցին սահմանային վեճերին, այլև ավելի բորբոքեցին Երկու երկրների միջպետական հարաբերությունները: Սահմանային տարածայնությունների շարքում բազմիցս շահարկվում էր որոշ տարածքների, այդ թվում՝ Ղարաբաղի՝ Պարսկաստանին վերադարձնան հարցը²:

1816 թ. հուլիսի 29-ին, Վրաստանի ռուսական գորքերի գլխավոր հրամանատար գեներալ Ա. Երմոլովին ուղղված հրահանգում Ալեքսանդր 1-ինը նշում էր, որ պարսկները պահանջել են վերադարձնել գրաված բոլոր տարածքները կամ իրենց զիջել որոշ մարզեր՝ դրամական փոխհատուցման դիմաց. «...Պարսկական արքունիքի ցանկությունները բոլոր առումներով կրավարարվեն, եթե մեր գրաված տարածքներից ետ վերա-

¹ Ազատյան Հ., Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, էջ 26-31:

² Իօաննիսյան Ա., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, с. 427.

դարձնենք Թալիշի, Ղարաբաղի և Գանձակի խանությունները»¹: Նրա խոսքերով՝ «հնարավոր չէ՝ արդյոք Թալիշի և Ղարաբաղի խանություններով միջոցներ գտնել պարսիկներին բավարարելու համար՝ անցկացնելով նոր սահմանագիծ»: Կայսրն ավելացնում էր՝ «Կասկած չկա, որ առավել շահավետ կլիներ մեր կողմից Արաքսի այն կողմում ծեռք բերված հողերը փոխանակել Երևանի և Նախիջևանի հետ, սակայն ինաւորվ, թե ինչպիսի համառությամբ էր հրաժարվում այդ տիրույթների գիշումից չի կարելի հոյս ունենալ, որ նա դրան կիամաձայնի...»²:

Իր հերթին պարսիկների հետ վիճելի հարցերը կարգավորելու և բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար Կովկաս ուղարկված՝ անսահմանափակ իրավասություններով լիազորված գեներալ Ա. Երմոլովը վճռում է՝ պարսիկները ժամանակի ընթացքում պետք է ընդունեն Արաքսի և ռուսական տարածքների միջև ընկած հողերի կորուստը³:

Բնականաբար, պաշտոնական շրջանակներում շրջանառվող այս շշուկները չեն կարող հասու չլինել ազատագրված տարածքների ժողովուրդներին: Ոուսաստանի հովանու տակ գտնվող ժողովուրդների անհամատությունը փարատելու համար կայսեր անունից Ա. Երմոլովը 1817 թ. օգոստոսի 15-ին դիմում է Ղաղստանի, Շիրվանի, Ղարաբաղի, Շաքի, Թալիշի բնակչությանը և բոլոր այն ժողովուրդներին, որոնք գտնվում էին Ոուսաստանի հովանու տակ. «Ես ձեզ մեր Մեծ կայսեր անունից հավաստիացնում եմ, որ ոչ միայն շրջաններ, այլև ոչ մի թիզ հող նա չի գիշում պարսկական շահին, և մեր սահմանները չեն փոփոխվի...»⁴:

Հանդես գալով կայսեր անունից՝ իրականում՝ Ա. Երմոլովն արտահայտել էր իր կարծիքը սահմանների վերաբերյալ: Ասվածն ապացուցում է ևս մեկ փաստաթուղթ՝ գեներալ Ա. Վելյամինովի գեկույցը գեներալ Ա. Երմոլովին՝ թվագրված 1818 թ. հուլիսի 22: Փաստաթղթում Վելյամինովը հայտնում է Երմոլովին, որ Ալեքսանդր 1-ինը, լավ ծանոթ չլինելով տեղանքին, հարցուել է Վելյամինովին՝ Ղարաբաղի կամ որևէ այլ վայրի՝ Պարսկաստանին գիշման նպատակահարմարության մասին: Վելյամինովն այս հարցում համակարծիք լինելով Երմոլովին՝ գտնում էր, որ

¹ АКАК, т. VI, ч. II, Тифлис, 1875, док. 267, с. 122.

² Присоединение Восточной Армении к России, сборник документов, т. II (1814-1830), Ереван, 1978, с. 23.

³ ՀԱԱ, ֆ. 151, գ. 1, գ. 23, թ. 25:

⁴ АКАК, т. VI, ч. II, док. 312, с. 162.

Ղարաբաղի գիշումը Պարսկաստանին կնշանակեր նրա հետ մեկտեղ զիշել նաև Թիֆլիսը, ինչն անհեռանկարային է¹:

Ղարաբաղի տարածքը շարունակում էր շահարկումների առարկա մնալ նաև հետագայում: 1819 թ. հոկտեմբերի 18-ին գեներալ Ա. Երմոլովը կոմս Կ. Նեսելրոդեին ուղղված իր նամակում գրել է. «Աբբաս-Միրզան մտածում է Ղարաբաղը ետ վերադարձնել և կարծում է, որ կստիպի համաձայնել դրան՝ սպառնալով լեռնային ժողովուրդների հուզումներով, որոնց նա շարունակում էր կերակրել փողերով»²:

Աբբաս-Միրզայի կողմից Ղարաբաղի վերադարձման ձգտումն այնքան մեծ էր, որ հարուցել էր Ա. Երմոլովի հեզնանքը: 1820 թ. ապրիլի 13-ին կոմս Կ. Նեսելրոդեին ուղղված իր հերթական նամակում նա գրել է. «Աբբաս-Միրզան, չբավարարվելով պայմանագրի հետևանքներով..., ցանկանում է վերադարձնել Ղարաբաղի շրջանը: Այս ցանկությունն այնքան մեծ է, որ նա երազում է դրան հասնել Անգլիայի «կախարդական» ազդեցությամբ և սպասում է Միրզա Աբդուլ Հասան խանի վերադարձին»³:

Ղարաբաղի և մի քանի այլ տարածքների գիշման «գործարքը» չկայացավ՝ շնորհիվ այս գործում շահագրգիր կողմի՝ Ա. Երմոլովի: Ավելին՝ Ա. Երմոլովը միջոցներ էր ծեռնարկում՝ պատերազմի հետևանքով հեռացած հայերի վերադարձը Ղարաբաղ խրախուսելու համար⁴:

Այսպիսով՝ Գյուլիստանի պայմանագիրը մասամբ միայն վերջ դրեց Ուսուսատանի և Պարսկաստանի միջև տարածքային վեճերին, Վ. Պոտտոյի խոսքերով՝ «Գյուլիստանի պայմանագիրը միայն գինադարձ էր, լրությունը՝ խաբուսիկ և ավետարերն էր ռազմական նոր փոթորիկների»⁵: 1826-1828 թթ. բռնկված ռուս-պարսկական պատերազմը կոչված էր վերջ դնելու ռուս-պարսկական հակասություններին:

¹ AKAK, մ. VI, գ. II, ձօկ. 364, ս. 194.

² AKAK, մ. VI, գ. II, ձօկ. 402, ս. 218.

³ AKAK, մ. VI, գ. II, ձօկ. 419, ս. 228.

⁴ Գալյուան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական արձակատումներում (XVI դարից մինչև 1917 թ.), Երևան, 2004, էջ 168:

⁵ Հովհաննիսյան Հ., Հայագիտությունը Ուսուսատանում (պատմագիտություն, XIX դար), Երևան, 2004, էջ 183:

Ամփոփում

1813 թ. հոկտեմբերի 12-ին Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում կնքված պայմանագրով ավարտվում է ռուս-պարսկական պատերազմը: Գյուլիստանի պայմանագիրը ոչ միայն վերջ չտվեց սահմանային վեճերին, այլև ավելի բորբոքեց երկու երկրների միջանական հարաբերությունները: Սահմանային տարածայնությունների շարքում բազմից շահարկվում էր որոշ տարածքների, այդ թվում՝ Ղարաբաղի՝ Պարսկաստանին վերադարձման հարցը: Ղարաբաղի և մի քանի այլ տարածքների գիշման «գործարքը» չկայացավ՝ շնորհիվ այս գործում շահագրգիռ կողմի՝ Ա. Երմոլովի:

Կաрабах среди нерешенных территориальных споров

Гюлистанского договора

Нелли Багдасарян

Резюме

Ключевые слова: Карабах, русско-персидская война, Гюлистанский договор, А. Ермолов, Аббас Мирза, Грузия, В. Мадатов, территориальные споры, «сделка», спекуляция.

Гюлистанский договор, подписанный 12-ого октября 1813 года, не решает русско-персидские территориальные конфликты, не положил конец пограничным спорам, более того, межгосударственные отношения двух стран накалились. В числе пограничных споров спекулировался вопрос возврата некоторых территорий, в том числе Карабаха, Персии. «Сделка» уступки Карабаха и некоторых других территорий не состоялась благодаря заинтересованному лицу в этом вопросе А. Ермолову. Статья разъясняет спекуляции, касающиеся территории Карабаха.

Karabagh among the Unresolved Border Disputes of the Treaty of Gulistan

Nelly Baghdasaryan

Summary

Key words: Karabagh, Russo-Persian war, Treaty of Gulistan, "Status quo ad presentem", A. Ermolov, Abbas Mirza, Georgia, V. Madatov, speculate, territory, disputes, "bargain".

The Treaty of Gulistan, signed on 12 October, 1813 doesn't solve the Russo-Persian borderline conflicts. The Treaty of Gulistan didn't put an end to border disputes, moreover, interstate relationships between the two countries strained. Among frontier disputes the issue of restituting some territories, including Karabagh, to Persia was speculated. The "bargain" of ceding Karabagh and several other territories was miscarried thanks to the concerned body in this process A. Ermolov.

**ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԱՐՑԱԽԸ՝ ԱՐՑԱԽ «ԱՇԽԱՐԴԻ»
ՊԱՏՄԱԿԱՐՉԱԳՐԱԿԱՆ ԷԹԵՆԻԿ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ Է¹**
Նույն Սարումյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԱրԴԴ

Բանալի բառեր. Արցախ, Գարդմանք, Ծահումյան, էթնիկ տարածք, մելիքություն, Ջովիստան, բրնձագաղթ, պայմանագիր, բողոք-հեռագիր, պատվիրակություն, տեղաշարժ, ազատագրական պայքար, զանգվածային բնաջնջում, հակահայկական քաղաքականություն, ազգային ինքնազիտակցության զարդընք:



Արցախը զբաղեցնում է Փոքր Կովկասի հարավ-արևելյան լեռնոտ տարածքը, Մեծ Հայքի ծայր արևելյան հատվածի մի մասը: Նրա սահմաններն արևմուտքում հասնում են Սյունյաց աշխարհին՝ մինչև Սևանա լճի արևելյան ափերը, հյուսիս-արևելքում՝ Ուտիքին, հարավում՝ Երասխ (Արաքս) գետին, արևելքում՝ Խորանում Մուխանքի դաշտաբերանին, իսկ հյուսիսային և արևելյան սահմանագիծը բացահայտ չի երևում, այլ թվում է, թե այն բաժանվում է լեռների ստորոտներով, մասնավորապես Խոչքար լեռներով և Շամքորի անջրապետով, իսկ արևմուտքից Եզրագծվում է Սյունյաց Աղավնու (Հագարու) գետով, որոնք պարսպում են նրա ելքը և

¹ Հոդվածը ընդունված է 16.12.14:

փոխում ջրերի ընթացքը, որովհետև Սյունիքում գետերը հյուսիսից և ելքի կողմից իջնում են Գեղամա լեռներով դեպի մեծ Երասխը, իսկ Արցախում արևմուտքից արևելք դեպի Կուր գետն են հոսում, ուսոգելով Ուտիքի դաշտը, որտեղ ամենահզոր ամենահյուսիսայինն է՝ Թարթառը կամ Թերթերը, ըստ մեր նախնիների՝ Տրտուն, որը բխելով Վայոց ձոր և Զանգեզուր լեռների թիկունքից, անցնելով Խաչենի խոր ձորերով, դուրս է գալիս Ուտիքի Առանձնակ դաշտը՝ անցնելով Պարտավ քաղաքի նոտով¹:

Արցախ-Ուտիքը ֆիզիկա-աշխարհագրական իմաստով գբաղեցնում էր ներկայիս ԼՂՀ Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի, Շուշիի, Շահումյանի, Քաշաթաղի և ազատագրված Քարվաճառի, ինչպես նաև Գետաբեկի, Թոռուզի, Շամխորի, Քարհատի (Դաշքեսանի), Խանլարի, Զաբրահիլի, Ֆիզուլու շրջանները²:

Հյուսիսային Արցախը՝ Գարդմանքը (նաև Գարդման, Ուտիք, Հյուսիսային Արցախ)՝ որը համընկնում է Մեծ Հայքի Ուտիք նահանգի տարածքին և հանդիսանում է գարդմանահայերի կողմից կիրառվող տվյալ նահանգի անվանումը, Աղրբեջանի մեկ այլ, տարածքում մնացած Գարդմանքի հողերի ընդհանուր, առավել չկիրառվող անվանումն է: Զբաղեցնում է Սևանա լճից արևելք և Կուր գետից արևմուտք ընկած տարածքները՝ պատճական Ուտիք նահանգի Շակաշեն, Գարդմանք, Տուչկատակ, Ուտիք առանձնակ, Առանոտ, Աղուէ գավառների մեծ մասը, որը կազմում է ներկայիս Աղրբեջանի հանրապետության հյուսիս-արևմտյան շրջանները:

Գարդմանքում է գտնվում Տիգրանակերտներից մեկը, որը հիմնադրել է Տիգրան Բ Մեծը Ք.ա. 95-55թվականներին³:

Դաշտային կամ Հյուսիսային Արցախը աշխարհագրական շրջանն է այժմյան Աղրբեջանի տարածքում՝ Կուր գետի և Մռավի լեռնաշղթայի միջև:

Դաշտային Արցախի տարածքը համընկնում է Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Գարդմանք գավառի հետ: Քանի որ Դաշտային Արցախը

¹ Ալիշան Դ., Արցախ, 1993, Երևան, էջ 5:

² Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (ՂԱՊ), հանրագիտարան, Երևան, 2004, էջ 232:

³ Կարապետյան Ս. Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Աղրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 227:

գտնվում է Լեռնային Արցախից (Ղարաբաղից) հյուսիս, այն հաճախ կոչվում է նաև Հյուսիսային Արցախ:

Ըստ Ռ.Ինձիճյանի՝ բուն Գարդմանքը տեղադրվում է Շամքորի ու շրջակայքի վրա, ձգվելով դեպի արևոտքը¹:

Վաղ միջնադարում տարածաշրջանը ներառում էր Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներից մի քանի գավառներ, ինչպես, օրինակ՝ Կողթ, Քուստ-ի-Փառնես, Գարդման, Շակաշեն և այլն: Միջնադարում տարածքն ավելի հայտնի էր Գարդման անունով, իսկ ուշ միջնադարում կազմում էր Գանձակի (Գյանջայի) խանությունը: Ուստաստանի կազմի մեջ մտնելուց հետո հայտնի էր Ելիզավետպոլի նահանգ անվամբ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Երկրամասը միացվեց Աղրբեջանի Հանրապետությանը և տրոհվեց վարչական մի քանի շրջանների մեջ: Դրանք են՝ Գետաբեկի, Ղաշքեսանի, Թոռուզի, Խանլարի, Կասում-Խամայիլովի (Գյուրանի), Ղազախի, Շամխորի և ներկայիս ԼՂՀ մաս կազմող, սակայն Աղրբեջանի կողմից բռնազավթված՝ Շահումյանի շրջանները:

Երկրամասն իր մեջ ներառում է Սևանի և Մռավի լեռնաշղթաներից սկիզբ առնող և աջ կողմից Կուր գետի հետ միախառնվող՝ Ասրիկ, Զակամ, Շամքոր, Արթինաջուր (Կոշկար), Գանձակ, Կուրակ և Սև ջուր գետերի ջրահավաք ավագանները, ինչպես նաև՝ Ջողազ, Աղստև և Տավուշ գետերի ստորին հոսանքի շրջանները:

Հյուսիսային Արցախ կոչված Երկրամասն, ըստ «Աշխարհացոյց»-ի ներառում էր Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներից 3-ական գավառներ. Արցախից՝ Քուստ-ի-Փառնես կամ Միջնարցախ, Կողթ (ընկնում է Գեղանա ծովի ելքի Շամքոր և Խոչքար գետերի ակունքների միջև, Այրում գավառում), և Մեծ Կողմանք (Թարթարի հյուսիսային կամ ձախ կողմում է, Չլաբերդում)², իսկ Ուտիքից՝ Տուս-Քուստակ, Գարդման³ (տարածվում է Շամքոր գետի վերին հոսանքի շրջանում) և Շակաշեն (գավառի պատմական հայագիտական նշանավոր վայրը Գանձակ քաղաքն է, որը կառուցվել է 12-րդ դարում):⁴

¹ Ինձիճեան Դ., Ստորագրութիւն Հին Հայաստանեաց, Վենետիկ, 1822, էջ 338: Տես նաև՝ Ուլուբարյան Բ., Դրվագներ Հայոց արևելյաց կողմանց պատմության (5-7-րդ դարեր), Երևան, 1981, էջ 35:

² Ալիշան Դ., Արցախ, Երևան, 1993, էջ 10.

³ Հեղինակներից շատերը Գարդմանք դնում են Արցախ «աշխարհի» մեջ: Տես՝ Հակոբյան Թ.Ի., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 2007, էջ 243:

⁴ Նույն տեղում, էջ 244:

Ք.ա. 1-ին և հազարամյակից մտել է Արարատյան (Բիայնիլի) թագավորության սահմանների մեջ, Ք.ա. 6-2-րդ (VI-II) դարերից՝ Երվանդունիների, Ք.ա. 2-րդ-Ք.ա. 1-ին (Ք.ա. II-Ք.հ. I) դր՝ Արտաշեսյանների, 1-5-րդ (I-V դր.)՝ Արշակունիների թագավորությունների, 5-րդ (V) դարի վերջից արցախյան Առանշահիկ նախարարական տոհմից Վաչագան Բարեպաշտի ստեղծած թագավորության կազմի մեջ¹: 6-րդ (VI) դարում Առանշահիկների թագավորությունը վերացավ: 7-9-րդ (VII-IX) դարերում գտնվել է արաբական տիրապետության տակ: 10-րդ (X) դարից մտել է հզորացող Խաչենի իշխանության կազմի մեջ, 12-րդ (XII) դարավերջին Զաքարյանների գլխավորությամբ ազատագրված Հյուսիս-արևելյան Հայաստանի կազմում:

Արտաշես Ա-ի և նրա ժամանակակցի՝ Ծոփիքի թագավոր Զարեհի մասին հոյն աշխարհագետ Ստրաբոնը² հաղորդում է, որ նրանց ժամանակներում իրենց երկրների բնակչությունը միավեզու էր, այսինքն խոսում էին միայն հայերեն: Մրանից հետևում է, որ Մեծ Հայքի հյուսիս-արևելյան շրջանների, այսինքն՝ Արցախ-Ուտիշիքի բնակչությունը իրենց մասնակցությունն են բերել հայ ժողովրդի կազմավորման ընթացքին և դարձել նրա անքակտելի մասը: Ինչպես Արտաշեսյանների, այնպես էլ Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում Արցախն ու Ուտիշը կազմում էին Մեծ Հայքի անբաժանելի մասերը: Իրեն Հայաստանը կազմող մասեր-նահանգներ՝ վերջիններս հիշատակվում են Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Պտղոմեոսի, Ստեփանոս Բյուզանդացու և այլոց երկերում: Այս ու բազմաթիվ այլ հեղինակներ նշում են, որ Հայաստանի սահմանը հյուսիս արևելքում անցնում էր Կուր գետով³:

428թ. Սասանյանները, որոնք նվաճել էին ամբողջ Այսրկովկասը, ստեղծում են երեք մարզպանություն՝ Արմինիա, Իբերիա և Ալբանիա (Արան): Մինչև 451թ. Ալբանիա մարզպանության կազմի մեջ մտցվեցին Մեծ Հայքի Արցախ և Ուտիշ նահանգները⁴: Վարչական այս փոփոխությունները, սակայն չխաթարեցին նշված երկրամասերի բնակչության ազգային կազմն ու պատկերը:

¹ ՂԱՊ, էջ 517:

² Ստրաբոն, Աշխարհագրություն, գիրք XI, գլ. I, § 4, 5 և այլն

³ Ուլուբարյան Բ., Դրվագներ Հայոց արևելյաց կողմանց պատմության (5-7-րդ դդ.), էջ 30-31:

⁴ Նույն տեղում, էջ 259:

5-րդ դարի վերջում Արցախ-Ուտիքի հայ բնակչությունը ձեռք է բերում ժամանակավոր անկախություն: Արցախի Կաչագան իշխանը Սասանյան Վաղարշ թագավորից ստանում է Աղվանքի (Ալբանիա) թագավորի (առանշահիկ) տիտղոսը: Կաչագան Առանշահիկը¹ վերանորոգում է քրիստոնեական հավատը, բաց է անում բազմաթիվ հայկական նոր դպրոցներ:

7-րդ դարում Աղվանքում կազմավորվում է Աղվանից իշխանությունը, որի ներկայացուցիչները Գարդմանացի կամ Միհրանյաններ² կոչվածներն էին: Իշխանության կենտրոնը Պարտավ քաղաքն էր:

Արաբների երևալուն պես, Արցախ-Ուտիքի հայ բնակչությունը Առանշահիկների և Միհրանյանների գլխավորությամբ, անհավասար, սակայն համար պայքար են ծավալում նվազողների դեմ:

8-րդ դարի ընթացքում արաբների գերակշիռ ուժերի ճնշման ներքո երկրամասի բնակչությունը ստիպված է լինում հարթավայրային շրջաններից քաշվել դեպի նախալեռնային ու բարձր լեռնային գոտիները, որտեղ տեղանքը պաշտպանություն կազմակերպելու առումով առավել հուսալի էր:

9-րդ դարում բնիկներն ուժեղացնում են պայքարը արաբական տիրապետության դեմ: Նշանակալի էին Արցախ-Ուտիքի իշխաններ Կտրիծ Սևորդացու և Ատրոներսեի Առանշահիկի գործողությունները. արաբ զորավար Բուղան վերջիններիս գերելով ուղարկում է խալիֆին: Այնուամենայնիվ, 887թ. Արցախ-Ուտիքի իիմնական մասերը, ներառյալ Գանձակ և Պարտավ քաղաքները, ազատվում են արաբների տիրապետությունից և մաս կազմում Հայաստանի Բագրատունյաց թագավորության:

Ավատատիրական մասնատվածության շրջանում երկրամասի տարածքում առաջանում են Փարիսոսի և Գարդմանի իշխանությունները:

970-ական թվականներին Առանշահիկ Հռվիաննես Սենեքերիմը Փառհիսոսը վերածում է թագավորության: Վերջինիս ճանաչում են Բյուզանդիան և Պարսկաստանը: Փառհիսոսի թագավորությունն իր մեջ ամփոփում էր երկրամասի գորեթ բոլոր նախալեռնային և լեռնային շրջանները: Մերձկուրյան հարթավայրային շրջանների մի մասը, որոնք արդեն հիմ-

¹ Խորենացի Մ., Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 113, Գանձակեցի Կ., Պատմություն Հայոց, 1982, Երևան, էջ 193:

² Ռուբերտ Բ., Եղվաշիս, էջ 129:

նականում պարպես էին հայ բնակչությունից և զբաղեցվել վաչկատուն զանազան ցեղերով, դուրս են մնում թագավորության կազմից:

11-րդ դարում Փառհսոսի թագավորության տարածքը կիսվում է հայ Բագրատունիների և Գանձակին տիրացած քրդական Շեղդաղյան հարստության ներկայացուցիչների՝ Էմիրների միջև։ Վերջիններս գրավում են Երկրամասի հարթավայրային շրջանների հիմնական մասերը՝ Գանձակ և Շամքոր քաղաքներով հանդերձ¹:

Փառհսոսն ու Գարդմանը 11-րդ դարում ենթարկվում են սելջուկյան ասպատակություններին, սակայն մինչև 12-րդ դարի սկիզբը շարունակում են մնալ Կյուրիկյան Բագրատունիների հայոց թագավորության կազմում։ Այնուհետև դրանք մտնում են Այսրկովկասում սելջուկյան իշխանությունների դեմ պայքարող վրաց Բագրատունիների (Դավիթ Շինարարի օրոք) թագավորության կազմի մեջ։ Նշված ժամանակաշրջանում երկրամասի հայ բնակչությունը ստիպված է լինում ել ավելի քաշվել դեպի հարավ՝ լեռնային գոտին։ Կյուրիկյանների վերջին ներկայացուցիչները իշխում էին Կայեն և Մածնաբերդ ամրակութ ամրոցներին և շրջակա գավառներին։

12-րդ դարի վերջում Զաքարյան իշխաններն ազատագրում են Արցախ-Ուտիք Երկրամասը սելջուկներից։ Դրա հյուսիս-արևելյան հատվածում սկսում են իշխել Զաքարյանների մի ճյուղի ներկայացուցիչները՝ Վահրամյանները²։

Վահրամյանների իշխանությունը հարավում ընդգրկում էր ողջ լեռնային գոտին՝ սահման ունենալով Սևանի և Մռավի ջրբաժան լեռնաշղթանները, իսկ հյուսիսում հասնում էր Կուր գետին՝ ներառելով Շամքոր քաղաքը։

Սակայն օտարամուտ ցեղերը չեն հեռանում Երկրամասի բարեբեր հարթավայրերից, իսկ հայերն ել չեն համարձակվում վերադարձնալ իրենց պապերի լքած բնակավայրերը, որոշ չափով միայն ավելի հայաշատ են դառնում հարթավայրային գոտում գտնվող քաղաքները։

11-13-րդ դարերում Հայաստանի մյուս մասերի նման Արցախ-Ուտիքում ևս հայ մշակույթը վերածնունդ էր ապրում։ Վերաշինվում են քա-

¹ Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 171, 175։

² Հայ ժողովրդի պատմություն, հ.2, Երևան, 1965, էջ 104, Ուլուքաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 134։

դաքները, կառուցվում են նոր բերդեր, վանքեր, եկեղեցիներ, նորոգվում են հները (դրանցից շատերը հասել են մեր օրերը): Այդ ժամանակաշրջանում երկրամասում ծնվել և ստեղծագործել են հայ մշակույթի և գիտության կարկառուն այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Հովհաննես Սարկավագը, Մխիթար Գոշը, Վանական Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին և այլոք: Մխիթար Գոշի Զանքերով Շամքոր գետի ափին գտնվող Դասնո անապատում 1184թ. ստեղծվում է հայոց առաջին Դատաստանագիրքը:

13-րդ դարում Այսրկովկասը նվաճում են թաթար-մոնղոլները, որոնք քոչվոր ցեղերի նոր խնբերի համար ձանապարհ են բացում դեպի Հայաստան:

14-15-րդ դարերում, ներխուժելով Երկրամաս, իրենց ավերիչ գործունեությամբ մեկը մյուսին գերազանցում են Զալալի, Չոբանյան, Ակ-Լոյունլու, Կարա-կոյունլու և այլ ցեղերը:

15-րդ (XV) դարում ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի անընդմեջ արշավանքներից Արցախ նահանգը մեծապես տուժել է, տնտեսական ու մշակութային կյանքը խաթարվել: Այդուհանդերձ, հենց Խաչենում է, որ պահպանվել էին հայ պետականության վերջին կենսունակ բեկորները, որոնց հիմքի վրա էլ 16-րդ (XVI) դարի վերջին և 17-րդ (XVII) դարի սկզբին ստեղծվել են հայկական վարչա-քաղաքական իշխանություններ (մելիքություններ) և Շահումյանը Խամսայի (արաբերեն՝ Խամսա-հինգ) մելիքություններից մեկի՝ Գյուլիստանի մելիքության մեջ էր մտնում, որն ընկած էր Կուրակ (Քյուրակ) և Թարթառ գետերի միջև: Իշխող տունը Մելիք-Բեգլարյաններն էին, որոնք գործուն մասնակցություն են ունեցել 17-18-րդ (XVII-XVIII) դդ. հայ-ազատագրական կրիվներին¹:

16-17-րդ դարերում Երկրամասի տարածքի հիմնական մասն արդեն ընդգրկվել էր Գանձակի պարսից խանության սահմանների մեջ: Այս շրջանում օսմանցիները Երկրամասը գրավելու մի քանի փորձ են անում: 16-րդ դարավերջին նրանց հաջողվում է հասնել նույնիսկ Կասպից ծովի ափերը: Սակայն 17-րդ դարի սկզբին պարսից Շահ Աբասը, մեծ ուժերի կենտրոնացումով ու նաև տեղի հայերի աջակցությամբ (որոնք համադրելով թուրք և պարսիկ իշխանությունների վերաբերմունքն իրենց

¹ Հաֆֆի, Հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ, Երևան, 1991, հ.11, էջ 360-361: Ուղուարքան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 346:

նկատմամբ, գերադասում էին վերջինների տիրապետությունը), կարողանում է թուրքերին դուրս մղել ոչ միայն Գանձակի, այլև շուրջ Երկու տասնամյակ առաջ գրավված պարսկական բոլոր նախկին խանությունների տարածքից: Այլ խոսքով՝ պարսիկներին հաջողվում է վերատիրել ողջ Արևելյան Հայաստանին:

1639թ. Կ.Պոլսում Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված պայմանագրին հաջորդած խաղաղ մի քանի տասնամյակները Երկրամասի հայ բնակչության համար քաղաքական և մշակութային, լայն առումով՝ ազգային զարթոնքի ազդակ են հանդիսանում: Իշխանական իին տների ճնշված ու թուլացած որոշ շառավիղների ներկայացուցիչներ, ամրապնդվելով ու վերակենդանալով, սկսում են կարգի բերել ու միավորել իրենց ուժերը, շահական հրովարտակներով ամրագրել իրենց պատկանող տիրույթների սահմանները: Այսպես, առաջիններից մեկը, որ դեռևս 1601թ. Շահ-Աբրասից ստացել էր մելիքության իրավունք՝ Ուկանապատի Մելիք-Նազարն էր: Հեռատես ու քաղաքականապես հասուն այս անձը իիմք դրեց կիսաանկախ մի իշխանության-մելիքության: Այնուհետև հայկական մելիքություններ առաջացան Շամբոր գետի միջին ավագանում՝ կենտրոն ունենալով Բարսում գյուղը: Այստեղ նստում էին Մելիք-Առուստամյանները: Կուրակ (Քյուրակ) գետի միջին ու վերին ավագանի շրջանում ստեղծվեց Գետաշենի Մելիք-Մնացականյանների մելիքությունը: Ծնունդ էին առել նաև հայկական ավելի թույլ մելիքություններ, որոնց տերերը իշխում էին 1-3 գյուղների: Դրանցից էին Կրգենի, Բաղայի (Լղարակ), Հարցհանգիստի (Չովդառ) և Բանանցի մելիքությունները: Անհամեմատ հզոր ու ընդարձակ էր Գյուլիստանի կամ Թալիշի մելիքությունը, որը նտնում էր Արցախի Խանսայի մելիքության մեջ: Հյուսիսարցախյան փոքրիկ մելիքությունները, որոնցից յուրաքանչյուրի տիրույթներում կային մինչև 5 և ավելի գյուղեր, վայելում էին ներքին ինքնավարություն, կախում ունեին միայն Գանձակի խաներից: Տեղին է նշել, որ 17-րդ դարում և մինչև 18-րդ դարի 70-ական թվականների վերջերը հայաբնակ էր Երկրամասի ոչ միայն նախալեռնային (ինչպես հիմնականում մինչ 1988-89 թվականներին էր), այլև՝ լեռնային ողջ գոտին: Այլ կերպ ասած՝ հայաբնակ գյուղերի խիս ու ապահով ցանցով ամրապնդված էր նաև մելիքությունների թիկունքը:

Նադիր շահի մահից հետո Երկրամասում ստեղծվել էր քաղաքական աննախադեպ անկայուն իրավիճակ: Հարևան խանությունների կամ պե-

տությունների հետ մերթ դաշինքի, մերթ պատերազմների մեջ գտնվող Գանձակի խանությունը ծանր բեռ էր դարձել բնակչության համար: Դագանական անօրինակ ծախսերի համար խաներն անընդհատ ավելացնում էին բնակչության վրա դրված հարկերը: Դրանք ոչ միայն գանձվում էին անկանոն ու կամայական, այլև հաճախ վերածվում էին բացահայտ թալանի: Հարկաբեռն իր ողջ ծանրությամբ նախ և առաջ ընկել էր Գանձակի խանության հայ բնակչության վրա: Մահմեդական իշխողները հայերին ապօրինի հարկերով կեղեցրում էին ոչ միայն այն բանի համար, որ քրիստոնյաներին համարում էին անհավատներ (գյավուր), այլ, որ հայերը մշտաբնակ էին և, ըստ այդմ, արտադրում էին հողագործական և այգեգործական մթերքներ: Մինչդեռ խանության սահմաններում բնակվող մահմեդական տարրը (զիխավորապես՝ թուրք) վարում էր քոչվոր կյանք և, անընդհատ շարժման մեջ գտնվելով, լավագույն դեպքում հարկվուն էր անասնամթերքով:

Գանձակի խանության համար 18-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվում է հատկապես նրանով, որ խանն արդեն ասպատակում էր իր տարածքը, որով և հայ բնակչությունը հայտնվել էր անելանելի վիճակում: Հայերը ճարահատյալ մինչև իսկ դադարեցրել էին վարուցանքը, քանի որ հարկվում էր տարվա ողջ բեղջը կամ, ավելի ճիշտ, այն ամբողջությամբ պարզապես թալանվում էր:

Հայերը ոչ միայն նյութապես ու տնտեսապես էին թալանվում, այլև (իբրև հարկ) նրանցից խլում էին մանկահասակ երեխաներին: Պակասը լրացվում էր ժամանակ առ ժամանակ Վրաստանից, Ղաղտանից կամ հարևան խանություններից կատարվող ավարառության արշավանքները:

Չդիմանալով ծայրահեղ դժնիակ պայմաններին՝ 1770-ական թվականներից Գանձակի գավառի՝ առավելապես արևելյան ու հարավարևելյան հայաբնակ հոծ հատվածի տասնյակ գյուղերից ծայր է առնում բնակչության զանգվածային արտագաղթ. զիխավորապես դեպի հարևան Շամշադին և Բորչալու գավառները: Ի դեպ, սրանք էլ ընդամենը մի քանի տասնամյակ առաջ էին հայաթափ եղել (հատկապես լեզգիների արշավանքների հետևանքով), պատված էին բազում գյուղատեղիների ցանցով, որտեղ էլ հանգրվան են գտնում Գանձակի խանության սահմանները լքած հայերը: Գաղթականների մի մասն էլ՝ Շամքոր, Գանձակ քաղաքներից ու մերձակա գյուղերից, հիմնավորվում են Հավլաբար գյուղուն

(հետագայում Տփղիսի շրջագծի մեջ) և Քարթլի-Կախեթի տասնյակ այլ գյուղերում, ինչպես, օրինակ, Լիս, Մոլիսան, Ախալքալաք և այլն:

Երկրամասի հայաթափի շրջանները հետագայում բնակեցվում են թյուրքական ծագմանբ դաշար, զուլքադար և այրում ցեղերով:

1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի պարտից հետո Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև Գյուլիստանում կնքվեց հաշտության պայմանագիր, ըստ որի Արցախը, այդ թվում Գյուլիստանի մելիքությունը և հարավյան Կովկասի տարածքների մեծ մասն անցել են Ռուսաստանին: 19-րդ դ. Գյուլիստանը ներառված էր Ելիզավետպոլի նահանգի Զվանշիր գավառի կազմում:

1867 թվականի դեկտեմբերի 9-ին Ալեքսանդր 2-րդ ցարը ստորագրեց «Կովկասյան և Անդրկովկասյան Երկրամասի կառավարման բարեփոխումների մասին» կանոնադրությունը, որը գործողության մեջ դրվեց 1868 թվականի հունվարի մեջից: Այդ կանոնադրության համաձայն Անդրկովկասը բաժանվեց հինգ նահանգների՝ Քութայիսի, Թիֆլիսի, Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի: Հինգ գանձակը վերանվանվեց Ելիզավետպոլ, որի անունով էլ կոչվեց նոր նահանգը¹: Այս նահանգի մեջ մտան Արցախը, Զանգեզուրը և հայկական այլ գավառներ: Արցախի գավառական կենտրոններ դարձան Թարթառը (Զիվանշիրի համար) և Ջերայիլը (համանուն գավառի համար)²: Ղարաբաղը այս նահանգի կազմում մնաց մինչև 1917թվականը:

1889թ. դրությամբ Գանձակի նահանգում գործում էր 11 վանք և 88 եկեղեցի³:

Արցախ աշխարհի բազմադարյան պատմության ամենածանր ու դրամատիկ իրադարձություններով լի ժամանակաշրջաններից մեկը, թերևս 1918-1921 թվականներն են⁴:

1918-1920թթ. Գյուլիստանը Լեռնային Ղարաբաղի այլ շրջանների թվում փաստորեն ինքնուրույն էր և կառավարվում էր տեղի Հայոց Ազգային խորհրդի կողմից⁵:

¹ 1918թ. սկզբին Ելիզավետպոլը վերանվանվեց Գանձակ

² Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ.199, գ.1, գ.128, թ. 248:

³ Կարպետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեյչանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 227:

⁴ Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996, էջ 8:

⁵ Պարագանել Հայոց Ազգային Խորհրդության առաջնային հարցում, Երևան, 1989, ս. 23.

1920թ. մարտ-ապրիլին Գյուլիստանն Արցախի շրջանների հետ ենթարկվել է օսմանյան թուրքերի և մուսավաթականների հարձակումներին¹, ավերվել են բազմաթիվ բնակավայրեր, զոհվել խաղաղ բնակիչներ:

Աղրբեջանի Հանրապետությունը ստեղծման օրվանից ոչ միայն քաղաքական նկատառումներով յուրացրել է հարեւան իրանի հյուսիսային հատվածում գտնվող Աստրափատական նահանգի անունը, այլև ի սկզբանե ձևավորվել է մեծավ մասամբ պատմական Հայաստանի հողերի վրա (Կուրի ողջ աջակից հատվածը):

Ստալինյան իշխանությունների որդեգրած՝ Հայաստանը Վրաստանի և Աղրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միջև մասնատելով տարալուծելու ծրագիրը, ճիշտ է, ամբողջությամբ կյանքի չկոչվեց, այնուամենայնիվ պատմական Հայաստանի հայահոծ մի շարք երկրամասեր՝ Նախիջևանը, Լեռնային և Ղաշտային Ղարաբաղն ու Հյուսիսային Արցախը բռնակցվեցին «Եղբայրական Աղրբեջանին», իսկ Զավախըն ու Գուգարքի մի մասը՝ Վրաստանին:

1923թ. հուլիսի 7-ին կազմավորված ԼՂԻՄ-ի² կազմում չեն ներառվել Գյուլիստանի և Հյուսիսային Արցախի շրջանները: Աղրբեջանի իշխանությունները Գյուլիստանի շրջանում վարել են ժողովրդագրական միատարրությունը խախտելու ակնհայտ քաղաքականություն՝ 1930 թվականին շրջանին միացրել են 4 ադրբեջանաբնակ գյուղ՝ Չեյվա, Շեֆեկ, Գյուրզալար և Թողան: Այս տեսքով շրջանը պաշտոնապես կազմավորվեց 1930թ. օգոստոսի 8-ին (08.08.1930թ.), այդ ժամանակ էլ Անդրկովկասի բոլշևիկների առաջնորդ Ստեփան Շահումյանի պատվին ստանալով Շահումյանի շրջան անվանումը³:

Շահումյանի շրջանը, ինչպես խորհրդային ողջ տարիներին, այնպես էլ՝ նախկինում, Լեռնային Ղարաբաղի մյուս հատվածների և ամենից առաջ՝ ԼՂԻՄ-ի հետ կազմում էր մեկ միասնական պատմաաշխարհագրական էթնիկ և տնտեսական տարածություն:

Շահումյանի շրջանը 1930-1991թթ. Աղրբեջանական ԽՍՀ կազմում էր: Նրա տարածքը կազմում էր 600 քառ.կմ, իսկ բնակչությունը 1989 թվա-

¹ Нагорны́ Карабах, Историческая справка, Ереван., 1988, с. 23.

² Հովհաննիսյան Գ., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 231:

³ НКР, Путь к вершинам, Степанакерт, 2001, стр. 135. К истории образования Нагорно-Карабахской области Аз. СССР 1918-1925, документы и материалы, Баку, 1989, с. 54.

կանի դրությամբ 21 հազար էր, որից 17,5 հազարը հայեր էին, 3,5 հազարը ռուսներ ու աղբեջանցիներ¹:

Կենտրոնը քաղաք Շահումյանն էր: Շրջանը ԼՂՀ հյուսիսային դարպասն է, արևմուտքում և հյուսիսում սահմանակից է Ղաշքեսանի, Խանլարի, արևելքում՝ Գերանբոյի (Կասում-Խսմայիլով), հարավում՝ ԼՂՀ Մարտակերտի շրջաններին: Տարածքի հարավային սահմանագծի երկարությամբ ձգվում է Մռավի լեռնաշղթան (ամենաբարձր գագաթը Գյամիշ լեռն է՝ 3724մ): Հարավ-արևելյան սահմանի երկարությամբ (Մարտակերտի սահմանագծով) հիսում է Ինչա (բարակ) գետը: Շրջանի Գյուլիստան գյուղի մոտ է գտնվում Ս.Ամենափրկիչ (Նապատ) վանքը, գյուղից 3 կմ հեռու՝ Գյուլիստանի կիսավեր բերդը (XVIII դ.), որը եղել է Գյուլիստանի մելիքների նստավայրը, պահպանվել էին դոյակներ, բնակելի շենքերի և եկեղեցու ավերակներ: Շահումյան քաղաքում էր գտնվում Ս.Աստվածածին եկեղեցին (XVII դ.), քաղաքից հարավ՝ Երեք մանկունք կիսավեր վանքը (XVII դ.), Բուզլուխում՝ եկեղեցի (XVIII դ.), մոտակայքում՝ Ս.Մինաս ուխտատեղին, Հայ Պարիսում՝ ավերակ եկեղեցի և Նահատակ մատուռը, Վերինշենում՝ եկեղեցի (XVIII դ.)² և այլն:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատ է մեկնել 2647 շահումյանցի (այդ թվում՝ 10 կին), զոհվել է 1200-ը, իսկ մեկն է՝ Գարեգին Բալայանն արժանացել է Խորհրդային միության հերոսի կոչման³:

Աղբեջանի հակահայկական քաղաքականության պայմաններում անգամ 1950-60-ական թվականներին շրջանում նկատվել է ազգային ինքնագիտակցության զարթոնք: Նման տեղաշարժերն արգելակելու, հայկական շրջանները լուծարելու նպատակով Աղբեջանի իշխանությունները ստեղծել են արտադրական տարածքային նոր խոշոր միավորներ: Խանլարի շրջանը, որը գերակշռող հայ բնակչություն ուներ և հայ ղեկավարություն, միավորվել է աղբեջանաբնակ Սաֆարալիկի շրջանի հետ: Իսկ Շահումյանի շրջանը որոշվել է միացնել հարևան աղբեջանաբնակ Կասում-Խսմայիլովի շրջանի հետ:

¹ НКР, Путь к вершинам, Степанакерт, стр. 134.

² ՂԱՊ, էջ 517:

³ Նոյն տեղը, էջ 518:

Այդ որոշման դեմ բազմաթիվ բողոք-հեռագրեր հանրագրեր, հատուկ պատվիրակություններ է ուղարկվել Մոսկվա և շահումյանցիների դիմադրության շնորհիվ շրջանը պահպանել է իր կարգավիճակը:

Աղրբեջանական իշխանությունները և Ղարաբաղում աղրբեջանցի գործիչները արցախահայությանը սպառնում էին ուժ գործադրել, եթե նա չկատարի Աղրբեջանի պահանջները¹:

Անդրֆեդերացիայի ստեղծումով արհեստականորեն խլացվել էին այդ վարչական միավորի մեջ մտնող ազգերի ներքին պահանջներն ու դժգոհությունները, ծավալվել էր վերին իրամանով վարվող մի քաղաքականություն, որը ինտերնացիոնալիզմ քարոզելով միակ ճշմարտությունն էր համարում «Եղբայրական Աղրբեջանի» կազմում պահելը²:

Խորհրդային կարգերի արշալույսին Աղրբեջանի կողմից սկսվեց հայոց Արցախի ծվատման և վերջնականապես կլանման սանձարձակ քաղաքականությունը, որը նոր արհավիրքներ բերեց Հայոց Արևելից գավառների հայությանը:

1987 թվականից սկսած՝ բացահայտ է դարձել հայերին բռնի տեղահանելու՝ Աղրբեջանի իշխանությունների քաղաքականությունը: Առաջին փորձը նրանք կատարել են Հյուսիսային Արցախի Չարդախլու գյուղի բնակչիների նկատմամբ³:

Մինչև Ղարաբաղյան հակամարտության սկիզբը Հյուսիսային Արցախի լեռնային հատվածում բնակչության մեծամասնություն են կազմել հայերը՝ շրջանի բնիկները. այնտեղ ապրել է մոտ 90-95 հազար հայ: Նրանց մոտ կեսը՝ 40 հազարը, ապրել է Կիրովարադ (Գյանջա, պատմական Գանձակ) քաղաքում, իսկ մնացածը 10-20 հազար բնակչությամբ բնակվել է Շահումյանի, Խանլարի, Դաշտեսանի և Շամքորի շրջաններում:

Անդրադարձնալով Արցախյան շարժման առաջին իսկ օրերին Շահումյանի շրջանում ստեղծված լարված իրավիճակին պետք է նշել, որ շրջանի բնակչությունը առաջինը իր վրա զգաց ու վերցրեց աղրբեջանական հրոսակների հարվածները:

1988 թ. աշնանը Աղրբեջանի հայաշատ վայրերում ծայր առած բռնություններին հաջորդել են բռնագաղթը և զանգվածային փախուստը: Դա-

¹ Քաղայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002, էջ 314:

² Սարումյան Ն., Քաղաքական և մշակութային իրավիճակը ԼՂԻՄ-ում 1960-80-ական թվականներին, Ստեփանակերտ, 2001, էջ 8:

³ Ղահրամանյան Վ., Հյուսիսային Արցախ, Երևան, 2000, էջ 8:

տարկվել են Շամքորի, Դաշքեսանի, Խանլարի և այլ շրջանների հայկական գյուղերը։ Վտանգվել է Գետաշենի Ենթաշրջանի գոյությունը։ Շրջանի հայրենասիրական ուժերը ծերնամուխ են Եղել հնքնապաշտպանության կազմակերպմանը։ Կարգի է բերվել Կարաչինար-Թալիշ տանող ձանապարհը, ստեղծվել ռադիոկապ Շահումյանի, Գետաշենի և Երևանի միջև։

Աղբեցանի ղեկավարությունը՝ հանրապետության ժողովրդական ճակատի հետ միասին, մարդկանց խոշոր զանգվածներին ներքաշեց հակաիրավական գործողությունների մեջ ընդունակ մինչև զինված հարձակումները հայկական քաղաքների ու շրջանների վրա։ 1989թ. հունիսի 26-ին ժողովրդական պատգամավորների շրջբարերի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց շրջանը ԼՂԻՄ-ի կազմի մեջ մտցնելու մասին¹։

Աղբեցանի զինված ուժերի կողմից ծավալված հետագա ռազմական գործողությունների հետևանքով 1989-1990 թվականներին հայաթափվել է Հյուսիսային Արցախի՝ Գարդմանքի հայկական էթնոսի պատմական տարածքը², ապա և 1992թ. հունիսի 13-14-ին՝ 1000-օրյա դիմակայումից հետո, զավթվել է Շահումյանի շրջան։

Այդ օրերին՝ 20000 հայ բնակչություն, 11 հայկական գյուղ ունեցող Շահումյանում տվեցինք 289 անհայտ կորած կամ զոհված։ Այդ օրը մենք կորցրեցինք Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանը իր՝ Ներքին Շեն, Վերին Շեն, Հայ Պարիս, Մանաշիդ, Էրքեց, Բուլղուս, Կարաչինար, Գալթուտ, Գյուլիստան, Խարխափուտ հայկական գյուղերով 698 քառ. կմ տարածք³։

Եվ միայն մայիսյան զինադադարից հետո՝ 1994թ. հունիսին նորից ստեղծվել է Շահումյանի շրջանի վարչակազմ և սկսվել է շահումյանցիների վերաբնակեցումը ԼՂՀ-ում։

2001 թվականին ԼՂՀ կազմում ստեղծվել է Շահումյանի շրջան վարչական նոր սահմաններով, որն ընդգրկում է Շահումյանի նախկին շրջանը (որի գյուղերը գտնվում են հակառակորդի վերահսկողության տակ, թվով 16 գյուղ), Գետաշենի նախկին Ենթաշրջանը (թվով 7 գյուղերը հակառակորդի վերահսկողության տակ են գտնվում) և Քելբաջարի նախկին շրջանը (թվով 33 գյուղ)՝⁴

¹ Թովմասյան Վ., Արաջանյան Վ., Ներսիսյան Յու., Ղարաբաղյան հարց, էջ 14:

² «Գարդմանի կանչ» թերթ, 2008թ. նոյեմբեր:

³ <http://sarcashen.blogspot.com/search/label/>

⁴ Նոյյն տեղում:

Ամփոփում

Հոդվածում լուսաբանվում է այն միտքը, որ Հյուսիսային Արցախը պատմական Արցախ «աշխարհի» անբաժանելի մաս է հանդիսանում: Ըստ այդմ էլ Աերկայացվում է Արցախի և նրա Հյուսիսային մասի վարչաքաղաքական սահմանները, վարչական միավորի պատմական անցյալը, լուսաբանվում է ուսումնասիրվող տարածքների միասնական էթնիկ և տնտեսական տարածք հանդիսանալու հանգանանքը: Այնուհետև ցույց է տրվում խորհրդային վարչակարգի պայմաններում Ստալինյան իշխանությունների որդեգրած ծրագրով պատմական Հայաստանի հայակոծ մի շարք երկրամասերի՝ Նախիջևանի, Լեռնային և Ղաշտային Ղարաբաղի ու Հյուսիսային Արցախի բռնակցումը «Եղբայրական Աղրբեջանին», իսկ Զավախսքի ու Գուգարքի մի մասինը՝ Վրաստանին:

Ներկայում Հյուսիսային Արցախի և նրա մի մասը կազմող Շահումյանի տարածքը բռնազարքված է Աղրբեջանի կողմից, իսկ շահումյանցիները՝ զրկված են իրենց հայրենի օջախներից:

Северный Арцах-этнически и экономически историко-географическая часть Арцаха Нуне Сарумян Резюме

Ключевые слова:Арцах, Гардманк, Утик, Шаумян, этническая территория, меликства, Гюлистан, выселение, Куст-и-парнес, Кохт, Тус-Кустак, Метс-Кохманк, Шакашен, Елизаветпольская губерния, договор, делегация, переселение, освободительная борьба, массовое уничтожение, антиармянская политика, подъем национального самосознания.

Северный Арцах исконно армянская земля и неотъемлемая часть Арцаха и частично-Утика. В статье представлена историческая география Арцаха и Утика, частью которых является Северный Арцах, а так же рассматривается процесс дальнейших политико-географических изменений в истории региона. Особое внимание уделяется периоду насильственного введения данной территории в состав Азербайджанской ССР. Отмечается, что на всем протяжении существования СССР главной целью руководства Азербайджана было стремление очистить исконно армянские земли от коренных жителей и создать тюркское государство. Однако, несмотря на всяческие угрозы и попытки вытеснения армянского населения, армяне Северного Арцаха смогли отстоять свою свободу и целостность территории вплоть до 1991 года.

Nort Artsakh is history geographical economic area of Artsakh "World"

Nune Sarumyan

Summary

Key words. Artsakh, Gardmank, Utig, ethnic area, melikdom, Gulistan, eviction, Kust-i-Parnes, Koght, Mets Kogmank, Tus-Kustak, Shakashen, The province of Elizavetpol, agreement, upheaval, liberation struggle, massive genocide, Shahumyan, antiarmenian policy, national awakening of consciousness.

The idea that North Artsakh is an inseparable part of the historical Artsakh "World" is illustrated in the articale. Accordingly the history of administrative unit and the political borders of Artsakh and its nortern part are presentend, the circumstance that study areas are united ethnic and economic areas is illustrated. Then the pressure of many regions of historical Armenia, such as Nakhichevan, Nagorno and North Artsakh in "Franternal Azerbaijan" and one part of Javakheti and Gugark in Georgia with adopted program of Stalin's authorities in the conditions of Soviet regime is presented.

Presently the area of North Artsakh and one of his parts Shahumyan is occupied by Azerbaijan, and the people of Shahumyan are deprived of their native hearth.

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՄԲՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՈ

20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՒ*

Վահրամ Բալայան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱրԴԿ

Բանալի բառեր: Հայ, Դարաբաղ, Ուսաստան, Թուրքիա, պայքար, համախմբում, ազատագրություն, ցարիզմ, երկիր, կազմակերպություններ, բռնարարքներ, իշխանություն:

20-րդ դարի սկզբներին հայություննիր ազատության և անկախության ուղիներում հանդիպեց առավել ծանր իրավիճակների: Եթե նախկինում ցարական իշխանությունները հայության դեմ պայքարում էին ավելի «քաղաքակիրթ» միջոցներով, ընդունվում էին որոշումներ, օրենքներ, կամ էլ հետապնդվում էին առանձին անհատներ, կազմակերպություններ, ապա այս անգամ բռնարարքների ենթարկվեց ողջ ժողովուրդը:

Դարասկզբին դա հիմնականում կապված էր 1903թ. հունիսի 12-ի Նիկոլայ Երկրորդի տիսրահօչակ իրամանագրի հետ, որով բռնագրավ-վեցին հայ լուսավորչական եկեղեցու կալվածքներն ու գույքը: Հայ պատմագրության մեջ տիրում է այն կարծիքը, որ ցարական արքունիքն այդ օրենքով փորձում էր փակել հայկական դպրոցները, մշակութային հաստատությունները և սահմանափակել եկեղեցունքնուրույնությունը¹:

Մինչեւ իրականում այն հեռագնա նպատակներ ուներ: Ցարական իշխանությունները լավ հասկանում էին, որ դարերի ընթացքում պետականությունից գրկված հայության համար եկեղեցին ազգային ինքնության և ինքնուրույնության ջատագովն ու դրան հասնելու կազմակերպիչն էր: Մյուս կողմից էլ կրթական հաստատություններում երիտասարդների և ուսուցիչների մեջ խսորվում էին ազատագրական գաղափարները:

Այս հարցում չի կարելի թերագնահատել դարասկզբին Արևմտյան Հայաստանում ծայր առած հակասութանական նոր շարժման դերը: Ցարական կառավարությունը մտահոգ էր, որ այդ պայքարի ալիքը կտարածվի նաև Արևելյան Հայաստանում: Մանավանդ տարածաշրջանում, մեծ տերությունների ակտիվացման պայմաններում, կարող էին Ուսուաս-

*Հոդվածը ընդունված է 16.10.14:

¹ՀԺՊ, հ. 6, Երևան, 1981, էջ 353; ՊարսամյանՎ., ՀարությունյանՇ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 305:

տանի համար հետևանքներն անկանխատեսելի դաշնալ: Հնարավոր զարգացումները կանխելու նպատակով ցարական արքունիքը վաղօրոք փորձում էր ոչնչացնել իր համար վտանգավոր թիրախները:

Մինչև վերոհիշյալ օրենքի ընդունումը Գ.Գոլիցինը Նիկոլայ Երկրորդին հավաստիացնում էր, որ «մեծ և միացյալ Հայաստան»-ի ստեղծման գործի գլուխ կանգնած է լուսավորչական եկեղեցին և տարեկան հարյուր հազարավոր ռուբլիներ է ծախսվում գենք ու զինամթերք ձեռք բերելու համար¹:

Գ.Գոլիցինի այս հիմնավորումներին գումարվեց Նիկոլայ Երկրորդի հակահայ տրամադրվածությունը: Նա մի առիթով ասել է. «Իմ անձնական և վաղեմի կարծիքով հայերի հանդեպ ոչ մի վստահություն տածել չի կարելի: Անշուշտ նրանք են գլխավորում խռովության ամբողջ դավադրությունը Կովկասում»²:

Եվ այսպես, 1903թ.հունիսի 12-ի օրենքը գործածության մեջ դրվեց: Բանագավթեց Եկեղեցուն պատկանող 1.775.905 ռուբլու արժողության ունեցվածքը³: Հայ ժողովուրդն ապրում էր տագնապալի ու խռովահույզ ժամանակներ: Այսրկովկասի հայաշատ վայրերում ապստամբական տրամադրություն էր տիրում: Հակակառավարական պայքարի մեջ ներառվեց նաև արցախահայությունը: Ցոյցեր և ընդհարումներ տեղի ունեցան նաև Արցախի մի շարք բնակավայրերում⁴:

Ցարական իշխանությունների դեմ դիմակայության ալիքը չէր մարել, երբ 1905-1906թթ. նոյն ուժերի կողմից սանձագերծվեցին ազգամիջյան ընդհարումներ:

Հարկ է նկատել, որ 1880-ական թվականներից սկսած՝ Ռուսաստանի ազգայնական տրամադրություն ունեցող գործիչները, որոնք հիմնավորվել էին իշխանական-պետական համակարգում, դարձան պանլավոնիզմի գաղափարախոսները: Կայսրության տարածքում ապրող փոքր ազգերի ներքին ինքնավարության ամեն մի ծգոտում նրանց կողմից գնահատվում էր որպես ռուսական պետության նկատմամբ թշնամական վերաբերմունք:

¹ Ակնունի Է., Դեպի Կրիպ, մնկ, 1904, էջ 20-24:

² Եղասիկիսական պայքարի վավերագրեր, Երևան, 1984, էջ 333:

³ Տյոհյան Բ., Ռուսկական պոլիտիկա Հայաստանում: Խորհրդային պատմություն (1918-1920 թվականներ), Երևան, 1998, ս. 40.

⁴ Ակնունի Է., Աշխ. աշխ., էջ 218-221, 235-241, «Դրոշակ», թիվ 2, 1905, էջ 31:

Ուսւ բարձրաստիճան պաշտոնյաներն ու քաղաքական գործիչները ցարին համոզում էին, որ Այրկովկասում կապիտալի կուտակումը հայ գործարարների ձեռքում, կրթական ու հանրային կյանքի զարթոնքը, քաղաքական կուսակցությունների եռանդուն գործունեությունը, Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքարի աննախադեպ վերելքը վաղ թե ուշ իրականություն կդարձնեն հայկական պետության վերականգնման ձգտումը:

Դեռ ավելին, ինչպես իրավացիորեն նկատել է Հ.Սիմոնյանը «Հայկական ինքնավարության պահանջը, ըստ իշխանությունների, լինելու էր Անդրկովկասի համար ինքնավարություն ձեռք բերելու պահանջի մի մասը: Հետևապես երկրամասի ժողովուրդների պառակտման պայմաններուն ընդմիշտ կթաղվեր ոչ միայն հայկական ինքնավարության, այլև Անդրկովկասի ինքնավարության գաղափարը»¹:

Ըստ Էւրեյան ռուսական պետության ամենաջերն պաշտպան և բարեկամ ժողովուրդը թշնամու կերպարանք ստացավ և իր մաշկի վրա զգաց կայսրության մամլիչի սարսափազդու ուժը: Նույնիսկ Գ.Գոլիցինն առաջարկում էր հայ «անջատողականներից» ազատվելու նպատակով ազգովի նրանց աքսորել Միքիր²: Սակայն գինվորական նախարար Կուրոպատկինը կանխեց խելահեղ այդ ծրագիրը³:

Անկախ և միացյալ Հայաստանի գաղափարը կատաղության էր հասցնում ինչպես Աբդուլ Համիդին, այնպես էլ՝ Նիկոլայ Երկրորդին: Պատահական չէր, որ 1905-1920թթ. հայկական ջարդերի կազմակերպման մեջ որոշակի դեր խաղաց օսմանիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունը:

Այրկովկասի տարածքում հայ-թաթարական կրիվները ոչ մի տեղ այնքան կատաղի չեն եղել, որքան Ղարաբաղում և, մանավանդ, նրա կենտրոն Շուշիում: Դա պատահական չէր, որովհետև բազում դարերի ընթացքում թուրք գործիչները համոզվել են, որ դեպի իրենց հայրենիքը՝ Միջին Ասիա ձգվող Ճանապարհն անցնում է Նախիջևանով և միատարր հայ բնակչություն ունեցող Ղարաբաղով, որտեղ, մանավանդ, իշխանության առկայությունը համարյա թե անհնարին է դարձնում իրենց դիվային

¹ Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, 2003, էջ 42:

² «Վերածնություն», թիվ 40, 1904:

³ Ալյունի Է., Աշխ. աշխ., էջ 84:

ծրագրերի իրագործումը և հատկապես արևմտյան Այսրկովկասը թուրքացնելու ու վերջնականապես կլանելու գործը:

1905-1906թթ. Լեռնային Ղարաբաղում հայկական կոտորածների ժամանակ մոլեռանդ ամբոխը վաճառկում էր պանիսլամիստական և պանթուրքիստական կարգախոսներ¹:

Այդ օրերին «Русские ведомости» թերթը գրել է. «Գերմանիայի ինացությամբ Կոստանդնուպոլիսում ձեռնարկվել է մի դավադրություն, որին մասնակցել են հիշյալ խաներն ու բեկերը(խոսքը վերաբերում է Ղարաբաղի խաներին ու բեկերին – Վ.Բ.), նպատակ ունենալով գլխովին բնաջնջել Կովկասում ապրող հայերին ու ջարդել մյուս ազգություններին, որպեսզի թուրքերի համար ճանապարհ բացվի դեպի Կովկաս և կազմավորվի Նախիջևանի խանությունը ...»²:

Քաջածանոթ լինելով պանիսլամիստական և պանթուրքիստական գաղափարներով առաջնորդվող թուրք առաջնորդների գործելակերպին՝ արցախահայության ծոցից ծնված մեծ ֆիդայի, ռազմական և քաղաքական գործիչ Նիկոլ Դումանը 1905-1906թթ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ կանխատեսել էր Մեծ Եղեռնը և հորդորել արևմտահայությանը՝ օգտագործել արևելահայության ինքնապաշտպանության մարտավարական փորձը: 1907թ. ժմանակ հրատարակած իր «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» գրքույկի մեջ Ն.Դումանը գրել է. «Նույն փոթորիկը ըստ իս կրկնվելու է Տաճկահայաստանում, ավելի ահավոր կերպով: Մեզ կմնա ինքնապաշտպանությունը դմել ամուր հիմքերի վրա»³:

Ցավալիորեն, մեծ հայրենասերի հորդորներն ու խորհուրդները 1915թ. արևմտյան Հայաստանում անտեսվեցին, և հարյուր հազարավոր երիտասարդներ, թշնամուն դիմադրելու փոխարեն, հլու հնազանդ մորթվեցին Միջագետքի անապատներում:

1905-1906թթ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ հայությունն ստիպված էր կրվել երկու ճակատով՝ ինչպես թուրքերի, այնպես էլ՝ կառավարության կամոնավոր գորքերի դեմ:

¹ ՌալայանՎ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 273: «Դրոշակ», թիվ 11(164), նոյեմբեր, 1905, էջ 167: „Всеподданнейшая записка, содержащая главнейшие выводы отчета о произведенной в 1905 году, повысочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии”, СПб., 1905, с. 4-5.

² „Русские ведомости”, N 173, 1905.

³ Նիկոլ Դուման, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան, ժման, 1907, էջ 64:

Հարկ է նկատել, որ 1905-1906թթ. ծանր ու տագնապալի օրերին պետականությունից ու սեփական իշխանություններից զուրկ հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու բարդ ու պատասխանատու գործը ստանձնել էր Հայ հեղափոխական դաշնակցությունը: «Եվ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, պետք է լինի զենքի ընդունակ, միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար, մանավանդ քաղաքական ցնցումների վայրկյաններում»- գրել է Նիկոլ Շումանը¹: Նման գործելակերպի շնորհիվ հայությունը փրկվեց վերահաս մասսայական ջարդերից:

Չնայած 1903-1905թթ. Եկեղեցական գույքի պետականացման և 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայ ժողովուրդը մարդկային և նյութական մեծ կորուստներ ունեցավ, այնուամենայնիվ, ինքնապաշտպանական մղումները նոր լիցք հաղորդեցին հայկական պետականության վերականգնման գաղափարին:

Ցարական արքունիքի բռնի մեթոդները հակառակ ազդեցությունն ունեցան: Հայ ժողովուրդը գիտակցեց, որ անկախ ազգային պետությունը միայն կարող էր դառնալ լիիրավ և ստեղծագործ կյանքի միակ երաշխավորը:

Այս երկու ազդակները մեծապես հեղաշրջեցին կովկասահայության կյանքը: Հայ մարդու մեջ սպանվեց ստրուկի հոգեբանությունը: Հայ ժողովուրդը համոզվեց, որ, սեփական ներուժի վրա հենվելով, կարելի էր լուծել թերևս անլուծելի համարվող ամեն մի խրթին հարց:

Մարտական գործողությունների ընթացքում հայ ժողովուրդը մեկ միասնական ճակատ հարդարեց: Ազգային շաղախով իրար կապվեցին արևմտահայերն ու արևելահայերը: «Հայությունը մեկ է,- ասում է Անդրանիկը,- ոլլայ Կովկաս թե Տաճկահայաստան...: Ազգային վտանգն ուրոր ծայր՝ տար՝ ամեն հայու պարտականությունն է փութալ դեպի վտանգը...»²: Այդ օրերին անուշի էին եկել հայ հանրության բոլոր շերտերը՝ դրամատեր-գործարարն ու բանվորը, շինականն ու մտավորականը, ասպարեզում գտնվող քաղաքական հիմնական ուժերն ու հասարակական-բարեգործական հաստատությունները:

¹ Նիկոլ Շուման, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության, Երևան, 1992, էջ 7:

² «Ուզմիկ», թիվ 93, 20 սեպտեմբերի, 1906:

Ցարական արքունիքը և թրքությունը հասկացան, որ ներդաշնակ միասնականությամբ հայությունն անպարտելի ուժ է: Տարեցտարի այդ ուժը տարածաշրջանում դառնալու էր գործոն:

Պատմական այս դասերը, ինչպես 1917-20թ., այնպես էլ՝ նորօրյա ժամանակներում իրենց դրական ազդեցությունն ունեցան հայկական պետականության կերտման գործում:

1903 թվականից մինչև 1907թ. հայ ժողովուրդը, ինքնապաշտպանական պայքարում թրծված և քաղաքական որոշ փորձառություն ստացած, 1906 թվականից կրկին օրակարգի հարց դարձրեց ազգային ինքնավարության գաղափարը: Այս անգամ նորից ՀՅԴ-ն առաջին շարքերում էր: 1905թ. դաշնակցությունը քննարկման նյութ դարձրեց ոչ միայն Հայաստանի, այլև Այսրկովկասի քաղաքական կարգավիճակի հարցը:

Ըստ ՀՅԴ տեսլականի՝ 1. Անդրկովկասը պետք է դառնա ժողովրդավարական հանրապետություն՝ հիմնված ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ձայնատվության վրա: 2. Անդրկովկասի ժողովրդավարական հանրապետությունը դառնալու է ապագայում ստեղծվելիք Ուսաստանի ֆեդերատիվ հանրապետության անբաժան մասը: 3. Անդրկովկասի հանրապետությունը ՌՖՀ-ի հետ կապված է լինելու ընդհանուր պետական ինքնապաշտպանության, դրամական և միասնական համակարգի և արտաքին քաղաքականության խնդիրներով: 4. Ներքին վարչական և տնտեսական բոլոր հարցերում Անդրկովկասի հանրապետությունն անկախ է լինելու: Հանրապետությունն ունենալու է իր պառամենտը և կառավարությունը: 5. Անդրկովկասից ընտրված պատգամավորները դառնալու են Ուսաստանի ֆեդերատիվ հանրապետության պառամենտի անդամներ: 6. Անդրկովկասայան հանրապետությունը բաժանվելու է կանտոնների և համայնքների, որոնք ունենալու են լայն ինքնավարության իրավունքներ: 7. Կանտոնների կազմավորման հիմքում ընկած են լինելու միատարր ազգաբնակչություն ունեցող տարածքները: Կանտոնները կամ գավառներն ունենալու են իրենց օրենսդրությունը: Դպրոցներում կրթությունը տարվելու էր մայրենի լեզվով: 8. Դաշնային հանրապետության մեջ բոլոր ազգերն ու կրոնական փոքրամասնությունները հավասար են լինելու: Վերացվելու են բոլոր դասային և այլ կարգի

արտոնությունները: 9. Բոլոր պաշտոնյաներն ընտրվելու են ժողովրդի կողմից¹:

1906թ. նոյեմբերի 12-ին հրավիրվեց հայ սահմանադիր-ռամկավար (դեմոկրատական) կուսակցության հիմնադիր ժողովը, որը Կովկասի և կովկասահայության վերաբերյալ սահմանեց հետևյալ սկզբունքները.

1. Հասնել նրան, որ Այսրկովկասը ստանա ինքնավար կարգավիճակ, որը պիտի ունենա օրենսդիր մարմին՝ համանդրկովկասյան սեյմ: 2.Հայկական բոլոր հիմնարկությունները վերակազմակերպել ժողովրդավարական հիմունքներով: 3. Հայությունը պիտի ունենա ազատ կուլտուրական ինքնորոշման իրավունք: 4. Կովկասի բոլոր ազգերը պետք է ապրեն համագործակցաբար՝ առանձնակի տեղ տալով մշակութային ասպարեգին²:

Քաղաքական այս խնորումների հիմքերի վրա 1916թ. նորից վիճաբանությունների առարկա դարձավ Այսրկովկասի նոր սահմանագծման հարցը: Հայ հանրությունը դժգոհ էր խառը ազգային կազմ ունեցող վարչական միավորների գոյության փաստից: Հայ գործիչները քաջ գիտակցում էին, որ նման վարչական միավորներով անհնարին էր Այսրկովկասում ազգերի միջև համերաշխություն պահպանել, իսկ ապագայում ֆեդերատիվ պետություն ունենալու գաղափարի իրագործումը փաստացի անհասանելի էր դառնում:

1916թ. տվյալներով Ելիզավետապոլի նահանգում 911.684 մարդ էր ապրում, որոնցից 320.980-ը շիա մահմեդականներ էին (35.2տոկոս), 274.431-ը՝ սուննի մահմեդականներ (30.1 տոկոս), 256.207-ը՝ հայեր (28.1 տոկոս), իսկ 60.056-ը այլազգիներ էին (6.6 տոկոս), որոնց մեծամասնությունը քրիստոնյաներ էին³:

Այդպիսի խայտարղետ ազգաբնակչություն ունեցող նահանգում ցարական կառավարության համար «ղատավորի» կարգավիճակը մշտապես ապահովված էր: Նույն ժամանակահատվածում Ելիզավետապոլի նահանգի կազմում հայտնված Արցախի պատկերն այլ էր: Այստեղ ապրում էր 294.857 մարդ, որոնցից 207.160-ը (70 տոկոս) հայեր էին,

¹ Սյութեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, Պեյրութ, 1976, էջ 326:

² Միմոնյան Հ., նշվ. աշխ., գիրք II, էջ 97:

³ Ուլիբն, Գանձակ-Դարաբաղի վէճը, «Դրոշակ», թիվ 2, 1926, էջ 47:

50.000-ը (16.4 տոկոս)` շիա մահմեղականներ, 25.000-ը (9.1 տոկոս)` սուննի մահմեղականներ, իսկ 12.697-ը (4.5 տոկոս) այլազգիններ էին¹:

Այսրկովկասի հայկական տարածքների ազգագրական դեմքն աղճատումից փրկելու նպատակով 1916թ. հայերը կազմեցին և արքունիք ներկայացրին տարածաշրջանի վարչական բաժանման նոր նախագիծ: Ըստ այդ նախագիծ՝ Այսրկովկասի հայկական և միաժամանակ հայբնակ շրջանները կազմելու էին կամ մեկ նահանգ, կամ էլ բաժանվելու էին 4 փոքր նահանգների՝ Երևանի, Լեռնային Գանձակի կամ Ղարաբաղի, Ալեքսանդրապոլի և Կարսի: Այս նորմուտեցումը ենթադրում էր Այսրկովկասի արևելյան հատվածը բաժանել Երևու մասի՝ հայկական և թաթարական: Հայկական մասի մեջ, բացի Երևանի նահանգից, մտնելու էին Գանձակի նահանգի Ղազախ, Գանձակ, Ջևանշիր, Շուշի գավառների Լեռնային մասերը և ամբողջ Զանգեզուրը: Գանձակ քաղաքը բաժանվելու էր Երևու մասի՝ հայկական և թաթարական: Թիֆլիսի նահանգից Ախալքալաքը, Լոռին և Ծալկայի հայկական մասը միացվելու էին Ալեքսանդրապոլի նահանգին²:

Թեպետև այս նախագիծը ռուսական կառավարության կողմից հավանության արժանացավ, սակայն կյանքում չիրագործվեց:

Այսպիսով, 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին ծավալված իրադարձությունները հայ հանրության հասարակական, քաղաքական շրջանակներին համոզեցին, որ ինչպես Թուրքիայի, այնպես էլ ցարական Ռուսաստանի համար խորթ է ազգային պետականության, նոյնիսկ ինքնավարության ամեն մի ձգտում: Հայ ժողովրդի լավագույն զավակները հասկացան, որ համազգային նշանակության հիմնահարցերը միայն ու միայն կարելի էր լուծել միասնականությամբ և ողջ հայության գործուն մասնակցությամբ: 20-րդ դարի սկզբներին առաջին գործնական քայլերը կատարվեցին հայության համախմբման, ուժերի մեկտեղման և այդ ամենը նպատակառուղման համար: Այդ նոր կուտակումները հանգեցրին ազգային պետականության վերակերտմանը:

¹Գիլիլյանդամեան Ա., Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմությունը, մաս Ա, Փարիզ, 1943,էջ 259:

²Նոյն տեղում:

Ամփոփում

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին ծավալված իրադարձությունները հայ հանրության հասարակական, քաղաքական շրջանակներին համոզեցին, որ ինչպես Թուրքիայի, այնպես էլ ցարական Ռուսաստանի համար խորթ է ազգային պետականության, նույնիսկ ինքնավարության ամեն մի ծգուում: Հայ ժողովրդի լավագույն զավակները հասկացան, որ համազգային նշանակության հիմնահարցերը միայն ու միայն կարելի էր լուծել միասնականությամբ և ողջ հայության գործուն մասնակցությամբ: 20-րդ դարի սկզբներին առաջին գործնական քայլերը կատարվեցին հայության համախմբման, ուժերի մեկտեղման և այդ ամենը նպատակառուղման համար: Այդ նոր կուտակումները հանգեցրին ազգային պետականության վերակերտմանը:

Процесс национальной консолидации армян в начале 20 века

Վագրամ Բալаяն

Резюме

Ключевые слова: армянин, Карабах, Россия, Турция, борьба, объединение, освобождение, царизм, страна, организация, насилие, власть.

События 19-го и начала 20 в. убедили общественные, политические круги армчнсской общественности, что как для Турции, так и для царской России чуждо всякое стремление к национальной государственности, даже автономии. Лучшие сыны армянского народа поняли, что задачи общенационального значения можно решить лишь только единством и единственным участием всего армянского народа. В начале 20 в. были сделаны первые шаги по консолидации потенциала армян для достижения основной цели. Все это привело к воссозданию национальной государственности.

The process of national consolidation of Armenians at the beginning of the 20th century

Vahram Balayan

Summary

Key words: armenian, Karabakh, Russia, Turkey, struggle, consolidation, liberation, tasrism, country, organizations, acts of violence, authority.

Events evolved in the 19th and early 20th centuries convinced the social, political circles of the Armenian community that every single desire for national statehood, even for autonomy is very strange both for Turkey and for the Tsarist Russia. The best sons of Armenian people have understood that problems of national significance were possible to solve only with unity and with the active participation of all Armenians. At the beginning of the 20th century the first practical steps were taken to unite, to combine their forces and to direct all that. Such accumulations have resulted in the restoration of the State.

1921թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱՌԱՋՔ Կ.ՊՈԼԻՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ԹԵՐԹԻ ԷԶԵՐՈՒՄ¹

Խաչատոր Ստեփանյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խ. Արքյանի անվան ՀՊՄՀ

Բանալի բառեր. «Ճակատամարտ» թերթ, փետրվարյան ապստամբություն, հեղափոխություն, բոլշևիկ, իշխանություն, Հայաստան, գործիքներ, երկիր:

Հայ-թուրքական պատերազմում հայկական բանակի ծանր պարտություններից հետո՝ Բաքվում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 1920թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակի ուղեկցությամբ մտավ Իջևան, որտեղ հայտարարեց դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանի խորհրդայնացման մասին²: Հայ-հեղկունը խոստանում էր խորհրդային Ռուսաստանի օգնությամբ վերականգնել երկրի քայլայված տնտեսությունը և կառուցել նոր կյանք:

1920թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեգրանի և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Համբարձում Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իշխանության խաղաղ անցունը Դաշնակցությունից բոլշևիկներին: Սահմանվում էր իշխանության փոխանցման սկզբունքները, որոնք հիմնականում հետևյալներն էին. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում է ռազմահեռափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստներ և 2 ծախ-դաշնակցականներ, Դաշնակցություն և մյուս ոչ բոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չեն ենթարկվելու կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր խորհրդային Հայաստանի անկախությունը³:

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բոլշևիկյան իշխանությունը ակտիվ պայքար սկսեց այսպես կոչված ժողովրդի թշնամիների դեմ: Դեկտեմբերին ձերբակալվեցին ՀՀ նախկինում կառավարության

¹ Հոդվածը ընդունված է 15.10.14:

² ՀԱԱ, ֆ. 113, գ. 1, գ. 1, թ. 1, 1 շրջ. 2:

³ Խաստիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք» ամսագիր, 1926թ., հոկտեմբեր, էջ 101-102:

անդամներ: Ավելի ուշ ձերբակալբեցին հայկական բանակի 1.000-ից ավելի սպաներ, որոնց ոտքով քշեցին Ալավերդի՝ ճանապարհին նրանցից ոմանց սպանելով, բոլորին ծաղր ու ծանակի ենթարկելով: Այս ձերբակալվածներին ուղարկեցին Բաքվի և Ռուսաստանի բանտեր: Ամխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը:

Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921թ. փետրվարին ապստամբություն սկսվեց բոլշևիկյան իշխանությունների դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան: Բոլշևիկները և կարմիր զորամասերը հեռացան Ղամարլու (Արտաշատ):

Երևանի գրավումից անմիջապես հետո Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե», որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում՝ կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգադրությունները¹: Հայաստանի տարածքի մի մասի վրա վերականգնվեց անկախությունը, որը տևեց մեկ ու կես ամիս:

Բոլշևիկները Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապրիլի 2-ին մտան Երևան: Մայրաքաղաքը ավերածությունից փրկելու և ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար որոշվեց Երևանը հանձնել առանց մարտի: «Հայրենիքի փրկության կոմիտեն», զորքը և մեծ թվով բնակիչներ Բաշ-Գառնի-Դարալազյազ գծով բռնեցին դեպի Զանգեզուր տանող ճանապարհը, այնտեղից էլ անցան Պարսկաստան:

1921թ. Փետրվարյան ապստամբությունը բազմակողմանի քննության ենթարկվեց Կ. Պոլսի «Ճակատանարտ» թերթի էջերում: Պարբերականի 1921-1922թթ. տարբեր համարներում ներկայացվում են ապստամբության պատճառները, ընթացքը, հետևանքները:

Փետրվարյան ապստամբության մասին խոսելիս նախ անհրաժեշտ է քննարկել 1920թ. վերջին իշխանությունը խաղաղ ճանապարհով դաշնակցությունից բոլշևիկներին փոխանցելու հարցը: Իր էջերում «Ճակատանարտ»-ն անդրադառնում է այս խնդրին և նշում, որ Հայաստանի իշխանությունները բոլշևիկներին չդիմադրեցին այն պարզ պատճառով, որ ի դեմս նրանց ընդունում էին ռուսներին: Թերթը գտնում է, որ եթե բոլ-

¹ ՀԱԱ, ֆ. 37, գ. 1, գ. 9, թ. 5, 5 շրջ.:

շնիկների փոխարեն Հայաստան ներխուժեին Ղենիկինի կամ Նիկոլայ 2-րդ ցարի գործերը, «հետեւանքը կը լինէր նոյնը-մերոնք չէին կռուի»¹: Իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իշխանությունը զիջեց բոլշևիկներին, որովհետև Լեգրանը խոստացավ վերանայել Ալեքսանդրապոլի պայմանագիրը ի օգուտ Հայաստանի, օգնել Հայաստանին լուծելու Վրաստանի և Աղբքեջանի հետ սահմանային հարցերը՝ պաշտպանելով մեր երկրի շահերը, վերականգնել երկարուղային կանոնավոր հաղորդակցությունը, Ռուսաստանի Հայաստանին հասցնել տնտեսական օգնություն, Հայաստանում չիալածել մարդկանց իրենց քաղաքական դավանանքների և կուսակցական պատկանելության համար²:

Փաստորեն, իշխանությունը խաղաղ ճանապարհով բոլշևիկներին հանձնելիս, Հայաստանի առաջին հանրապետության ղեկավար գործիչներն ակնկալում էին երկրի համար այն բոլոր խնդիրների լուծումը, որը հանգամանքների բերումով իրենց չեր հաջողվում: Իսկ բոլշևիկ գործիչները խոստացան և պարտավորվեցին շուտափույթ լուծում տալ այդ խնդիրներին: Սակայն բոլշևիկները ոչ միայն ոչինչ չարեցին իրենց ստանձնած պարտավորություններն իրականացնելու համար, այլ ավելի ծանրացրին երկրի վիճակը:

Բոլշևիկների մուտքը Հայաստան իրենց գործադրած քայլերի պատճառով խորը հիասթափություն առաջ բերեց: Այդ հիասթափությունը բագմակողմանի էր: Այս առումով «Ճակատամարտ»-ի խմբագրականը գրում է. «Երկիր փոկելու խոստումներով Երևան թափած Պոլշեւիկները երկու ամսուան ընթացքին աւելի շատ աւերք ու կազմալուծում յառաջ բերին, քան իին թրքական վարչութիւն մը»³:

«Ճակատամարտ»-ի թղթակիցը Փետրվարյան ապստամբության առաջին պատճառ համարում է ոչ միայն բոլշևիկների խոստումը չկատարելը, այլև վերջիններիս բույլ տված սանձարձակություններն ու վայրագությունները: Ապստամբության պատճառների մեջ թերթն առանձնացնում է նաև բոլշևիկների ցույց տված կառավարելու անընդունակությունը: Նրանց մոտ պակասում էր փորձառությունը, քաղաքական հասունությունը: Նրաք կարևորում էին միայն «հեղափոխական գիտակցությունը»⁴:

¹ «Ճակատամարտ», 1922թ., 17 յունուարի:

² «Ճակատամարտ», 1922թ., 17 յունուարի:

³ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922թ., 19 փետրուարի:

⁴ «Ճակատամարտ», 1922թ., 18 յունուարի:

Այսինքն, հայ բոլշևիկ գործիչների համար կանորը ոչ այնքան երկրի խելամիտ կառավարումն էր, որքան հեղափոխության իրականացումը: Մոռանալով ժողովրդին տված իրենց խոստումների մասին, կոմունիստ դեկավարներն ամենուր «հակահեղափոխականություն» էին փնտրում: Կարելի է ենթադրել, որ հեղափոխություն երևույթը ինքնանպատակ էր դարձել Վերջիններիս համար:

«Ճակատամարտ»-ը առանձնակի ուշադրություն է դարձնում բոլշևիկյան այն հետսորաբանությանը, թե իբր տեղի է ունեցել բոլշևիկյան հեղափոխություն: Այս կապակցությամբ թերթը գրում է. «Յեղափոխութիւն չէր, որ կատարից Հայաստանի ներսում, այլ ռուսական բանակն էր, որ դրսից՝ մտցրեց Հայաստան Սովետական իշխանութիւն և գէնքի ուժով հարկադրեց հպատակիլ այդ իշխանութեան»¹: Շարունակելով՝ թերթը նշում է, որ հրաշք կլիներ, եթե Հայաստանում հեղափոխություն լիներ, որովհետև երկրի հասարակությունը դեռ այդքան հասունացած չէր սոցիալիստական հեղափոխություն իրականցնելու համար: Բացի այդ երկրում ապրող զյուղացիությունը և բանվորությունը որևէ հիմնավոր պատճառ չուներ իշխանությունների դեմ հեղափոխության դիմելու համար²: Հայաստանում չկար բուրժուազիա, որի դեմ կարելի լիներ պայքարել: «Հայ աշխատավորութեան իշխանութիւնը չէր, որ հաստատուց հայ երկրի վրայ, այլ օտար ուժի դիկտատուրա», - եզրակացնում է թերթը³:

Փաստորեն, «Ճակատամարտ» թերթը հանգում են այն եզրակացության, որ Հայաստանում տեղի է ունեցել իշխանափոխություն, թեև առանց կովի, բայց խորհրդային Ռուսաստանի ձնշմանք: Իսկ ինչ վերաբերում է բանվորագյուղացիական իշխանության հաստատմանը, որի մասին անընդհատ թմբկահարում էին հայ բոլշևիկները, ապա այն հեռու էր իրականությունից: Հայաստանում իշխանության էին եկել ոչ թե բանվորներն ու զյուղացիները, այլ՝ խորհրդային Ռուսաստանի կամակատար մի քանի արկածախնդիր հայ բոլշևիկներ:

Իշխանությունն իրենց ձեռքը վերցնելուց հետո բոլշևիկները գործնական ոչինչ չարեցին իրենց տված խոստումներն իրականացնելու համար: Դեռևս մինչև Վետրվարյան ապստամբության սկսվելը, 1921թ. հունվարի 25-ին «Ճակատամարտ»-ի խմբագրականում անդրադարձ է արվում եր-

¹ «Ճակատամարտ», 1922թ., 14 յունուարի:

² «Ճակատամարտ», 1922թ., 14 յունուարի:

³ «Ճակատամարտ», 1922թ., 15 յունուարի:

Կիրը ճգնաժամից դուրս բերելու բոլշևիկյան իշխանությունների անկարողությանը. «Առանց երկրին մէջ իրական գետին և զանգուած ունենալու, ռուսական սուհններու հովանաւորութեամբ Հայաստան մտած հայ պօլշեւիկները, հակառակ բոլոր շլացուցիչ յայտարարութիւններուն, չեն կրցած կացութեան տէր դարնալ մինչեւ այսօր, և իրենց աչքեզը յառած կը պահեն դէաի Պաքու Եւ Մոսկուա: Ասոր ամէնէն անվիճելի ապացոյցը այն է, որ իրենց թուրք «ընկերեները տակաւին կը յամառին տեղաւորուիլ Կարսի Եւ Ալեքսանդրաբօլի մէջ, իգտիրի Եւ Նախջենանի կողմերը, աւերելով Եւ թալանելով, աքսորելով Եւ կոտորելով, օղակի մը մէջ սեղմած Հայաստանը, իսկ իրենք գրադած Են քարոզական գործունեութեամբ, քօնունիստական գրականութեան արտածումով Եւ մանաւանդ ներածումով»¹: Այնուհետև թերթը շարունակում է, որ իրենց ձախողումները թաքցնելու նպատակով բոլշևիկները խոսում Են «դաշնակցական դավադրության» մասին: Ըստ թերթի «այդ բոլոր յերիւրանքները ուրիշ նպատակ չունին, եթէ ոչ արդարացնել նախ՝ նորեկներուն ապիկարութիւնն ու անգործութիւնը, որ արդեն իսկ խոր յուսախաքութիւն պատճառած է ժողովուրդին, երկրորդ պատրուակներ ստեղծել եղբայրասպան, քինախնդրական կամ հաւատաքննական հալածանքներու»²:

Այսպիսով, Կ.Պոլսի «Ճակատամարտ» թերթը փետրվարյան ապստամբության հիմնական պատճառ է համարում բոլշևիկների կողմից հայ ժողովրդին տված խոստումները չկատարելը, երկիրը կառավարելու նրանց անձեռնհասությունը: Թերթը առանձնացնում է այն կարևոր հաճագամանքը, որ երկիրը ճգնաժամից դուր բերելու իրենց անկարողությունը կոծկելու նպատակով հայ բոլշևիկները եղբայրասպան կրիվներ էին հրահրում:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ աներկրայորեն առաջնային էին բոլշևիկների իրականացրած անհարկի ծերորբակալությունները իշխանությունը իրենց փոխանցելու առաջին օրվանից սկսած: Ժողովուրդը ծանր էր տանում հատկապես մտավորականության հաղեա հալածանքն ու ծերբակալությունը: Առավել ևս, որ այդ ծերբակալությունները «հիմնավորվում էին այսպես կոչված «հակահեղափոխական» տարրերին ասպարեզից վերացնելու անհրաժեշտությամբ: Իսկ բատնում

¹ «Ճակատամարտ», 1921թ., 25 յունուարի:

² «Ճակատամարտ», 1921թ., 25 յունուարի:

հայտնված մտավորական և զինվորական գործիչների գնդակահարություններն ու կացնահարությունները այլևս սպասելու տեղ չթողեցին:

«Ճակատամարտ»-ի մարտի 2-ի խճբագրականում անդրադարձ է արվում ձերբակալություններին և ձերբակալվածների հանդեպ ցուցաբերված դաժան վերաբերմունքին¹:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ի Վարդան² անունով հոդվածագիրը «Կարմիր Հայաստանի կարմիր օրերը» հոդվածաշարում նշում է, որ Հայաստանի խորհրդային իշխանության առաջին գործը եղավ նախկին կառավարությանը վարկաբեկելը³: «Յեղինմը Օհանջանեանի դաիլիճին անդամները հօչակեց հայրենիքի դաւաճան, և իրանայեց, որ անմիջապես ձերբակալուին», - գրում է հեղինակը⁴:

Վարդանը խոսում է նաև բոլշևիկների կողմից հայ հոգևորականության հալածելու մասին: Վերջիններիս արգելեցին դպրոցներում և մշակութային հաստատություններում որևէ պաշտոն զբաղեցնել: Դպրոցներում արգելվեց նաև Հայոց պատմության, գրականության, Հայաստանի աշխարհագրության ուսումնասիրությունը, մտածելով որ դրանք կարող են ապագա սերունդներին մղել ազգայնականության և «հակայեղափոխականութեան»⁵:

Թերթի 1921թ. մարտի 5-ի համարում խոսվում է փետրվարի 16-18-ին բանտերում տեղի ունեցած կացնահարությունների մասին⁶: «Ճակատամարտ»-ը գրում է, որ կացնահարության համար բոլշևիկներն օգտանգործում էին թաթարներին⁷:

Այսպիսով, «Ճակատամարտ»-ը փետրվարյան ապստամբության կարևոր պատճառների մեջ առանձնացնում է բոլշևիկների իրականացրած ձերբակալությունների, քաղաքականությունը, բանտերում իրականացվող կացնահարությունները: Փաստորեն, Հայաստանի բոլշևիկ դեկավարները, հակառակ իրենց տված խոստումներին, հալածանքներ կիրառեցին դաշնակցական գործիչների նկատմամբ: Այդ հալածանքները

¹ «Ճակատամարտ», 1921թ., 2 մարտի:

² Հոդվածաշարի հեղինակը մինչև 1920թ. հունվարի 30-ը եղել է Հայաստանում և ականատեսն է եղել բոլշևիկյան սարսափների:

³ «Ճակատամարտ», 1921թ., 2 մարտի:

⁴ «Ճակատամարտ», 1921թ., 2 մարտի:

⁵ «Ճակատամարտ», 1921թ., 4 մարտի:

⁶ «Ճակատամարտ», 1921թ., 5 մարտի:

⁷ «Ճակատամարտ», 1921թ., 19 մայիսի:

գնալով ավելի սաստկացան, ինչն էլ գրգռեց բոլշևիկն իշխանությունից դժգոհ երկրի բնակչությանը:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ «Ճակատամարտ»-ը առանձնահատուկ անդրադարձ է կատարում բոլշևիկների բռնագրավումների քաղաքականությանը: Երկարատև պատերազմից, գաղթականության հանգամանքից ծանր սոցիալական վիճակում հայտնված բնակչությունից բռնագրավում և թալան իրականացնելը անհետևանք չեր մնալու: Ընդ որում բռնագրավումների համար բերված բացատրությունները, եթե այդպիսիք լինում էին, որևէ արդարացում չունեին:

Թերթի մարտի 2-ի խմբագրականում ապստամբության պատճառների մասին խոսելիս ևս նշվում է կեղեքումների, բռնագրավումների, հակաբոլշևիկյան գործիչների դեմ դաժան հալածանքի, հայ սպաների աքսորի մասին¹: «Ճակատամարտ»-ը գրում է, որ փոխանակ հոգային Հայաստանի ազգաբնակչության կարիքները, Բոլշևիկները երկրից պարենը տեղափոխում էին Աղրբեջան, այդ թվում Ամերիկայից օգնություն ստացած կաթը, այսուր դեղորայքը²:

Վերևում հիշատակվող Վարդանը գրում է, որ 1921թ. հունվարի 25-ը հեղկոմը հայտարարում է միօրյա խուզարկության օր: «Հրատարակուած էր իրաման մը, որուն համաձայն իրաքանչիլք անձ իրաւունք պիտի ունենար իր մօտ պահելու 1 ամսուան պաշար, այսինքն 1 փութ ալիւր, 2 ֆունտ իւղ եւ այլն: Բայց զարհութելի բան էր այդ խուզարկութիւնը, որ ամբողջ 24 ժամ տեևց: Խուզարկութիւն չէր այդ, այլ թալան. Թալանէն աւելի սոսկալի բան մը: Կամայականօրէն տումերէն առին տարին ինչ որ գտան, մասնաւորաբար իրենց խստութիւնը գործ դնելով արեւմտահայութեան վրայ», - նշում է հոդվածագիրը³: Փաստորեն, բռնագրավումներն իրականացվում էին կամայականութայն ամենաբարձր դրսևորումներով: Գյուղացու ծեռքից խորություն էին պարենի ամենավերջին պաշարը:

«Ճակատամարտ»-ի վկայակոչմամբ բոլշևիկները հայտարարում էին թե «հայ գիւղացիներու իրաւորով» իրենք եկած են ազատելու հայ գիւղացիութիւնը «Դաշնակներու լուծէն»⁴: Իրականում կոմունիստներին ոչ-ոք

¹ «Ճակատամարտ», 1921թ., 2 մարտի:

² «Ճակատամարտ», 1921թ., 5 մարտի:

³ «Ճակատամարտ», 1921թ., 5 մարտի:

⁴ «Ճակատամարտ», 1921թ., 18 մայիսի:

չէր հրավիրել, առավել ևս զյուղացիությունը, ում ձեռքից խլեցին նրա «միակ հարստությունը՝ ցորենն ու անասունները»¹:

Բռնագրավվել են նաև մասնավոր գրադարանները, պատճառաբանելով որ «բուրժուածները» գիրք չեն կարող կարդալ²:

Այսպիսով, «Ճակատամարտ»-ի տեսակետով փետրվարյան ապստամբության հիմնական պատճառներից էին բոլշևիկների հրականացրած բռնագրավումները: Ժողվորդի ունեցվածքի համընդիանուր և անմիտ թալանը բոլշևիկների դեմ հանեց ամբողջ ազգաբնակչության:

Փետրվարյան ապստամբության պատճառներին անդրադարնալիս «Ճակատամարտ»-ը խոսում է նաև Հայաստանում մամուլի ազատության սահմանափակումների մասին: Այս կապակցությամբ թերթը գրում է. «Հայաստանի մէջ լոյս տեսնող թերթերէն ոչ մէկը կ'ապրի այսօր: Պոլշեւիկները մտան չմտան փակեցին բոլոր թերթերը ինչ հոսանքի ալ պատկանէին անոնք,- ինչպէս Հ.Յ.Դաշնակցութեան օրկան Յառաջը, Ժողովրդական կուսակցութեան Ժողովուրդը, Ռամկավարներու Հայաստանի ձայնը, Սոցեալ Դէմոկրատներու Սոցեալ Դէմոկրատը, Ես-Եռներու Սոցիալիստ Յեղափոխականը, զինուորական օրկան Ռազմիկը, Հայկօպի պաշտոնաթերթ Հայաստանի Կօօպէրացիան, և գաղաքաներու մէջ հրատարակուող բոլոր թերթերը: Ոչ միայն փակեցին զանոնք, այլև գրաւեցին անոնց տպարանները, որպէսզի իրենց թերթերը լոյս ընծայեն իոն»³: Փաստորեն, հայ բոլշևիկները բռնություն էին գործադրում նաև մամուլի միջոցների վրա, ինչը նոյնպես խորացրեց Ժողովրդի դժգոհությունը:

Անդրադարնալով 1921թ. Փետրվարյան ապստամբությանը՝ «Ճակատամարտ»-ը մատնանշում է ապստամբության այլ պատճառներ ևս: Օրինակ այն, որ չնայած երկիրը հրչակված էր խորհրդային, սակայն խորհուրդների փոխարեն հեղկոմներն են կառավարում երկիրը՝ 11-րդ կարմիր բանակից եկած հրահանգներով⁴: Թերթի հոդվածագիրը բողոքում է նաև նրանից, որ փակվեցին բոլոր սկաուտական կազմակերպությունները, «մտառզվելով» որ սկաուտները նոյնպես «ազգայնական» են դառնալու⁵: Թերթն անդրադարնալում է այն խնդրին, որ բոլշևիկները վերացնում են բոլոր ընտրովի մարմինները, օր՝՝ խորհրդարանը, և իշխա-

¹ «Ճակատամարտ», 1921թ., 18 մայիսի:

² «Ճակատամարտ», 1921թ., 9 մարտի:

³ «Ճակատամարտ», 1921թ., 8 մարտի:

⁴ «Ճակատամարտ», 1921թ., 9 մարտի:

⁵ «Ճակատամարտ», 1921թ., 9 մարտի:

նությունը հանձնում նշանակովի մարմիններին¹: Գործածությունից դուրս էր մղվում հայերենը²:

Փետրվարյան ապստամբության վերաբերյալ քննարկումներում առանձնակի տեղ է հատկացվում նրա ինքնաբուխ կամ նախապես կազմակերպված լինելու խնդրին: Հիմնական տեսակետն այն է, որ ապստամբությունը եղել է ինքնաբուխ, բոլշևիկյան իշխանությունների վարած անհետատես հակաժողովրդական քաղաքականության անմիջական հետևանք: Հակառակ մոտեցման կողմնակիցները պնդում են, որ անկախ բոլշևիկների վարած սխալ քաղաքականությունից, ապստամբությունը նախապես ծրագրվել է: Այս կապակցությամբ «Ճակատամարտը» գրում է, որ Դաշնակցությունը ցանկություն չուներ ապստամբություն կազմակերպելու: «Ենթադրել, որ այդ սարսափելի պարտութենէն (Քեմալականներից կրած պարտության մասին է խոսքը – Խ.Ս.) ընդամենը երեք ամիս յետոյ որևէ մէկ կամնոյնիսկ մի քանի կուսակցութիւններ կրնային կազմակերպել ամբողջ ժողովուրդը և մղել զայն դէպի արիւնոտ պայքար թշնամիի մը դէմ, որուն ուժը անհամեմատ աւելի մեծ է քան քէմալի ուժը, և որուն կիրարկած պայքարի ձեւերը պակաս դաժան չեն քան թրքական բարբարոսութիւնները, ենթադրել այդպիսի բան մը, կը նշանակէր գերազնահատել կուսակցութեան դերը, կը նշանակէր վերագրել մէկ կուսակցութեան կամ նոյնիսկ բոլոր կուսակցութիւններուն այնպիսի ուժ և կազմակերպական հանձար, որպիսին անոնք իրականին մէջ չունէին», - գրում է թերթը³: Թերթն ավելացնում է նաև, որ դաշնակցականների մեծ մասը բանտարկված էր, և ժողովուրդն ինքը բնազդական շարժումով ոտքի ելավ⁴: Այսպիսով, կարելի է ընդունել, որ փետրվարյան ապստամբությունը միմիայն հետևանք էր հայ բոլշևիկների վարած դաժան քաղաքականության, ապստամբությունը նախապես չի ծրագրվել: Այ բան է, որ հանգամանքների բերումով Դաշնակցական մի շարք աչքի ընկնող գործիչներ իրենց ձեռքն են վերցրել ապստամբության դեկավարումը:

Անդրադառնալով ապստամբության հետևանքներին «Ճակատամարտ»-ը գրում է, որ ապստամբությունից հետո խորհրդային իշխա-

¹ «Ճակատամարտ», 1921թ., 3 մարտի:

² «Ճակատամարտ», 1922թ., 17 յունուարի:

³ «Ճակատամարտ», 1921թ., 24 մայիսի:

⁴ «Ճակատամարտ», 1921թ., 24 մայիսի:

նությունները փոխեցին իրենց վերաբերմունքը, տեղի ունեցան պաշտոնանկություններ, նոր եկած պաշտոնյաները ավելի մեղմ քաղաքականություն սկսեցին վարել¹: Թերթն անդրադառնում է նաև Լենինի 1921թ. ապրիլի 14-ին նամակին², որտեղ Լենինը մեղմ քաղաքականության կոչ էր անում³:

Ամփոփում

Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի 1921-1922 թվականների բազմաթիվ համարների քննության են Ենթարկվում 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառները, ընթացքը և հետևանքները: Թերթի էջերում վեր են հանվում Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների կողմից կիրառվող ժողովրդահալած քաղաքականությունը, որն ի վերջո հանգեցնում է համընդիանուր ապստամբության: Ապստամբության պատճառների մասին խոսելիս հիմնական մատնանշվում են նախկին կառավարության (Դաշնակցական) անդամների ձերբակալությունն ու բանտարկությունը, հայ բանակի սպայության ձերբակալությունն ու աքսորը, մտավորականության դեմ կիրառվող հալածանքը, գյուղացիության նույնիսկ ամենավերջին ունեցվածքի թալանը: Թերթը կենտրոնանում է նաև արտաքին քաղաքական ոլորտում գրանցված ձախողություններին, մասնավորապես չնայած նախապես իրենց տված խոստումներին, թուրքերին Կարսից, Ալեքսանդրապոլից, հեռացնելուն, Նախշեանի, Ղարաբաղի և Զանգեզուրի խնդիրների հայանպաստ որոշումներ իրականացնելու բոլշևիկյան իշխանությունների անկարողությանը: Անդրադառնալով ապստամբության նախապես կազմակերպված լինելու խնդրին՝ թերթը գտնում է, որ այն իքնաբուխ էր:

¹ «Ճակատամարտ», 1921թ., 25 մայիսի:

² «Ճակատամարտ», 1921թ., 1 յունիսի:

³ Լենին, ԵԼԺ, հ. 43, էջ 237-240:

Отражение Февральской революции 1921г. на страницах константинопольской газеты “Чакатамарт”

Хачатур Степанян

Резюме

Ключевые слова: газета "Чакатамарт", февральское восстание, революция, большевикская власть, Советская Армения, деятели, страна.

Константинопольской ежедневник "Чакатамарт" за 1921-1922гг. упомянул о февральской революции 1921г. в Армении. Говоря о причинах восстания газета отмечает, что эти в основном связаны с неправильной политикой большевикской власти. Применение политику арестов, конфискации и преследования, уничтожение армянской армии и офицеров, неспособность решения обещенных проблем с соседями лидерами большевиков в Армении, принуждали народу в вооруженную восстанию.

Касаясь на последствии восстания "Чакатамарт" ценит тот факт, что армянский народ очередной раз доказал свою готовность боротся за свои права, в результате чего смягчена большевикская антисемитская политика в Армении.

Reflection of 1921 February rebellion in Costantinopolis's "Chakatamart" Daily

Khachatur Stepanyan

Summary

Key words: "Chakatamart" daily, February rebellion, revolution, Bolshevik authorities, Soviet Armenia, statesmen, country.

Daily "Chakatamart" of Costantinopolis in 1921-1922 refers the issue of February rebellion in Armenia occurred in 1921. Mentioning main reasons of rebellion Daily mainly points out wrong policy of Bolshevik authorities. Policy of arrests, confiscations and persecutions by the Armenian Bolshevik authorities, annihilation of Armenian army and officers, inefficiency to solve problems promised the neighbors prompted the nation to military rebellion. Speaking of implications of rebellion "Chakatamart" emphasizes the willingness of Armenian nation to struggle for their rights. According to Daily "Chakatamart" persecution policy towards people in Armenia has mitigated.

1918-1920 թթ. ԱՐՑԱԽԵԱՎԱՆ ԳԻՄԱԿԱՐՅԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄ ԱՊՐԵՁԱՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ¹

Արմինե Առստամյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱրԴՀՀ

Բանալի բառեր. Լեռնային Ղարաբաղ, պատմագիտություն, Կեղծարանում, փաստեր, խեղաթյուրում, նվաճողական, քաղաքականություն, արցախահայություն, վիճելի տարածք, աշխատություն:

1918-1920 թթ. հայ-ադրբեջանական լարված հարաբերությունները կողմերի միջև եղած սահմանային խնդիրների հետևանք էին: Հայաստանի Հանրապետությունը մտադիր չէր հրաժարվել Նախիջևանի, Զանգեզուրի, Ղարաբաղի և հայկական մյուս տարածքների նկատմամբ ունեցած իր հրավունքներից, իսկ Ադրբեջանը հայկական տարածքները բռնակցելու Ճանապարհին դիմում էր ցանկացած քայլի: Ադրբեջանի հակահայ քարոզչական մեքենան ջանքեր չի խնայում Կեղծարանելու պատմական փաստերն ու իրողությունները, ծուռ հայելու մեջ ներկայացնելու հայտնի դեպքերն ու շարադրել դրանք սեփական հորինված սցենարով: Պատմական փաստերի կեղծարաննան, բացահայտ թշնամանքի և ատելության ոգով է շարադրված Ալյոն Բալաեվի «Ադրբեջանական ազգային շարժումը 1917-1918թթ.»², «Մարտյան իրադարձությունները Ադրբեջանում 1918թ.»³, Իլդար Նիֆտալիեվի «Ադրբեջանական ԽՍՀ-ն հայերի զավթողական պլաններում (20-րդ դարի 20-ական թթ.)» աշխատությունները⁴: Բալաեվի աշխատություններն աչքի են ընկնում փաստերի բացահայտ խեղաթյուրմամբ: Սխալված չէինք լինի, եթե ասենք, որ այդ միտումն ադրբեջանցի պատմաբանի մոտ հասնում է զավեշտական մակարդակի: Բալաեվը իր աշխատության մեջ նշում է, թե 1918թ. Ադրբեջանի մուսավաբական հանրապետության հոչակումից հետո ամենաբարդ Հայաստանի Հանրապետության հետ հարաբերություններն էին: Քողարկելով Ադրբեջանի նվաճողական հավակնությունները, բացահայտ ագրեսիան Հայաստանի հանրապետության նկատմամբ վերոհիշյալ հեղինակն անհիմն մեղադրանքներ է ներկայացնում հայկական կողմին՝ կեղծելով իրականությունը ստերի անվերջ շարանի ներքո: Ամենազա-

¹ Հոդվածը ընդունված է 10.11.14:

² А., Азербайджанское национальное движение 1917-1918гг., Баку 1998.

³ Балаев А., Мартовские события 1918 года в Азербайджане, Баку 2009.

⁴ Нуфталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армии(20-е годы 20-ого века),Баку, 2010.

Վեշտալին էլ այն է, որ հեղինակը դեպքերը ներկայացնում է այնպես, որից միամիտ ընթերցողի մոտ կարող է տպավորություն ստեղծվել, թե հայերն անշնորհակալ գտնվեցին ադրբեջանցիների կատարած «բարեգործությունների հանդեպ»: Այսպես, Բալաեվը գրում է, որ 1918թ. Հայաստանի Հանրապետության անկախության հրչակման պահին հայ ժողովուրդը մայրաքաղաք չուներ: Ադրբեջանական կողմը ցանկանալով օգնել հարևան ժողովրդին՝ Երևան քաղաքն ադրբեջանական ազգային խորհրդի 1918թ. մայիսի 28-ի որոշմամբ գիծում է հայերին: Սակայն «անշնորհակալ հայերը» չբավարարվելով դրանով՝ ներկայացնում են տարածքային նոր պահանջներ Ադրբեջանին¹: Հայաստանի առաջին հանրապետությունն հրչակվեց քաղաքական ծանր պայմաններում, երբ հայ ժողովուրդը կենաց ու մահու պայքար էր մղում թուրքական նվաճողների դեմ, երբ Սարդարապատում վճռվում էր հայ ժողովրդի լինելիության խնդիրը, երբ վտանգն անմիջականորեն սպառնում էր Հայաստանի սրտին՝ Այրարատյան նահանգին ու նրա կենտրոն հայոց հինավորց Էրեբունի-Երևանին: Այդ ինչպես են ադրբեջանցիները հայերին կառավարական որոշմամբ նվիրել Երևանը, երբ իրենք դեռ պետություն չեն ստեղծել, երբ անմիջականորեն Երևանն գրավելու համար մուսավարականներին դաշնակից թուրքերը սպառնում էին գրավել այն, ու միայն մայիսյան հերոսամարտերում հայ ժողովրդի ցուցաբերած աննկուն կամքն ու հերոսական պայքարը փրկեց հայությանը և վերականգնեց հայոց պետականությունն ու ծնունդ տվեց Հայաստանի առաջին հանրապետությանը: Բալաեվը գրում է, որ հանրապետության հրչակման առաջին իսկ օրերից հայկական կողմը բացահայտ թշնամական կեցվածք է ընդունում Ադրբեջանի նկատմամբ՝ տարածքային հավակնություններ ցուցաբերելով զուտ ադրբեջանական հողերի՝ Նախշնանի, Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Անհիմն կերպով առանց որևէ ապացույց մեջբերելով ադրբեջանցի հեղինակը հայկական բուն պատմական հողերը հրչակում է ադրբեջանական: Անհասկանալի է նաև Բալաեվի կողմից այն պնդումը, թե Հայաստանի առաջին հանրապետությունն հրչակվեց ադրբեջանական հողերի վրա: Միտումը պարզ է. ադրբեջանական հայտարարել տարածաշրջանը՝ Ելմելով մուսավարական նվաճողական նկատառումներից ու սնվելով պանթուր-

¹ Балаев А. Азербайджансское национальное движение 1917-1918 гг. Баку 1998, стр. 106.

քիզմի հետադիմական ու ոճրագործ գաղափարախոսությունից, սակայն անհասկանալի է պատմաբանի կեցվածքն այն տեսակետից, որ իր կողմից առաջ քաշված դրույթներն ներկայացված են առանց որևէ իհմնավորման: Քանզի, եթե նույնիսկ որոշ ադրբեջանցի կեղծարարներ ամեն ինչ ադրբեջանական հայտարարելով, այսպես ասած, փորձում են դա «իհմնավորել» իրենց վերագրած ալբանական արմատներով, ապա Բալաեվը իր ազգի ներկայացուցիչների համար չի փնտրում ալբանական արմատներ, դեռ ավելին նույնիսկ դեմ է «ադրբեջանցիներ» անվանը, համարելով, որ ճիշտը «ադրբեջանական թուրքեր» արտահայտությունն է: Մի էթնիկական հանրության պատմագիտության ներկայացուցիչներ, որոնք դեռ չեն կարողանում կողմնորոշվել, թե ովքեր և ինչ արմատներ ունեն իրենք, որդեգրել են հանցավոր մի միտում ոչ միայն քաղաքականության մեջ, այլև պատմագիտության ոլորտում՝ «սեփականաշնորհել» հայ ազգի պատմությունը, նրա ազգային տարածքը, ձեռք մեկնել և խեղաթուրել այդ ազգի պատմությունն, որը հիրավի համաշխարհային պատմության մեջ ունի իր կայուն տեղը հինավորց արմատներով ու մշակութային ժառանգությամբ: Բալաեվը գրում է, թե Անդրանիկը 1918թ. ամռանը ներխուժեց Զանգեզուր և վերջնագիր ներկայացրեց ադրբեջանական ժողովրդին, կամ Ենթարկվել Հայաստանի հանրապետության կառավարությանը, կամ էլ մաքրել Զանգեզուրը: Սակայն Ադրբեջանի ժողովուրդը մերժեց այս պահանջը: Ըստ Բալաեվի Անդրանիկի գործը Զանգեզուրում ոչնչացրել է շուրջ 115 ադրբեջանական գյուղ: Այնուհետև իբր Անդրանիկի ինտրիգներն էին պատճառը, որ Ղարաբաղի բնակչությունը սկսեց հանդես գալ Ադրբեջանի իշխանությունների դեմ: Փաստորեն Բալաեվը հորինում է պատմություն, որով հայկական կողմի պատմական իրավունքներն իր պապենական հողերի նկատմամբ ժխտելով, նրան ներկայացնում է որպես ագրեսոր, մուսավարական-ներին ներկայացնում հայոց հողերի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքով: Վերջինս նշում է, թե իբր ադրբեջանական իշխանությունների բարի կամքի շնորհիվ է, որ հաջողվեց Լեռնային Ղարաբաղում 1919թ. ամռանը համաձայնության գալ և կնքել միավորման մասին համաձայնություն: Վերջինիս մոտ փաստերի խեղաթյուրումն հասնում է այն աստիճանի, որ գրում է, թե բուն Հայաստանի Հանրապետությունուն էլ ադրբեջանական բնակչությունը մեծամասնություն է կազմել պարզապես հայկական կողմի որդեգրած տակտիկան կայանում էր նրանում, որ հայ-

ծանքների, սպառնալիքների, ձնշումների ներքո ստիպեն աղրբեջանցիներին դուրս գալ իրենց հողերից: Աղրբեջանի խորհրդայնացման վերաբերյալ Բալաեվը գրում է, թե իբր խորհրդային կարմիր բանակը գործում էր դաշնակցականների կառավարության հետ միասին: Բալաեվը իր մեկ այլ գրքում «Մարտյան իրադարձությունները 1918թ.» գրում է, թե հայ և աղրբեջանական ազգային շարժումների միջև էական տարբերություններ կային: Աղրբեջանցի պատմաբանը որն ամենավերջին ծներով կեղծաբանում է փաստերը, գրում է, դաշնակցությունը, որը փաստացի այդ ժամանակ դեկավարում էր ազգային գաղափարախոսությունը, պահանջներ ուներ միանգամայն պատմականորեն աղրբեջանական հողերի՝ նկատմամբ: «Դաշնակցությունը միայն մի երազանք ուներ վերականգնել մեծ Հայքը ծովից ծով սահմաններում», թե «հայկական կողմը մեծ սպասումներ ուներ առաջին աշխարհամարտում ռուսական կողմի հաղթանակի հետ, քանի որ միայն այդ ճանապարհով կարող էին իրականանալ հայերի տարածքային պահանջները», իսկ աղրբեջանական ազգային շարժումն ըստ աղրբեջանցի հեղինակի պայքարում էր Աղրբեջանի ազգային անկախության համար: Պարզ է այն, որ աղրբեջանցի այս հեղինակը ոչ միայն խեղաթյուրում է փաստերը, այլև գրադիւն է պատմաշինարարությամբ, հորինում կեղծ պատմություն: Նախ աղրբեջանական ազգային շարժում գոյություն չուներ, քանի որ նախքան նման շարժում ծագելը պետք է լիներ ազգ իր պատմությամբ և կենսական տարածքով ու հասունացած ազգային ինքնազիտակցությամբ, անհասկանալի է նաև թե ում դեմ էր ուղղված այդ ազգային շարժումը, ովքեր էին սպառնում վերջիններիս ինքնորոշմանը, եթե նոյնիսկ կար այդպիսին, ինչ պահանջներ ունեին իրենք, երբ ընդամենը մուսավաթական կուսակցությունը, համաթուրանական գաղափարախոսության զավթողական նկատառումներից ենելով, ծնունդ տվեց Աղրբեջանական մուսավաթական հանրապետությանը՝ նպատակ ունենալով թուրք-աղրբեջանական կամուրջ ստեղծել՝ այդ ճանապարհին հայտնված հայ ժողովրդի և նրա կենսական տարածքների գրավմամբ: Բալաեվը գրում է, որ հայերի համար խիստ սկզբունքային և կաշուն միտք էր ստացել առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունը: Փաստորեն ըստ աղրբեջանցի պատմիչի հայությունը չափուի ցանկանար իրեն ցեղասպանության ենթարկած, իր պատմական հողերից հայերին քշած «դահձի» պարտությունը և սեփական հողերի, հայրենիքի ազատագրումը: Միաժամանակ

Բալաեվը նշում է, որ հայկական կողմը մեծ չափերի օգնություն էր ցուցաբերում ռուսական կողմին պատերազմը հաղթականորեն ավարտելու գործում: Աղրբեջանցի հեղինակը նշում է, թե հայկական կողմը օգտվում էր Ռուսաստանի ժամանակավոր կառավարության համակրանքից ի տարբերություն աղրբեջանական կողմի: Ընդհանրապես աղրբեջանական պատմագիտությանը հատուկ է իրադարձությունները ներկայացնել այնպես, որ ընթերցողին անմիջապես թվում է, թե իրենք զոհ են, իսկ հայերը ջարդարարներ, որոնց նպատակն էր բնաջնջել իրենց: Վերջինս նշում է, թե դաշնակցության և մուսավաթի միջև տարբերությունները կայանում էին նրանում, որ դաշնակցությունը կողմ էր պատերազմը շարունակելուն ռուսների կողմից, ինչու ունենալով, թե այդ պատերազմուն Թուրքիան պարտություն կվոր և հայերին կիաջողվեր իրականություն դարձնել «այսպես կոչված Մեծ Հայքի» ստեղծման գաղափարն ու նաև ցինհկաբար հայտարարում, թե բոլշևիկների իշխանության գալով Մեծ Հայքի ստեղծման գաղափարը ի չիք դարձավ քանի որ վերջիններս դեմ էին պատերազմին, ու քանի որ հայերի ձգտումները արևմուտքուն կապված Թուրքիայի հետ իրականություն չդարձան, ուստի վերջիններս իրենց հայացքն հառեցին Անդրկովկասի վրա: Պատմաբանն այդ մոռանում է, որ արդեն 1917թ. Ղարաբաղում ստեղծվել էր ժամանակավոր կառավարման համակարգ և Ղարաբաղի հայության իրավիրած համագումարների նպատակն էր ընդդիմանալ մուսավարական նվաճողական քաղաքականությանն և ոչնչացման ծրագրերին ու միանալ մայր Հայաստանին: Բալաեվը կեղծելով պատմական փաստերը միաժամանակ ինքն իրեն հակասում է գրելով, թե դաշնակցություն կուսակցության և բոլշևիկների ցանկություններն համընկնում էին և այդ ցանկությունը կայանում էր նրանում, որ Երկուստեք դեմ էին այսպես կոչված աղրբեջանական ազգային շարժմանը և հայերը նախօրոք գինվել էին ու կազմել աղրբեջանական գյուղերի անունների ցուցակները, որոնք պետք է ոչնչացնեին: Ինչքան էլ Բալաեվը իր աշխատությունում փորձում է Աղրբեջանը ներկայացնել որպես զոհ պետություն, և իրավիճակը ներկայացնել այնպես, թե հայերի միակ նպատակն է եղել բնաջնջել աղրբեջանցիներին, այդուհանդերձ իր աշխատության էջերում Բալաեվը կատարում է եզրահանգումներ, որոնք անկախ իրենից բացահայտում են քողարկված ճշմարտությունը: Այսպես աղրբեջանցի պատմաբանը գովերգելով մուսավարական կուսակցության դերը Աղրբեջան պետության

ստեղծման գործում, գրում է, թե մուսավաթական կուսակցության և Երիտրուքերի իթթիհատ կուսակցության միջև կային բազմաթիվ նմանություններ, դեռ ավելին իթթիհատը որդեգրել է մուսավաթի մի շարք դրույթներ: Նշելով մուսավաթի ծրագրային հիմունքները, հեղինակը գրում է, որ թե՛ մուսավաթի և թե՛ իթթիհատի գլխավոր նպատակը մուսուլմանական աշխարհի միավորումն էր և այդ ձանապարհին «խոչընդոտող» արգելքների վերացումը¹: Ասվածից միանգամայն պարզ է, հեղինակը նույնիսկ չի սքորում կուսակցության որդեգրած ազրեվիվ, ծավալապաշտական էությունն և նույնիսկ նշում է, որ թուրքիզմը կուսակցության գլխավոր առանցքային հիմնադրույթն էր: Պանթուրքիզմի հետադիմական և արյունուշտ գաղափարախոսությունը որդեգրած մուսավաթի նպատակը վերջին հաշվով հայ տարրի բնաջնջումն էր: Աղրբեջանում 1918թ. հայասպանության քաղաքականությունը դարձավ նպատակային պետական ծրագիր, որն իրականացվում էր թուրք-թաթարական միավորված ուժերով: 1918թ. սեպտեմբերին թուրքական ոճրագործների կողմից 3 օր շարունակ Բաքվում հայերի սպանդ է իրականացվել, որի ընթացքում դաժանաբար սպանվել են հարյուրավոր հայեր: Իրենք թուրքերը իրականացնելով նման զարդեր հայտնել են, թե իբր դրանով լուծում են նոյն թվականի մարտին Բաքվում իբր հայերի ծեռքով իրականացված աղրբեջանցիների կոտորածը: Ինքը Բալաեվը դա ներկայացնում է որպես հայերի կողմից կատարված ջարդ: Մինչեւ իրականությունն այն է, որ մարտյան այդ դեպքերը տեղի են ունեցել Բաքվի կոմունայի և մուսավաթական գինված ջոկատների միջև և երկուստեղ եղել են զոհեր: Հատկանշական է այն, որ ամեն անգամ թուրք-թաթարական գինված խմբավորումները հայերի նկատմամբ իրենց ոճրագործությունները «արդարացնում էին» իբր որպես վրեժխնդրության լուծում հայերից ի պատասխան նոյն թվականի մարտին աղրբեջանցիների հանդեպ իրականացրած ջարդերի: Մի խոսքով 1918թ. ուրվագծված, արհեստածին Աղրբեջանի հանրապետությունը, պետական քաղաքականություն դարձեց հայոց պատմական հողերի գրավումը, այդ հողերի լիիրավ սեփականատերերի ոչնչացումը: Պանթուրքիզմը հայոց հայրենիքի երկու հատվածներում էլ սպառնում էր ոչնչացնել հայոց տարրը: Աղրբեջանական պատմագիրը խեղաթյուրելով պատմությունը, Աղրբեջանի հանրապետության ստեղծումը ներկայացնում է, որպես աղրբեջանական ազ-

¹ Балаев А. Азербайджанское национальное движение 1917-1918 гг. Баку 1998, стр. 31.

գային-ազատագրական շարժման արդյունք, որպես աղբեջանցիների ազգային ինքնագիտակցության արթնացում¹, որն ինքնին հակագիտական որակավորում է: Այդ կապակցությամբ նույնիսկ հեղինակի մեջբերումները հակասում են ինքն իրեն: Բալաեվը նշում է, թե միանգամայն իրավացի է Ռասուլզադեն (Վերջինս 1918թ. աղբեջանական ազգային խորհրդի նախագահն էր), որն իր հոդվածներից մեկում նշում է թե եթե որևէ աղբեջանցու հարցնես, ինչ ազգի ես պատկանում, կպատասխանի մուսուլմանական, ինչ լեզվով ես խոսում դարձյալ կպատասխանի մուսուլմանական և այդպես շարունակ, ու ավելացնում, որ փաստորեն ինքը՝ աղբեջանցին գուրկ է ազգային գիտակցությունից ու արմատներից և հետևաբար պետականության արմատներից²: Այդուհանդերձ պատմականորեն անարմատ այդ հավաքականության պատմաբան ներկայացուցիչներն իրենց աշխատություններում փորձում են սեփականացնել հայոց հնամենի պատմությունը, հայերին համարել «Եկվոր, նվաճող», հավակնում հայոց պատմական հողերին ոչ միայն վիճելի հայտարարված, այլ ընդհանրապես ողջ Արևելյան Հայաստանի նկատմամբ: Արհեստածին և անարմատ աղբեջանական պետության ստեղծման մասին է վկայում Բալաեվը մեջ բերելով նոյն Ռասուլզադեի մեկ այլ ելույթ արված աղբեջանական պառամենտի նիստում, որտեղ վերջինս նշել է, թե «աղբեջանական իդեալը, որ ծնվել է առաջին աշխարհամարտում (սա այն նոյն իդեալն է, որով Թուրքիան մտավ առաջին աշխարհամարտ՝ այսինքն պանթուրքիզմ-մեջբերումը մերն է՝ Ա. Առատանյան), և որն առաջին քայլն է կատարում քաղաքական կյանքում և այդ նորածին թուրքական քաղաքական մանուկը կդառնա չափահաս, թե կմահանա ինչպես վտիտ մի մանուկ, ահա ամենադժվար, բայց չափազանց կարևոր պատասխանատվությունը, թոյլ չտալ, որ մահանա նորածին Աղբեջանը»³: Աղբեջանական պետության ստեղծման մասին անուղղակի, սակայն դիպուկ մի մեջբերում է կատարում Բալաեվը, նշելով թե գեներալ Թոմսոնը, որը սկզբնական շրջանում չէր ձանաչում Աղբեջանի անկախությունը, ասելով թե «հանրապետություն, որը ծնվել է աղբեջանական ժողովոդի ընդհանուր կամքի համաձայն գոյություն չունի, այլ կա ընդամենը թուրքական ինտրիգների արդյունքում ծնված կառավա-

¹ Բալաև Ա. Ազերбայջանское ..., стр.5.

² Նոյնիք, էջ 17.

³ Նոյնիք, էջ 28

րություն»¹: Ցավոք այս Ճշմարտացի գնահատականից հետագայում անզիհական կառավարությունը հրաժարվեց հովանավոր կանգնելով Ադրբեջանին ընդդեմ հայության արդարացի պահանջների: Ինքը Բալաեվը ևս հասկանում ու նշում էր, որ անզիհական դիվանագիտության փոփոխությունն Ադրբեջանի նկատմամբ, կապված էր վերջինիս հետ ընդդեմ Ռուսաստանի ունեցած շահերով: Նույնիսկ այսպիսի արտահայտություն է անում, թե անզիհացիների վերաբերմունքի այդ փոփոխությունը կապված չէր նրա՝ «ադրբեջանցիների սև աչքերին վիրահարվելու հետ», այլ տնտեսական և քաղաքական շահերն էին պատճառը փոփոխության: Ադրբեջանցի հեղինակը նշում է այստեղ Անզիհայի հակառական կեցվածքը և նավթի գործոնի դերը, որը հիմք հանդիսացավ ադրբեջանա-անզիհական մերձեցման համար: Վերջինս նշում է, թե Թունսոնը հայտարարել է 1918թ. դեկտեմբերի 28-ին, որ ինքը ճանաչում է Ադրբեջանի իշխանությունը և ամեն կերպ օգնելու է նրան: Բալաեվի մոտ Ադրբեջանին, որպես անմեղ զոհ ներկայացնելու ջանքերը հասնում են պարզապես ցինիզմի: Վերջինս նույնիսկ գիտնականին ոչ համարժեք այսպիսի մի համեմատություն է բերում. Նա Ադրբեջանին համեմատում է ընտանիքում մի անպաշտպան և անմեղ մանուկի հետ, որին եղբայրները անընդհատ նեղում և հալածում էին, իսկ ինքը՝ մանուկը համբերատար առանց բողոքելու սպասում է մոր վերադարձին, հուսալով, որ մայրը իրեն կպաշտպանի, սակայն վերադառնալով մայրը լսում է մանուկին հալածած եղբայրների մտացածին մեղադրանքները երեխայի անվայելուց պահվածքի մասին, ու փոխանակ պաշտպանելու, ինքը ևս ծեծում է նրան: Ադրբեջանցի կեղծ պատմաբանը մեջբերելով այսպիսի կենցաղային ոչ տեղին օրինակ, ավելացնում է, թե հայերն էլ ողջ Եվրոպայով մեկ բղավել են, իբր ադրբեջանցիներն իրենց կոտորել են և իբր իրենք բազմիցս տանջված ազգ են և աշխարհը հավատացել է հայերին ու մեղադրել «անմեղ» Ադրբեջանին: Բաքվի սեպտեմբերյան ջարդերի մասին, որին զոհ գնացին շուրջ 30000 հայեր Բալաեվը ոչինչ չի նշում, մինչդեռ այդ մասին ոչ միայն հայկական և օտար աղբյուրներն են վկայում, այլ հենց ադրբեջանական արխիվները²: 1918թ. չնայած Թուրքիայի պարտությանը 1-ին աշխարհամարտում թուրքերը շարունակեցին

¹ Նույնը, էջ 31

² Борьба за победу Советской власти в Азербайджане (1918-1920гг.) документы и материалы, Баку. 1967.

իրենց առաջխաղացումը՝ ձգտելով հասնել պանթուրանիզմի իրականացմանը: Նրանք 1918թ. սեպտեմբերի 15-ին գրավեցին Բաքուն ոչնչացնելով շուրջ 30000 հայեր: Պատմությունը Բալաեվի մոտ անհիմն և հակասական է ներկայացված: Վերջինս փաստորեն փորձելով ադրբեջանական պետության ստեղծումը ներկայացնել որպես ադրբեջանական ազգային ինքնագիտակցության արթնացման արդյունք, ամեն կերպ փորձում է զարգացնել այդ հայեցակարգը, բայց քանի որ դա անհիմն է, ապա իսկույն երևան է գալիս հեղինակի գիտական անկարողությունն այդ հարցում: Նա նշում է, թուրքական կառավարության ջանքերի մասին ուղղված Ադրբեջանի խորհրդայնացմանը, և իրավացիորեն բացատրում դա հետևյալ կերպ, թե որպես առաջին աշխարհամարտում մահվան դատավճռի առաջ կանգնած պետություն՝ Թուրքիան, իր հայացքն ուղղեց դեպի Խորհրդային Ռուսաստան, որն ակնկալում էր Թուրքիայի օգնությունը տարածաշրջանի խորհրդայնացման հարցում և նշում է, որ հովանավորվելով Թուրքիայի կողմից Ռուսաստանը գործողությունների ազատություն ստացավ Ադրբեջանի դեմ: Սակայն Ադրբեջանն ըստ հեղինակի չէր ուզում խորհրդայնանալ և պայքար էր մղում ընդդեմ կարմիր բանակի: Մինչդեռ իրականությունն այն է, որ ի տարբերություն Հայաստանի հանրապետության, որն իսկապես ստեղծված էր ազգային պետականության հիմքերի վրա և որի անկումն իսկապես արդյունք էր քեմալա-խորհրդային մերձեցման և թուրքական հարձակման, Ադրբեջանում խորհրդային իշխանությունը հաստատվեց առանց ներքին դժմադրական պայքարի: Պանթուրանիզմը միավորել էր Ադրբեջանին ու Թուրքիային ու ներքին անհամաձայնություն այստեղ լինել չէր կարող: Ադրբեջանական արխիվում պահպանված ու իրապարակված նյութերից պարզ է դաշնում, որ ադրբեջանական գործիչները, պահը ճիշտ ընկալելով, ընդունել են խորհրդային իշխանությունը նոյն նվաճողական պահանջներով: Ն. Նարիմանովը իր ելույթում կոչ էր անում ընդունել խորհրդային իշխանությունը, քանի որ դա կստեղծի մի այնպիսի իրավիճակ, որով իրենք կիայտնվեն ավելի շահեկան վիճակում: Շահեկան վիճակ ասելով Նարիմանովը նկատի ուներ, որ քեմալա-ադրբեջանական կապը կամրապնդվեր խորհրդաքենալական կապով:

Նկատենք, որ ԱԴՀ կոչվող տարածքում բնակվում էին տարբեր ազգություններ ու էթնիկ խմբեր՝ հայեր, թաթեր, թալիշներ, քրդեր, ռուսներ, ինչպես նաև կովկասյան թաթարներ և այլն: Նրանցից յուրաքանչյուրն ուներ տվյալ տարածքում պատմական ձևավորման և զարգացման իր առանձնահատկությունները՝ բնիկ ու եկվոր, նստակյաց կամ քոչվոր, առկա էին նաև կրոնական տարբերություններ՝ քրիստոնյաներ և մուսուլմաններ, շիաներ և սունիներ: Այդ իսկ պատճառով, «աղրբեջանցի» տերմինը սկզբնապես չէր նշանակում և չէր էլ կարող նշանակել ազգություն, քանի որ որպես այդպիսին այն տվյալ ժամանակահատվածում գոյություն չուներ: «Աղրբեջանցին» էթնանուն չէր, այլ Անդրկովկասի նորաթուխ պետական կազմավորման՝ ԱԴՀ-ի տարածքում բնակվողների ընդհանուր անվանումն էր: Նույնիսկ 1926թ. Խորհրդային Միությունում տեղի ունեցած առաջին մարդահամարի ժամանակ հաշվառված ազգությունների թվում կրկին չկան «աղրբեջանցիները»: Մարդահամարի արդյունքները նշում էին այնպիսի ժողովուրդների մասին, ինչպիսիք էին յակուտները, մորդովացիները, բուրյաթները, վայնախները, պերմյակները, բայց ոչ աղրբեջանցիները: Ցանկում տեսանելի է «թյուրքեր» էթնո անունը, որի անվան տակ մասամբ արձանագրեցին այն, ինչ հետագայում կոչվեց աղրբեջանցի: 1929թ. Թիֆլիսում լույս տեսած «Անդրկովկասը

¹Մ.Աղաջանյան Աղրբեջանի ազգային փոքրամասնությունները. իրավաքաղաքական ասպեկտներ. «21-րդ ԴԱՐ», թիվ 3, 2006թ, էջ 124-25:

թվերով՝ վիճակագրական պաշտոնական տեղեկատույում կրկին բացակայում է «աղրբեջանցի» էթնո անունը¹:

Հետևաբար ազգային հարցը Խորհրդային Աղրբեջանում է ությամբ և բովանդակությամբ էականորեն տարբերվում էր ԽՍՀՄ միութենական մյուս հանրապետություններում առկա ազգային բնույթի խնդիրներից, որն էլ ենթադրում էր ավելի սուր դրսնորումներ:

Ընդհանրապես բազմաէթնիկ հասարակությունները, կազմված լինելով տարբեր էթնիկ խմբերից, այսինքն տարբեր լեզուների, կրոնների, ու մշակույթների կրողներից, որպես կանոն միշտ բախվում են էթնիկ ռիսկի երևույթին: Էթնիկ ռիսկը էթնիկ գործոնի բացասական ազդեցությունն է քաղաքական կայունության վրա²: Սա բավականին լավ գիտակցում էր աղրբեջանական նորաթուխ բոլշևիկ ռեկավարությունը, ուստի ԱղրևՍՀ-ի ծևավորման հենց առաջին օրերից որպես կարևոր պետական քաղաքականության ուղենիշ որդեգրվեց էթնոցիոնը՝ իր բազմաֆունկցոնալ դրսնորումներով հանդերձ, որն իր հերթին ենթադրում էր մոնուէթնիկ հասարակության «կառուցում», որտեղ կա մեկ դոմինանտ էթնոս և փոքրաթիվ փոքրամասնություններ, հետևաբար և էթնիկ ռիսկերի ցածր մակարդակ:

Ուստի հոդվածում մեր գլխավոր խնդիրն է հասկանալ Խորհրդային Աղրբեջանում գոյություն ունեցող ազգային հարցի էությունը և դրա առանձնահատկությունները:

Հաշվի առնելով ԽՍՀՄ գոյության ողջ շրջանում միութենական հանրապետություններից շատերում առկա ազգային բնույթի խնդիրների լուծման ուղղությամբ կենտրոնական մարմինների իրականացրած քաղաքականությունը, որն հաճախ անտեսում էր ԽՍՀՄ տարածքում ապրող ժողովուրդների ազգային շահերը, էթնիկ պատկանելիությունը և պատմական գարգացման առանձնահատկությունները՝ Աղրբեջանական ԽՍՀ-ում ազգային հարցում իրականացվող քաղաքականությունն ուներ բնորոշ առանձնահատկություններ: Դա պայմանավորված էր այդ տարածքում բնակվող ժողովուրդներից շատերի տեղաբնիկություն և «աղրբեջանցի» կոչվող նորահայտ ազգության կողմից նրանց ծովելու, աղրբեջանցիների թվական գերակշռությունն ամեն հնարավոր և անհնարին

¹Հ.Նահապետյան, Ինչպես ստեղծել ժողովուրդ. Աղրբեջանական ինքնության ծևավունան խնդիրը 20-րդ դարում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=7012

²Կ.Պողոսյան, Ա.Միրումյան, Դ.Բարաջանյան «Քաղաքականություն և քաղաքագիտություն» Պրակ գ, Երևան, 2006 էջ 60:

մեթոդներով ապահովելու ուղղությամբ իրականացվող քայլերով։ Եվ պատահական չէ, որ ադրբեջանական բոլոր կարգի ձեռնարկումները հաճահունչ էին պանթեզական գաղափարախոսությամբ։ Հաճածայն որի՝ կառավարությունը «պետք է կորնի բացառապես թուրք տարրին վրա և բացառապես ուժ տա անոր։ Մյուս տարրերը գոյություն չունեին իբրև ուրույն ազգեր, անոնք իրավունքներ չունին։ Պետք է թրքանան կամ կորսվին»։¹

Անդրկովկասը պատմական հայրենիքն է հայերի, վրացիների, արևիազների, լեզգիների, թալիշների, թաթերի, ուղիների և այստեղ հայտնված մյուս ազգությունների և ժողովուրդների, որոնք դարեր շարունակ այստեղ են ապրել²։ Մոնղոլ-թաթարական և թյուրքական ցեղերի ներթափանցումը փոփոխություններ մտցրեցին տարածաշրջանի դեմոգրաֆիական պատկերի մեջ, բայց նրանք երբեք չեն համարվել տեղացի, աբորիգեն ժողովուրդ։ Այս տարածաշրջանում բնիկ ժողովուրդներից հայերի և նրանց պատկանող մի շարք տարածքների նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի իրականացրած քաղաքականությունը հանդիսանում է ուսումնասիրման առանձին նյութ։

Պարզ պատկերացնելու համար Բաքվի գործելակերպը երկրի բնակչության ազգային կազմի վիճակագրական տվյալների (թե Ադր.ԽՍՀ և թե Ադրբեջանական Հանրապետության ազգային քաղաքականության,) հարցում՝ հարկ է հիշեցնել, որ այնպիսի ազգեր և ազգություններ, ինչպիսիք են օսերը, ասորիները, ջեկերը, գնչուները, լաքերը, եզդիները, լատզալները, մարիները և այլք, սկսած 1926 թվականից և շատ երկար ժամանակով անհետանում են Բաքվի պաշտոնական վիճակագրական տվյալներից։ Դե, իսկ թալիշների, քրդերի, խինալուգների, հայերի, ռուսների, հրեաների և այլոց ժողովրդագրությունը բավական պերճախոս վայրիվերումներ ունի, ընդ որում ԽՍՀՄ փլուզումից և տարածաշրջանային դիմակայությունն սկսվելուց դեռ շատ առաջ³։

1921 թ. անցկացված առաջին խորհրդային մարդահամարը ցույց տվեց, որ Խորհրդային Ադրբեջանի 1,85 մլն. բնակչությունից 41,0 հազա-

¹ Զարևանդ, Միացյալ և անկախ թուրանիա: Երևան, 1993, էջ 119:

² Կառուտյան Հ., Արզակ, Գարման, Խաչդշեան-որ եւնայա ֆորմուլա տերրիտորիալիու ցելօստություն Վաստական Արմենիա, Երևան, 2008, ստոր. 42.

³ Ա. Մարգարյան, Ադրբեջանական հանրապետության բնակչության աճի տեմպի և ազգային կազմի մասին, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6319

որ կազմում էին իուդիստ թաթեր, իսկ 91,0 հազարը՝ մուսուլման թաթեր¹, այսինքն ընդհանուր թաթերի թիվը հասել է 132 հազարի, չհաշված քրիստոնյա թաթերին, որոնց թիվը ներկայացված չէ:

Այսպես, ԽՍՀՄ բնակչության 1926թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի՝ «ամենաղենոկրատական և մանրակրկտորեն նախապատրաստված մարդահամարի տվյալներով, որի կազմակերպիչներն ու դեկավարները հանդիսանում էին խոշոր վիճակագիր-գիտնականներ O.Ա. Կվիտկինը, Վ.Գ.Միխայլովսկին և ուրիշները», Աղրբեջանական ԽՍՀ ազգային կազմը ներառում էր 93 ազգ և ազգություն: Ընդ որում, ինչպես հայտնի է, Աղր.ԽՍՀ (որն այն ժամանակ մտնում էր Անդրկովկասյան ԽԴՀ-ի մեջ) տիտղոսակիր ազգերը կովկասյան թաթարներն էին («թյուրքերը») և հայերը: 1926թ. մարդահամարի արդյունքների համաձայն՝ «թյուրքերը» կազմում էին Աղր.ԽՍՀ բնակչության ընդհանուր թվի 63.3%-ը (1.185 մլն մարդ)²:

1926թ. մարդահամարի տվյալների համաձայն թաթերի թիվը հասել է 28,4 հազարի, այնուհետև 1939 թվի վիճակագրությամբ այլևս չեն ներկայացվում, իսկ արդեն 1979 թ. մարդահամարի տվյալներով նրանց թիվը հասնում է շուրջ 9000-ի: 1989 թվին նրանց թիվը հասնում է 10 հազարի, իսկ 1999 թ.-ին՝ 10,9 հազարի³: Թաթերի թվաքանակի հետ կապված նման անհասկանալի տատանումներն ակնհայտ են դարձնում այն հանգամանքը, որ և Խորհրդային Աղրբեջանում, և ներկայիս Աղրբեջանի հանրապետությունում անցկացված մարդահամարները և դրանց արդյունքում ի հայտ եկած վիճակագրական տվյալները չեն արտահայտում ստույգ իրողությունը: Նշենք նաև, որ ոչ պաշտոնական, մոտավոր հաշվարկներով թաթերի թիվը ներկայում Աղրբեջանի հանրապետությունում կազմում է 500-600 հազար⁴: Նշումն է նաև Շահդադի ժողովուրդների (Չեկեր, բուլղարներ, խապուտիներ, խիմալուգներ, կրիզներ) ճակատագիրը: Ինչպես արդարացիորեն նշում է Աշխարհի ժողովուրդների համարագիտարանը, «Շահդադի խմբի ժողովուրդների թվաքանակը կարելի է նշել միայն գնահատաբար, քանի որ Աղրբեջանի պաշտոնական իշխա-

¹ Մուրադյան Ի., Տարы-базовая составляющая азербайджанской государственности, <http://analitika.at.ua/news/>, 30.11.2009.

² Ա.Մարգարյան, Աղրբեջանական հանրապետության բնակչության աճի տեմպի և ազգային կազմի մասին, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6319

³ Մուրադյան Ի., Տարы-базовая составляющая азербайджанской государственности, <http://analitika.at.ua/news/>, 30.11.2009.

⁴ Նշում տեղում:

նությունները նրանց դիտարկում և համարում են որպես աղբեջանցիներ»¹:

Առավել անհասկանալի է թվում թալիշների թվաքանակի հետ կապված վիճակագրությունը: ԽՍՀՄ 1926թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ Ադր.ԽՍՀ-ում ապրում էր 77.3 հազ. թալիշ²: 1937թ. մարդահամարի տվյալներով Ադր.ԽՍՀ-ում ապրում էր 99.2 հազ.թալիշ: Երկու տարի անց, համաձայն ԽՍՀՄ 1939թ. մարդահամարի տվյալների, թալիշների թիվն Ադր.ԽՍՀ-ում նվազում է մինչև 87.5 հազար: Ինչու 1939 թ.-ի մարդահամարի տվյալներով 87,5 հազարի հասնող թալիշները այնուհետ այլևս չեն հիշատակվում մարդահամարներում որպես առանձին ժողովուրդ: Նրանք վերանալ չեն կարող, քանզի նրանց գրադեցրած տարածքում որևէ բնական աղետի կամ կոտորածների վերաբերյալ տեղեկություններ չունենք, պատասխանը մեկն է՝ նրանք սկսում են գրանցվել որպես աղբեջանցի: Թալիշների անհետանալը Ադրբեջանի բնակեցնող ժողովուրդների շարքից «պաշտոնականացրեց» Սովետական Մեծ Հանրագիտարանը, քողարկելով ակնհայտ խեղարյուրումը հետևյալ տողերով. «ԽՍՀՄ-ում թալիշները գրեթե միաձուլվել են աղբեջանցիներին, որոնց նրանք մոտ են նյութական և հոգևոր մշակույթով և առանձնացված չեն 1970 թ.-ի մարդահամարում»³: Դարերի պատմություն ունեցող թալիշների և քոչվոր թյուրքերի հետնորդների՝ նորահայտ աղբեջանցիների միակ ընդհանրությունը կրոնն էր, որը չէր կարող հիմք հանդիսանալ մշակութային միաձուլման համար:

Այնուամենայնիվ, 1989 թ.⁴ Գորբաչովյան «Վերակառուցման» ալիքի ներքո «ձուլված» թալիշ ժողովուրդը կրկին հայտնվում է վիճակագրական տվյալներում: Այդ ժամանակ նրանք թվագրված էին 21,2 հազար, իսկ 1999 թ. տվյալներով թալիշների թիվը հասնում էր 76,8 հազարի⁴: Հասկանալի է՝ 10 տարվա ընթացքում նման քանակական աճ գրանցվել չէր կարող, սակայն կենտրոնական իշխանության որոշակի թերացումը հանգեցրեց այն բանին, որ «ձուլված» թալիշները կրկին սկսեցին արձանագրվել որպես թալիշներ:

¹Народы мира. Энциклопедия. М.: ОЛМА, 2007, с. 129.

²Всесоюзная перепись населения 1926 года, М., Издание ЦСУ Союза ССР, 1928-29. Том 14, с. 11-13.

³Большая Советская Энциклопедия, том 25, Москва, 1976, стр. 237.

⁴Мелик-Шахназарян Л., Азербайджан. Толерантные конгломеры от статистики,
<http://www.yerkramas.org/news/>, 30.11.2009.

1959 թ.-ի մարդահամարի տվյալներով ուղիները ներկայացված են 3202 մարդ¹, 1970 թ.-ին՝ 5492, իսկ 1979 թ.-ին՝ 5841²: Անհասկանալի է՝ ինչպես 100 տարվա ընթացքում ուղիների թիվը ավելացել է մոտ 350-ով, մինչդեռ ադրբեջանցիների թիվը՝ գրեթե մեկ միլիոնով՝ 3776778-ից հասնելով 4708832-ի³: 1989 թ.-ի մարդահամարի տվյալներով ուղիների թիվը Ադրբեջանում հասել է 6000⁴: Ադրբեջանական ուժացման քաղաքականության արդյունքում իրենց պատմական հայրենիքում ապրող ուղիները ներկայում կանգնած են անհետացման իրական վտանգի առջև:

Անդրադարձնանք լեռնային հրեաների թվաքանակի հետ կապված խնդիրներին: Դժվարությունն այն է, որ նրանց թվաքանակը նշվում է կամ եվրոպական հրեաների կամ էլ թաթերի անվան տակ: Հիմնվելով 1959 և 1970 թվերի մարդահամարների տվյալների և տարրեր գնահատականների վրա՝ 1970թ.-ին լեռնային հրեաների թիվը կազմել է շուրջ 50-70 հազար⁵: Ընդ որում 1970 թ. մարդահամարի ժամանակ 17109, իսկ 1979 թ.-ին մոտ 22000 լեռնային հրեաներ գերադասել են անվանել իրենց թաթեր՝ խուսափելու համար կենտրոնական իշխանությունների կողմից հրեաների դեմ ուղղված խտրականության քաղաքականությունից⁶: Սակայն, եթե ուշադրություն դարձնենք, կտեսնենք, որ թաթերը 1970թ.-ին ներկայացված են 7,8 հազարով, իսկ 1979 թ.-ին՝ 8,8 հազարով: Այսինքն՝ թաթերի թվաքանակի արհեստական նվազեցման հետ մեկտեղ չեն գրանցվել տվյալ ժամանակահատվածում իրենց թաթ անվանած հրեաները: Սա իրականության քողարկման ուղղված ադրբեջանական վիճակագրության հերթական դրսերումներից է: Բացի այդ 1989 թ. Ադրբեջանում գրանցվել են 30,8 հազար հրեա, իսկ 1999 թ.-ի մարդահամարի տվյալներով՝ 8,9 հազար: Մինչդեռ եվրոպական «Սոխնուտ» կազմակերպության տվյալներով 1989-99 թթ. Ադրբեջանից հեռացել են շուրջ 31,3

¹ Центральное статистическое управление при Совете Министров СССР. Итоги всесоюзной переписи населения 1959 года. Распределение населения по национальности и родному языку, Аз. ССР, Москва, 1963, таблица 53, стр. 134-135.

² Центральное статистическое управление Азербайджанской ССР. Итоги всесоюзной переписи населения 1979 года по Аз. ССР. Численность населения отдельных национальностей по Аз. ССР в 1970 и 1979 гг., Баку, 1981, таблица 19, стр. 149-150.

³ Սոյմ տեղում:

⁴ Мамедов А., Некоторые аспекты современной этнической ситуации в Азербайджане, <http://www.ca-c.org/journal/>, 30.11.2009.

⁵ Горские евреи-статья на сайте Краткой Еврейской Энциклопедии, <http://lingvoforum.net/>, 25.11.2009.

⁶ Սոյմ տեղում, <http://lingvoforum.net/>:

հազար հրեա¹: Ներկայումս լեռնային հրեաները հաշվվում են մոտ 35000²:

Ինչ վերաբերում է ինգիլոներին, ապա պաշտոնական փաստաթղթերով նման ժողովուրդ նույնիսկ գոյություն չունի. նրանք անցկացված մարդահամարներում ընդհանրապես չեն հիշատակվում: Ներկայումս ինգիլոներիիվ կազմում է շուրջ 10000³, ամեն դեպքում ըստ ադրբեջանական հեղինակներից մի քանիսի հաղորդած տեղեկությունների: Ցավոք, մենք այլ հավաստի տվյալներ չունեն քինզիլոների ստույգ թվաքանակի հետ կապված:

Քրդերի թիվը 40,9 հազարից 13 տարվա ընթացքում կրճատվել է հասնելով 6000-ի: Նման քանակական նվազում անհնար են այն պայմաններում, եթե 20-ական թթ. քուրդ մուսուլմանների առանձին ընտանիքներ տեղափոխվում էին Հայաստանից Ադրբեջան, քանի որ Ադրբեջանում մեծամասամբ մուսուլմաններ էին բնակվում: Հաշվի առնելով, որ 20-ական թթ. կեսերին քրդերի թիվը Հայաստանում և Վրաստանում աճել էր 3,5-ից 4 անգամ⁴, ինչպես նաև քրդերի ծնելիության բարձր մակարդակը՝ նրանց թիվը միանշանակորեն պետք է աճեր, այլ ոչ թե կրճատվեր շուրջ յոթ անգամ: Իսկ, 1979 թ. մարդահամարի «տեղեկագրում Ադրբեջանում քրդերի թիվը չի հիշատակվում», որն ադրբեջանցի տիրահոչչակ պատմաբան Աբասովը պատճառաբանում է ասելով, որ «հավանաբար, հաշվի է առնվել նրանց նվազման միտումը»⁵: 1989 թ. տվյալներով քրդերի թիվը Ադրբեջանում կազմել է ավելի քան 12000 մարդ⁶, մինչդեռ ոչ պաշտոնական, մոտավոր հաշվարկներով նրանց թիվը հասնում է 350-400 հազարի⁷:

Այժմ անդրադառնանք Դաղստանյան ժողովուրդներից լեզգիների, ավարների և ցախուրների վերաբերյալ եղած վիճակագրական տվյալներին: Այսպես, եթե լեզգիների տեսակարար կշիռը 1921 թ. վիճակագրությամբ կազմել է 3,5% (111 հազար մարդ), ապա 1939 թ. կրճատվել է

¹ Մելիկ-Շահնզարյան Լ., Ազերբայջան. Տոլերանтные конгломеры от статистики, <http://www.yerkramas.org/news/>, 30.11.2009.

² Նոյն տեղում, <http://www.ca-c.org/journal/>:

³ Եще раз об азербайджанских курдах, <http://www.ezidxane.ru/>, 30.11.2009.

⁴ Եще раз об азербайджанских курдах, <http://www.ezidxane.ru/>, 30.11.2009

⁵ "Коммунист Азербайджана", 1989, № 2, с. 83.

⁶ Մսաբեկօվ Բ., Становление независимого азербайджанского государство и этнические меньшинства, <http://www.shakarov-center.ru/publications/azrus/>, 30.11.2009.

⁷ Եще раз об азербайджанских курдах, <http://www.ezidxane.ru/>, 30.11.2009.

հասնելով 2,4%ի¹: 1959 թ.-ի մարդահամարի տվյալներով լեզգիները ներկայացված են 98211², իսկ 1970 և 1979թթ վիճակագրական տվյալներով լեզգիները կազմում են համապատասխանաբար 137250 և 158057 մարդ³: Թվում է, որ քանակական աճ է գրանցվել և նրանց վերաբերյալ վիճակագրական տվյալները արժանահավատ են, սակայն էականորեն նվազել է նրանց տեսակարար կշիռը: 1989 թ. տվյալներով լեզգիները կազմում են 171 հազար մարդ, իսկ 1999 թ. տվյալներով՝ մոտ 180 հազար⁴: Չնայած որ լեզգիների տեսակարար կշիռը կրծատվել է հասնելով 2,2%ի, հայ և ռուս բնակչության տեսակարար կշրի կրծատման պայմաններում նրանք իրենց թվաքանակով ներկայումս երկրորդն են աղբբեջանցիներից հետո⁵:

Ինչ վերաբերում է ավարներին, ապա նշենք, որ 19-րդ դարի վերջին ներկայիս Աղբբեջանի հանրապետության տարածքում բնակվել են շուրջ 60000 ավար: ԱԴՀ-ի շրջանում (1918-1920 թթ.) ավարների թիվը նշվում էր 15000⁶: 1959 թ.-ի մարդահամարի տվյալներով ավարների թիվը կազմում է են 17254 մարդ⁷, իսկ 1970 և 1979 թթ. վիճակագրական տվյալներով նրանց թվաքանակը ներկայացված է 30735 և 35991 մարդ⁸: 1989 թ. ավարների թիվը Աղբբեջանում հասնում է 44 հազարի, իսկ 1999 թ.՝ 50,9 հազարի⁹: Անդամական Աղբբեջանի Հանրապետությունում հասնում է մոտ 102,4 հազարի¹⁰: Սա նշանակում է, որ Խորհրդային Աղբբեջանի ասիմիլացիոն քաղաքականության արդյունքում, չնայած ավարների

¹Մսաբեկօք Բ., նշված տեղում, <http://www.shakarov-center.ru/publications/azrus/>, 30.11.2009.:

²Центральное статистическое управление при Совете Министров СССР. Итоги всесоюзной переписи населения 1959 года. Распределение населения по национальности и родному языку, Аз. ССР, Москва, 1963, таблица 53, стр. 134-135.

³Центральное статистическое управление Азербайджанской ССР. Итоги всесоюзной переписи населения 1979 года по Аз. ССР. Численность населения отдельных национальностей по Аз. ССР в 1970 и 1979 гг., Баку, 1981, таблица 19, стр. 149-150.

⁴Մսաբեկօք Բ., նշված տեղում, <http://www.shakarov-center.ru/publications/azrus/>, 30.11.2009.:

⁵Մսաբեկօք Բ., նշված տեղում, <http://www.shakarov-center.ru/publications/azrus/>, 30.11.2009.:

⁶Մելիկ-Շահնազարյան Ղ., Ավարցы Ազերբայջան, <http://www.mitq.org/>, 30.11.2009.

⁷Центральное статистическое управление при Совете Министров СССР. Итоги всесоюзной переписи населения 1959 года. Распределение населения по национальности и родному языку, Аз. ССР, Москва, 1963, таблица 53, стр. 134-135.

⁸Центральное статистическое управление Азербайджанской ССР. Итоги всесоюзной переписи населения 1979 года по Аз. ССР. Численность населения отдельных национальностей по Аз. ССР в 1970 и 1979 гг., Баку, 1981, таблица 19, стр. 149-150.

⁹Մելիկ-Շահնազարյան Ղ., Ավարցы Ազերբայջան, <http://www.mitq.org/>, 30.11.2009.

¹⁰Նշված տեղում, <http://www.mitq.org/>, 30.11.2009.:

աճող թվին, այնուամենայնիվ նրանց իրական թվաքանակը զգալիորեն կրծատված է ներկայացվում պաշտոնական վիճակագրական աղբյուրներում:

Ցախուրների տեսակարար կշիռը 1926 թ. կազմել է ընդհանուր բնակչության 0,7%¹: 1959թ. վիճակագրական տվյալներով նրանց թիվը կազմել է 2876 մարդ², իսկ 1970 և 1979 թթ. մարդահամարի տվյալներով ցախուրների թվաքանակը ներկայացված է համապատասխանաբար 6208 և 8546 մարդ³: Արդեն 1989 թ. տվյալներով ցախուրների թիվը կազմել է 13,3 հազար, սակայն նրանց տեսակարար կշիռը զգալիորեն նվազել էր՝ հասնելով 0,2%-ի⁴, իսկ 1999 թ. մարդահամարի տվյալներով ցախուրների թիվը հասնում է 15,9 հազարի⁵: Նշենք նաև, որոշ պաշտոնական տվյալներով ցախուրների թիվը միայն Չաքաթալայի շրջանում կազմել է 31,9 հազար⁶:

Ինչ վերաբերում է շահդաշտան խմբի ժողովուրդներին, ապա նրանց մասին տեղեկությունները սահմանափակ են: Ձեյովիցի հաղորդած տվյալներով, որոնք քաղված են 1886 թ. ընտանեկան ցուցակներից, շահդաշտան խմբի ժողովուրդների քանակը այսպիսին է՝ բուդուգներ-3420, կրիզներ-7767, խինալիզներ-2315⁷: 1926 թ. մարդահամարի տվյալներով բուդուգները կազմում են 2000, կրիզները՝ 2600, խինալիզները ընդամենը՝ 100 մարդ: 1959 թ. մարդահամարի ժամանակ նրանք չեն հիշատակվում որպես առանձին ժողովուրդներ⁸:

Ստորև ներկայացնում ենք մի գծապատկեր, որը հստակորեն երևում է, որ մարդահամարից մարդահամար հետևողականորեն և անշեղորեն ավելացվում է «ադրբեջանցիների» թիվը Ադր.ԽՍՀ բնակչության կազմում: 1959թ. պաշտոնական տվյալների համաձայն՝ այն կազմել է համ-

¹Մսաբեկով Ռ., *Становление независимого азербайджанского государства и этнические меньшинства*, <http://www.shakarov-center.ru/publications/azrus/>, 30.11.2009.

²Центральное статистическое управление при Совете Министров СССР. Итоги всесоюзной переписи населения 1959 года. Распределение населения по национальности и родному языку, Аз. ССР, Москва, 1963, таблица 53, стр. 134-135.

³Центральное статистическое управление Азербайджанской ССР. Итоги всесоюзной переписи населения 1970 года по Аз. СССР. Численность населения отдельных национальностей по Аз. ССР в 1970 и 1979 гг., Баку, 1981, таблица 19, стр. 149-150.

⁴Մսաբեկով Ռ., Եղված տեղում, <http://www.shakarov-center.ru/publications/azrus/>, 30.11.2009.

⁵Մելիկ-Շահնազարյան Ղ., Աշված տեղում, <http://www.mita.org/>, 30.11.2009.


⁶Գազетա “Черновик”, <http://www.chernovik.net/>, 30.11.2009.

⁷Народы Кавказа (2), под. ред. Б. А. Гарданова, Москва, 1962, стр. 199.

⁸Նոյն տեղում:

բապետության բնակչության ընդհանուր թվի 67%-ը, իսկ ԽՍՀՄ գոյության վերջում, 1989թ. մարդահամարի տվյալներով, «աղբեջանցիների» բաժինն արդեն 83% էր: Նույն ժամանակահատվածում հայ բնակչության բաժինը նվազում է կրկնակի՝ 1959թ. 12%-ի փոխարեն կազմելով 6% 1989-ին¹:

Գծապատկեր



Իսկ, ներկայումս Աղբեջանում ազգային փոքրամասնությունների ձուլումը արագացնելու համար Գիտությունների ազգային ակադեմիայի Տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտում 2010 թ. վերջին մշակվել է «Եթնիկական փոքրամասնությունների ազգանունների վերջավորության փոփոխությանմասին» օրենքի նախագիծ, որը միտված է Աղբեջանում դեռ գոյատևող ազգային փոքրամասնությունների (լեզգիներ, ավարներ, ծախուրներ, թալիշներ, թաթեր, ուդիներ, քրդեր և այլն) ինքնագիտակցության ջնջմանը և նրանց ձուլմանը²:

Ազգանունների թյուրքականացումը միտված է կասեցնելու կովկասյան ու իրանական ժողովուրդների էթնիկ ինքնագիտակցության վերագրաբանքի գործընթացը և ազգանունների վերափոխման միջոցով արագացնելու նրանց ձուլումը:

Այսպիսով, ներկայացված վիճակագրական տվյալները ակնհայտ են դարձնում Խորհրդային Աղբեջանի ազգային հարցի լուծման մեթոդները:

¹Ա.Մարգանյան, Աղբեջանական հանրապետության բնակչության ամի տեմպի և ազգային կազմի մասին, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6319

²<http://www.vesti.az/news.php?id=61188>

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերոհիշյալ ժողովուրդները շարունակում են ապրել նաև ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքում, իսկ ադրբեջանցի միակ համրություն այդպես էլ չի ձևավորվել՝ կարելի է վստահ արձանագրել՝ նման քաղաքական մեթոդները կիրառվում են նաև մերօրյա Ադրբեջանում:

Ամփոփում

Հոդվածը նվիրված է Ադրբեջանական ԽՍՀ-ում առկա ազգային հարցի և դրա լուծման ադրբեջանական մեթոդների դրսնորման գործընթացների ընդհանուրական պատմությանը: Այն դիտարկում է նաև Ադրբեջանական ԽՍՀ-ի գրադերած տարածքում բնակվող էթնիկական տարրեր խնբերի ժողովրդագրական պատկերը և էթնիկ խնբերի նկատմամբ վարվող ադրբեջանական էթնոցիտ քաղաքականության պատճառներն ու հետևանքները:

Этническая мозаика Советского Азербайджана и азербайджанские методы решения национального вопроса

Ваагн Дадаян

Резюме

Ключевые слова: Карабах, этнополитика, национальный, этнический, группа, Азербайджан, демографический, талыши, таты, курды, лезгины, этно имя.

Статья посвящена существующему в Азербайджанской ССР национальному вопросу и истории общих процессов и методов его решения со стороны Азербайджана.

Она также рассматривает демографическую картину проживающих разных этнических групп на территории Азербайджанской ССР и причины и последствия азербайджанской этноцидной политики.

The ethnic mosaic of Soviet Azerbaijan and the Azerbaijani methods of solving national issue

Vahagn Dadayan

Summary

Key words: Karabakh, ethnopolitical, national, ethnic, group, ethno name, Azerbaijan, demographic, Talishs, Tats, Kurds, Lezgis.

The article is devoted to the national issue existed in Azerbaijani SSR and the history of general processes of implementing Azerbaijani methods of its solution. It discusses also the demographic picture of the ethnic groups living in the territory of the Azerbaijani SSR, as

well as, the causes and consequences of the Azerbaijani ethnocide policy conducting towards those ethnic groups

«Հովարդ Կարսագչոջան» ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ¹

Արարատ Վարդանյան

Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
ԱրԴԿ

Բանալի բառեր՝ «Հովարդ Կարսագչոյան» հաստատություն, բարեգործություն, Հայաստանի Հանրապետություն, Ենթային Դարաբարդի Հանրապետություն, առողջապահական, սոցիալական, կրթամշակութային ծրագրերի իրականացում

1988 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ ավելի քան 9 բալ հզորությամբ ավերիչ երկրաշարժ: Այն ընդգրկեց հանրապետության տարածքի 1/3 մասը՝ մեկ միլիոն 130 հազար բնակչությամբ: Ռոպեների ընթացքում լրիվ կամ մասնակի ավերվեցին Լենինականը, Սպիտակը, Կիրովականը, Ստեփանավանը, հարյուրից ավելի ավաններ ու գյուղեր: Ավերվեց հանրապետության ամբողջ բնակչության 17%-ը: Երկրաշարժի գոտում շարքից դուրս եկան ջերմամատակարարման, էներգամատակարարման բոլոր համակարգերը, կապի, տրանսպորտի և կենցաղսպասարկման ծառայությունները: Ավերվեց ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություն: Ծանր վնաս կրեց գյուղատնտեսությունը, քանի վեցին անասնապահական շինությունները, ոչնչացավ անասունների մեծ մասը: Շարքից դուրս եկավ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող 80 ձեռնարկություն: Տարերային աղետը հանրապետության ժողովրդական տնտեսությանը հասցրեց ավելի քան 13 մլրդ ռուբլու վնաս: Պաշտոնական նվազեցված տվյալներով գոհվեց ավելի քան 25 հազար մարդ, 530 հազարը դարձավ անօթևան²:

Երկրաշարժից անմիջապես հետո տարբեր երկուներից հումանիտար օգնության բեռներով Հայաստան էին գալիս օդանավեր, գնացքներ, ավտոմեքենաների շարասյուններ: Համակողմանի օգնությանը մասնակցում

¹ Հոդվածը ընդունված է 24.11.14:

² Սինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2014, էջ 87: Տես նաև Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, պրոֆ. Հր. Ո. Սիմոնյանի խմբ., Եր., 2012, էջ 721-722, Մանուկյան Մ., Երկրաշարժ, Եր., 1989, էջ 3,4,5,6:

Էին աշխարհի 113 երկրներ, բազմաթիվ միջազգային կազմակերպություններ¹:

Երկրաշարժից տուժած Մայր հայրենիքին սատար կանգնեցին սփյուռքահայ կազմակերպությունները, որոնց միջոցները ուղղվել են տուժած շրջանների վերականգնմանը, բնակչության բժշկական օգնությանը և այլ նպատակների: Այդ կազմակերպությունների շարքում նշանակալի է «Հովարդ Կարագյոյան» հաստատության դերը:

«Հովարդ Կարագյոյան» հաստատությունը (ՀԿՀ, կոչվում է նաև «Հովարդ Կարագյոյան հիշատակի ընկերակցություն») բարեսիրական կազմակերպություն է: 1921թ.-ին, Նյու Յորքում հիմնել են Սիրիան և Զապել Կարագյոյանները՝ ի հիշատակ իրենց վաղամեռիկ որդու՝ Հովարդի և կոչել նրա անունով: Սկզբնապես հաստատության նպատակն է եղել հայ որբ, կարիքավոր մանուկների խնամքի, բուժման և կրթության կազմակերպումը: Կարագյոյան հաստատության գործունեության առաջին շրջանը սկսվում է Պոլսում, ուր 1921 թվականի օգոստոսին բացվում է Հովարդ Կարագյոյան Տունը և իր խնամակալության տակ է վերցնում շուրջ 100 դեռատի հայ որբերի: Այն որբանոց էր, բայց կոչվում էր Տուն՝ հայ որբուկների ընտանեկան ջերմություն ու քաղցրություն հաղորդելու միտումով²: Երեք տարի հետո քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով որբերը տեղափոխվել են Ֆրանսիա, որտեղ նրանց են միացել Հունաստանից տարված հայ որբերը: Կազմակերպությունը այստեղ գործել է մինչև 1936-ը՝ կրթություն տալով ու արհեստ սովորեցնելով շուրջ 200 որբերի: 1938-ից ՀԿՀ մանկաբուժական դարմանատներ է բացել Արենքում (նաև կառուցել է բնակարան 50 ընտանիքի համար), Այն շարում և Բեյրութում (Լիբանան), Հալեպում և Կամիջլիում (Սիրիա)³ հատկապես տրախոմայի և մալարիայի դեմ պայքարելու համար: Հետագայում այս դարմանատները վերածվել են ամբողջական սոցիալ-բժշկական կենտրոնների՝ իրենց խնամքը տարածելով նաև տարեցների, դպրոցի և միջավայրի վրա³:

1988 թվականին Սահիտակի երկրաշարժից հետո մինչև 1991 թվականը «Հովարդ Կարագյոյան հիշատակի ընկերակցություն»-ը Հայաստան է առաքել դեղորայք, սնունդ և հագուստ՝ ժամանակավորապես հո-

¹ Սիրիասան Է., նշան, էջ 88:

² The Howard Karagheusian Commemorative Corporation. 75 years of service, New York 1996, p.18

³ Սփյուռքահայ կազմակերպություններ, Եր., 2002, էջ 130:

գալով աղետի գոտու ժողովրդի հոգսերը միաժամանակ, հավատարիմ մնալով մնայուն կառուցներ և շարունակական ծրագրեր իրագործելու իր սկզբունքին, մեկ միջիոն ԱՄՆ դոլար է տրամադրում՝ հիմնելու համար (Հայ Բարեգործական ընդհանուր Սիության հետ համատեղ) Երևանի Վերականգնողական (պլաստիկ) վիրաբուժության կենտրոնը, որն այսօր էլ իրականացնում է իր առողջապահական գործունեությունը «Պրոկտոլոգիա» ինստիտուտում:

1992 թվականի հոկտեմբերին հիմնադրվել և պաշտոնական գրանցում է ստացել Հայաստանի «Հովարդ Կարագյոյան» բարեգործական հասարակական կազմակերպությունը, որի տնօրեն է նշանակվել բժիշկ Կամո Տեր-Պետրոսյանը: Կազմակերպության ծրագրով նախատեսվում էր Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում հիմնել միջազգային չափանիշներին համապատասխանող ժամանակակից սարքավորումներով հագեցած և բարձրորակ մասնագետներով համալրված մանկական ատամնաբուժարաններ՝ հայաստանաբնակ երեխաներին անվճար և որակյալ բուժական օգնություն ցուցաբերելու նպատակով: Մինչև իր բուն ծրագրի կենսագործմանը անցնելը՝ Կարագյոյան ընկերակցությունը հայաստանյան իր կազմակերպության միջոցով 80 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ դեղորայք, բժշկական գրականություն, սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և 400 նավթավառ է հատկացնում Հայաստանի ավելի քան 30 բուժիմնարկների¹:

1993 թվականի ապրիլին Երևանի Նորքի բարձունքում բացվել է Հայաստանի «Հովարդ Կարագյոյան» կազմակերպության առաջին մանկական ատամնաբուժարանը, որն ընդլայնվելով դարձել է կազմակերպության հայաստանյան կենտրոնը և հետագայում զիսավորել նաև մասնաճյուղ ատամնաբուժարանների աշխատանքը: Կարճ ժամանակամիջոցում բացվել են Գյումրի (1995թ.), Գորիսի և Ստեփանակերտի (1996թ.), Երևանի «Սեբաստիա» (1998թ.) և Վանաձորի (2000թ.) Կարագյոյան մանկական ատամնաբուժարանները: Ատամնաբուժությանը զուգահեռ 2000 թվականից ընկերակցությունը Հայաստանում նախաձեռնել է մանկական ակնաբուժության ծրագիր, որը կյանքի է կոչվել

¹ Հովարդ Կարագյոյան հիշատակի ընկերակցությունը Հայաստանում (10 տարի), Եր., 2002,էջ 17-18:

աղետի գոտուց. 2000թ բացվել է Գյումրիի, մեկ տարի անց՝ Վանաձորի Կարագյոյան մանկական ակնաբուժարանները¹:

Երևանի Նորք-Մարաշ համայնքում գտնվող Կարագյոյան կենտրոնը ընդգրկում է մանկական ատամնաբուժական և ակնաբուժական դարմանատներ և գործում է որպես հիմնարկի գրասենյակ Հայաստանի և Ղարաբաղի համար: Կենտրոնը համարվում է ատամնաբուժության մասնագետների վերապատրաստման և որակավորման գլխավոր հաստատություն²:

1992-2001-ին ընկերակցությունը հայաստանյան իր կազմակերպության ծրագրերի իրականացման համար ներդրել է ավելի քան 3 մլն դրամ³:

Պատերազմը ծանր հարված էր հասցրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը: ԼՂՀ-ում տուժել է 149 բնակավայր, լրիվ կամ մասամբ ավերվել են 11647 անհատական տներ, 226 բազմաբնակարան բնակելի շենքեր, 17 ստացիոնար բուժիմնարկներ և 71 բուժկետեր, 196 ուսումնական և մշակութային օջախներ⁴, 8000 արդյունաբերական, գյուղատնտեսական և սոցիալական նշանակություն օբյեկտներ: Երեք անգամ կրծատվել էին ցանքսերը, 5 անգամ՝ անասնագլխաքանակը: Գյուղատնտեսությանը հասցվել էր շուրջ 2,5 մլրդ դրամի վնաս⁵:

Հետպատերազմյան տարիներին հնարավորություն ստեղծվեց գրադարձություն ավերված տնտեսության, կրթամշակութային օջախների վերականգնման և զարգացման հարցերով: Կարելոր էր պատերազմից տուժած բնակչության և հատկապես երեխաների առողջության վերականգնման հարցերը: ԼՂՀ կառավարության անունից առողջապահության նախարարության և ԱՄՆ Կարագյոյան հաստատության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց հանրապետությունում բարեգործական հիմունքներով մանկական ատամնաբուժական կենտրոնների ստեղծման և նրա գործունեության ապահովման մասին: 1996 թվականի գարնանը Ստեփանակերտում հանրապետական ախտորոշման կենտրոնի շենքի առաջին հարկում բացվեց

¹ Հայկական Սփյուռք: Տարեգիրք, Եր., 2009, էջ 143:

² Անկյունաղաքածներ Կարագյոյան հիմնարկի պատմությունը, Նյու Յորք 2011, էջ 17:

³ Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 131:

⁴ ԼՂՀ պետարքին. Ֆ. 180, ց.1, էջ 9, պ.մ.42, թ.222:

⁵ Բալայան Վ., Դրվագներ արցախահպատական ազատազրական պայքարի և պետականակերտուման պատմության. Ստեփ., 2012, էջ 333:

Հայաստանի Կարագյոզյան հաստատության մանկական ատամնաբուժարանը, որի կահավորման և հատուկ սարքավորումների ծախսերն իր վրա վերցրեց կազմակերպությունը: Մանկական ատամնաբուժական կենտրոնը Արցախում առաջին բարեգործական բժշկական հիմնարկությունն է, որտեղ սպասարկումը անվճար է և նախատեսված միայն ու միայն երեխաների համար¹:

2003թ Կարագյոզյան հաստատության կողմից գնվել է նոր շենք, որը գտնվում է Ստեփանակերտի մանկական հիվանդանոցի և պոլիկլինիկայի հարևանությամբ: Այն կահավորված է, հագեցած է ժամանակակից սարքավորումներով, գործիքներով և բուժանյութերով, ունի 2 ատամնաբուժական, մեկ ակնաբուժական (2003թ.), ախտահամման, մեկ պանորամիկ ռենտգեն կաբինետ՝ երևակման սենյակով և գրանցման բաժին: «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական հասարակական կազմակերպության Ստեփանակերտի մասնաճյուղ դարձանատան ատամնաբուժական և ակնաբուժական անվճար որակյալ ծառայություններից օգտվում են Ստեփանակերտ քաղաքի մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ինչպես նաև մերժակա այլ բնակավայրերի հաշմանդամ, երկողմանի կամ միակողմանի ծնողագործ, սոցիալապես անապահով մինչև 14 տարեկան երեխաները:

Բացի երեխաների անվճար բուժումից Կարագյոզյան ընկերակցությունը 2001 թվականից կազմակերպության հայաստանյան ծրագրերում ընդգրկվել է սոցիալական ոլորտում իրականացվելիք մի շարք աշխատանքներ: Նրա ֆինանսավորմամբ իրականացվել է << սոցիալական ապահովության նախարարության Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատան 136մ² ընդհանուր մակերեսով բուժարան-մեկուսարանի հիմնական վերանորոգումն ու կահավորումը, 1600 գծամետր գազատարի տեղադրման, կաթսայատան գործարկման և բոլոր մասնաշենքերում կենտրոնացված ջեռուցման ապահովման աշխատանքները: << սոցիալական ապահովության նախարարության Երևանի Նորքի «Մանկան տան» երկու ննջասենյակով և օժանդակ հարմարություններով, 118մ² ընդհանուր մակերեսով նոր մասնաշենքի կառուցումը: << կրթության և գիտության նախարարության Գորիսի մասնագիտացված գիշերօթիկ դպրոցի 237մ² ընդհանուր մակերեսով ճաշարանի և խոհանոցի հիմնա-

¹ <<ՀՀ Հանրապետություն>>, 28 մայիսի 1996:

կան վերանորոգումն ու կահավորումը, ինչպես նաև տանիքի մասնակի (100մ²) վերանորոգումը: ՀՀ սոցիալական ապահովության նախարարության Գյումրիի «Երեխաների տան» կաթուայտան վերակառուցման, վառարանի և 30 գծամետր ջերմագծերի տեղափոխման, 147 գծամետր գազատարի տեղադրման, բնական գազով կաթսայի վերագործարկման և կենտրոնական ջեռուցման ապահովման աշխատանքները¹: Կառուցվել է նաև վերելակի հորան և տեղադրվել վերելակ²:

Կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվել է Ստեփանակերտի ներարկման կինիկայի շինվերակառուցման աշխատանքը³: Նրա կողմից կատարվել են ԼՂՀ առողջապահության նախարարության հաշմանդամների վերականգնողական կենտրոնի շենքի կցակառույցի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմնան⁴, ինչպես նաև վերականգնողական կենտրոնի վերակառուցման աշխատանքներ⁵: «Հովարդ Կարագյոյան» հաստատությունն Արցախում իրականացրած բարեգործական ծրագրերի համար պարգևատրվել է ԼՂՀ «Երախտագիտության» մեդալով:

«Հովարդ Կարագյոյան» բարեգործական հաստակական կազմակերպությունը բացի ատամնաբուժական և ակնարուժական անվճար ծառայություններից իրականացնում է «Վատ լոտ Երեխաներին լսողական ապարատների անվճար բաշխում» (իրականացվում է 2002 թվականից), «Պարբերական հիվանդությամբ Երեխաների դեղորայքի անվճար բաշխում» (իրականացվում է 2003 թվականից), «Մրտի բնածին արատներով մինչև 7 տարեկան երեխաների անվճար վիրահատություններ» (իրականացվում է 2003 թվականից), «Էպիլեպսիայով հիվանդ երեխաներին դեղորայքի անվճար բաշխում» (իրականացվում է 2004 թվականից) ծրագրերը, որոնցից օգտվել են տասնյակ հազարավոր հայ երեխաներ Երևանից, ՀՀ տարբեր մարզերից և ԼՂՀ-ից:

Կազմակերպությունը 2010 թվականին ֆինանսական օգնություն է ցուցաբերել «Օժանդակություն «Ուսկրածութի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին» ծրագրի շրջանակներում դոնորների հյուսվածքների դասակարգման սարքավորումներ և ռեակտիվ-

¹ Հովարդ Կարագյոյան հիշատակի ընկերակցությունը Հայաստանում (10 տարի), էջ 43-45:

² Հայկական Սփյուռք: Տարեգիրք, Եր., 2012, էջ 118:

³ ԼՂՀ պետարխիվ, Ֆ. 180, գ.1, կ.10, պ.մ.45, թ.69:

⁴ Նոյյն տեղում, Ֆ. 180, գ.1, կ.11, պ.մ.50, թ.33:

⁵ Նոյյն տեղում, Ֆ. 180, գ.1, կ.11, պ.մ.50, թ.14:

Աեր ձեռք բերելու, ինչպես նաև «I և II կարգի հաշմանդամներին սայլակների բաշխում» ծրագրով Երևան քաղաքում և ՀՀ հինգ մարզերում անվճար սայլակներ 110 հաշմանդամներին բաշխելու հանար¹:

Կազմակերպությունն իրականացնում է նաև կրթամշակութային ծրագրի: Կրթամշակութային գործունեության իրականացումը Կարագոյան ընկերակցության հայաստանյան ծրագրերում ի սկզբանե նախատեսված չէր: Այն ամբողջությամբ կազմակերպության հայաստանյան կենտրոնի տնօրեն Կամն Տեր-Պետրոսյանի նախաձեռնությունն էր, որը ընկերակցության նախագահի և վարչության համաձայնությամբ սկսեց իրագործվել 1993 թվականից: Ծրագրի նպատակը Հայաստանում տիրող էներգետիկ ճգնաժամի ժամանակաշրջանում՝ ցուրտ ձմեռների ու խավարի այդ ժանր տարիներին, Երեխաներին փողոցից կտրելն ու մի տաքանյունում և հոգատար միջավայրում գեղագիտական դաստիարակություն տալն էր: Սկզբում բացվում են ձեռագործի և փայտարվեստի խմբակները, ուր թաղամասի 10-15 տարեկան պատանիներն ու աղջիկները հրավիրված մասնագետ-մանկավարժների ղեկավարությամբ, կազմակերպության կողմից ապահովվելով անհրաժեշտ նյութերով ու պարագաներով, «Նորք» կենտրոնում սկսում են յուրացնել ձեռագործի և փայտարվեստի զարտնիքները և մանկական արվեստի հիանալի նմուշներ արարել: Հետագայում, երբ արդեն հաղթահարվել էր ճգնաժամը, կրթամշակութային ծրագիրը ոչ միայն չդադարեց, այլ ավելին, ընդլայնվեց: 1996-ին Եղածներին ավելացավ նկարչականը, ավելացավ խմբերին հաճախող Երեխաների թիվը, տարիքային ստորին շեմը 10-ից իջավ մինչև 5-ի:

Երեխաների աշխատանքները ամենամյա ցուցահանդեսներով ներկայացվում են «Նորք» կենտրոնում: Բացի այդ՝ Երեխաների լավագույն աշխատանքները ցուցահանդեսներով ներկայացվել են նաև Հայաստանից դուրս՝ Բուստոնում, Բուենոս-Այրեսում, Լոս Անջելեսում, Հալեպում² և այլ վայրերում:

Կրթամշակութային ծրագրի շրջանակներում կազմակերպության ջանքերով լույս են տեսել նաև հայ ժողովրդի պատմության ու հայ գրակա-

¹ Հայկական Սփյուռք: Տարեգիրք, Եր., 2010, էջ 134:

² Հովհաննես Կարագոյան հիշատակի ընկերակցությունը Հայաստանում (10 տարի), էջ 40:

նության վերաբերյալ մի շարք գրքեր, որոնք անվճար բաժանվել են Հայաստանի, Արցախի և Սփյուռքի դպրոցներին¹:

«Հովարդ Կարագյոյան ընկերակցության» կողմից Հայաստանի հանրապետությունում և Արցախում իրականացվող վերոհիշյալ ծրագրերը կրում են շարունակական բնույթ՝ նպաստելով հայ երեխաների առողջության պահպաննանը:

Ամփոփում

«Հովարդ Կարագյոյան» հաստատությունը բարեգործական կազմակերպություն է: Հիմնել են Միհրան և Զապել Կարագյոյանները՝ 1921 թվականին, Նյու Յորքում: Նպատակն էր հայ որբ, կարիքավոր երեխաների բուժման և կրթության կազմակերպումը:

1992թ. Երևանում սկսեց գործել հաստատության հայկական կենտրոնը, որը գլխավորեց Գյումրիի (1995թ), Գորիսի, Ստեփանակերտի (1996թ), Վանաձորի (2000թ) մասնաճյուղերի աշխատանքը: Նրանց միջոցով իրականացվում են առողջապահական, սոցիալական, կրթամշակութային և այլ բարեգործական ծրագրեր:

Деятельность фонда “Говард Карагезян” на Родине

Араарат Варданян

Резюме

Ключевые слова: фонд “Говард Карагезян”, благотворительность, Республика Армения, Нагорно-Карабахская Республика, осуществление здравоохранительных, социальных и культурно-образовательных проектов.

Фонд “Говард Карагезян” – благотворительная организация. Основана в 1921г. в Нью Йорке Миграном и Забел Карагезянами с целью лечения и воспитания осиротевших армянских детей.

С 1992 года действует Армянский центр в Ереване с филиалами в Гюмри (с 1995г.), Горисе и Степанакерте (с 1996г.), Ванадзоре (с 2000г), с помощью которых осуществляются здравоохранительные, социальные, культурно-образовательные и другие благотворительные проекты.

¹ Նույն տեղում, էջ 21:

The activity of the Howard Karagheusian Foundation in Homeland

Ararat Vardanyan

Summary

Key words: Howard Karagheusian Foundation, benevolence, The Republic of Armenia, The Nagorno-Karabakh Republic, the fulfillment of health care, social and educational-cultural projects.

The Howard Karagheusian Foundation is a benevolent organization. It was founded by Mihran and Zabel Karagheusian in New York in 1921 with the aim to treat and raise the Armenian orphans.

Since 1992 the Armenian Centres function in Yerevan with branches in Gyumri (since 1995), Goris and Stepanakert (since 1996), Vanadzor (since 2000) which fulfill health, social, educational-cultural and other charitable projects.

**ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՌԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ
ՓՈՒԼԻՆ (1991-1994 թթ.)¹**

Իսկուհի Ավանեսյան

Ասպիրանտ

ԱրԴՀ

Բանալի բառեր - կանայք, համազգային, ինքնապաշտպանություն, նպաստել, պայքար, ազատագրում, անկախություն, հաղթանակ, վիրավորներ, գոհեր:

1991թ.՝ ԽՍՀՄ վիլուգման ժամանակաշրջանում, ԽՍՀՄ օրենսդրության պահանջներին և միջազգային իրավական նորմերին համապատասխան, նախկին Ադրբեյչանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքում ստեղծվեց Երկու պետություն՝ Ադրբեյչանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորների մասնակցությամբ, տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որտեղ ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հրչակման մասին»²: Հռչակագրի ընդունմամբ արցախահայությունը վերահստատեց ազատության համար մինչև վերջ պայքարելու իր վճռականությունը: Կենտրոնը լռելայն ընդունեց սեպտեմբերի 2-ի որոշումը, և դա պատահական չէր, որովհետև իրավական տեսանկյունից այն անթերի էր ու սահմանադրական: Արցախահայության պետականության վերականգնման ձանապարհին հերթական կարևոր քայլ հանդիսացավ 1991թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպված հանրաքվեն, որի ժամանակ հարցման ենթակվածների 99,89 տոկոսն արտահայտվեց ԼՂՀ հրչակման օգտին³:

Ադրբեյչանի դեկավարությունն իրողությունն ընդունեց սրերով: Արհամարիելով իրավական և քաղաքական իրողությունը՝ Ադրբեյչանը 1991թ. նոյեմբերից լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց նորահրչակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ՝ նպատակ ունե-

¹ Հոդվածը ընդունված է 20.10.14:

² «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:

³ Բարյան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականության պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 302:

նալով ոչ միայն ձնշելու նախկին ինքնավար մարզում իրավական առումով որակապես նոր փուլ թևակոխած ազգային-ազատագրական պայքարը, այև, ինչպես նաև իրականացնելու հայ ազգաբնակչությանը բռն տեղահանումը: Օրեցօր ավելի ու ավելի ծավալվող ռազմական գործողությունների պարտադրանքով օրախնդիր դարձավ ԼՂՀ-ում պաշտպանական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Այդ ուղղությամբ ծերնարկվող կազմակերպական միջոցները նպատակավաց, հետևողականորեն իրականացվում էին Հայաստանում և Արցախում համաժամանակ: Արդյունքում՝ մարտական գործողություններին զուգահեռ, սկսեցին կազմավորվել ՀՀ Զինված ուժերը և ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը (հետագայում՝ ԼՂՀ Պաշտպանության բանակը):

1991թ. վերջերին և 1992թ. սկզբներին ԼՂՀ տարածքում կազմավորվեցին 10-ից ավելի վաշտեր ու դասակներ:¹ Դա հնարավորություն տվեց հականարտ ուժերի անհավասարության պայմաններում անհամեմատ կազմակերպված իրականացնել Արցախի ինքնապաշտպանական մարտերը:

Հետզհետե թափ առնող ռազմական գործողություններին սկսեցին անմիջական մասնակցություն ունենալ նաև Արցախի և Հայաստանի Հանրապետությունից հարյուրավոր կին-կամավորականներ: Մասնակցելով ինքնապաշտպանական մարտերին, կանայք տղամարդ զինվորների հետ միասին կիսում էին պատերազմի անասելի դժվարությունները, ապացուցելով, որ իրենց մեջ ապրում է անվեհեր կին ֆիդայու լեզենդար Սոսեի ոգին:

Հիշենք, որ հայ ժողովրդի բազմադարյա պատմության ընթացքում չի եղել որևէ ճակատագրական իրադարձություն, երբ հայ տղամարդու կողքին կանգնած չկանուի հայ կինը: Մեծն Նժդեհն է ասել. «Մայրերի ակերի մեջ պիտի փնտրել ազգի ճակատագիրը»²:

Անգնահատելի էր Արցախյան ազատամարտում հայ կնոջ դերը: Կերևա 1988-1989թթ. հանրահավաքների ժամանակ կամավորական ջոկատներին զինվորագրվելու և ճակատ մեկնելու կոչերին ակտիվորեն արձագանքում էին կանայք՝ համարելով, որ այդ ճակատագրական պահին իրենք ևս պարտավոր են կատարել իրենց պարտքը հայրենիքի առջև, և տեղին է ասել, որ 1991-1994թթ. պատերազմական շրջանում հայ

¹ Հայրաբյան Ա., Հարաբաղյան պատերազմ, Երևան 2001թ., էջ 27:

² Արքահամյան Յ., Մարտնչող Արցախը 1917-2000, հասոր գ. 2007թ, էջ 576

կանայք ուրույն տեղ ու դեր ունեցան ազատամարտիկների շարքերում: Նրանցից շատերը կամավոր մեկնելով ռազմաճակատ, մասնակցեցին մարտական գործողություններին, ինչպես նաև մարտադաշտից վիրավորների տեղահանման ու բուժապասարկման աշխատանքներին: Հարկ է նշել, որ հայ կինը Արցախյան գոյապայքարում իրեն պատասխանատու էր զգում Վտանգված հայրենիքի համար:

Այդպիսին էր նաև Սիրանուշ Առուշանյանը (Աքա): 1989թ., անդամագրվելով Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի «Փառանձեն» կամավորական ջոկատին, նա մինչև գինադադար մասնակցեց մարտական գործողություններին՝ առաջին օրվանից կատարելով ամենատարբեր առաջադրանքներ: Ժամապահ էր, հետախույզ, առաջին գծում մարտնչող ռազմիկ:

1992թ. ամռանն ադրբեջանական ուժերն անցան լայնածավալ հարձակման: Մարտերն ընթանում էին փոփոխական հաջողություններով: Հայկական ուժերը, Հաթերքը կորցնելուց հետո, ստիպված էին ամրանալ Կիչանում: Այդ ժամը օրերին Սիրանուշ Առուշանյանը Հաթերքի ջոկատի հիման վրա կազմավորված ստորաբաժանման հետ էր: 1993-ի ձմռանն ինքնապաշտպանության ջոկատները կարողացան որոշակի դիրքային հավասարակշռություն ստեղծել և անցնել հակահարձակման: Հաթերքի ստորաբաժանումը մասնակցեց Մարտակերտի գյուղերի ազատագրմանը: Հետագայում Սիրանուշ Առուշանյանը գնդի կազմում մասնակցեց 1993թ. փետրվարին Մարտակերտի վերին ծորակի՝ Դրմբոն, Վերին Հռովարդ, Հարությունագոմեր, Վաղուհաս, Չլդրան, Զարդախաչ, Հաթերք, Զագլիկ, Ումությու գյուղերի ազատագրմանը: Նա որպես մարտիկ ակտիվորեն մասնակցում էր բոլոր մարտերին, իր համառությամբ, նվիրվածությամբ ոգեշնչում մարտական ընկերներին: Մարտական գործողությունների ընթացքում երեք անգամ վիրավորվեց, սակայն երկամսյա բուժումից հետո կրկին շարք վերադարձավ և մասնակցեց հայկական գինուժի հաղթարշավին:¹

Յուրաքանչյուր պատերազմում ի հայտ են գալիս վառ անհատականություններ, որոնք դաշնում են այդ պատերազմի խորհրդանիշները:

¹ Վարդումյան Հ., Աստվածների կանչը, Երևան, 2004., էջ48: Սիրանուշ Առուշանյանը 1988-ից սկսած կապ հստատելով Երևանում շարժման մասնակիցների հետ, սկսեց գեներ, զինամքերը տեղափոխել Երևանից Ստեփանակերտ: Այսուհետև, ընդգրկվելով «Փառանձեն» ջոկատի մեջ, մասնակցեց 1991թ. «Օղակ» գործողության ժամանակ 39 հոգուց բաղկացած խորհրդային մի գորազողատի գերեվարմանը:

Արցախյան պատերազմն այդ առումով բացառություն չէր: Այդպիսի անհատականություն դարձավ նաև դարաբաղյան շարժման գործիք Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի դերասանութիւնանա Գալստյանը: Լինելով արցախահայության ազգային-ազատագրական շարժման նվիրյալներից մեկը, մասնակցել է գոյամարտիք գրեթե բոլոր կարևոր ռազմագործողություններին: 1991թ. նա համակարգող խնդիր մի քանի անդամների հետ միասին շրջում էր շրջանները, հանդիպումներ ունենում կամավորական ջոկատների հրամանատարներ հետ, աշխատում ուժերը միավորել մեկ բանակային կառույցի մեջ և զորակոչ կազմակերպել:

1992թ. ամռանն ռազմական իրավիճակը կտրուկ սրվել էր: Այդ ժամանակահատվածում էր, որ ժաննա Գալստյանը նշանակվեց գնդի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ¹: Կազմակերպչական աշխատանքներին զուգահեռ՝ նա զենքը ձեռքին մարտնչում էր որպես զինվոր՝ Բերդաձորում, Մարտակերտում, Հաթերքում, Կիչանում, մարտական գործողությունների մյուս թեժ կետերում

Արցախյան ազատամարտում իր զգալի ներդրումն ուներ նաև աշխարհագորային Հայոց ազգային բանակը՝ ՀԱԲ-ը (գործել է 1989-1990թթ.), որի շարքերը համալրած կանայք (Զենֆիրա Միլիտոնյան, Արևիան Մարտիրոսյան) ոչ միայն որպես շարքային զինվորներ մասնակցել են ռազմական միավորման վարած մարտական գործողություններին՝ ՀՀ Արարատի (Երասխ), Խօսանի Նոյեմբերյանի, Վարդենիսի, Սիսիանի ինքնապաշտպանական մարտերին, այլև զբաղեցրել հրամանատարական պաշտոններ (1990թ. ՀԱԲ-ի հրամանատարի տեղակալ՝ Զովիետա Գյունաշյան): ՀԱԲ-ի լուծարվելուց հետո կանայք ներգրավվել են տարբեր կամավորական ջոկատների կազմեր և մասնակցել ԼՂ-ում ընթացող ռազմական գործողություններին²:

1992թ. ծանր օրերին ստեղծվեց նաև կանանց վաշտ: 1992թ. «Սահտակ» փրկարարների խնդիր բժիշկների ուժերով կազմակերպվեցին առաջին բուժօգնության դասընթացները, որն ավարտելուց հետո 24 իզուր բաղկացած խումբը Շուշիի ուսումնական կենտրոնում անցավ

¹ Նոյմ տեղում. էջ 67: Դեռևս 1988-ին ժ. Գալստյանը ընդգրկված էր շարժման ճախսածեռնող խմբի մեջ և ժողովրդական հոգումներին ընթացք տարու համար ակտիվ մասնակցություն էր ունենում ցույցերի, հանրահավաքների կազմակերպմանը, ինչպես նաև ընդգրկվում Մոսկվա մեկնող պատվիրակության կազմում:

² «Հոսարար», թիվ 32-33, հունվարի 30, 2011:

նախնական գինվորական պատրաստվածության: Սակայն կանանց գումարտակ չկազմավորվեց: 1992 թվականի դեկտեմբերին ինը հոգուց բաղկացած խումբը (Մարգարիտա Սարգսյան, Կարինե Դանիելյան, Եվգենյա Առստամյան, Գայանե Առստամյան, Անահիտ Պետրոսյան, Անահիտ Թամրազյան, Վարդուհի Գևորգյան, Մարգարիտա Թառանյան, Արեգա Սարգսյան) նտավ 8-րդ վաշտի կազմ: Նրանք որպես բուժքույր-ազատամարտիկ մասնակցեցին Արցախի տարբեր շրջանների ազատազրական և ինքնապաշտպանական մարտերին: Նրանց մարտական հաշվի մեջ գրանցվեցին տասնյակ թշնամական կյանքեր և տասնյակ հայ մարտիկների փրկված կյանքեր: Ընդգրկվելով Շուշիի գնդի կազմ, նրանք անցան ողջ պատերազմը: Հետագայում այդ վաշտի հիման վրա ստեղծվեց 5-րդ գումարտակը:

Նոյնիսկ գինադադարի հաստատումից հետո մասնակցեցին Կարմիրավանի համար մղվող վերջին մարտերին¹:

Կանանց վաշտը, գտնվելով ռազմաձակատի առաջնային գծում, դիմակայեց թշնամուն և հաղթահարեց բոլոր դժվարությունները: Վաշտը Շուշիի 8-րդ մոտոհրաձգային գումարտակի կազմում մասնակցեց Լաշինի (Իվյակ, Թազաքենդ), Մարտակերտի (Դոմբոն, Գետավան, Չլդրան, Կիշան, Կարմիրավան), Հաղորդի (Խծաբերդ), Ֆիզուլի (Հորադիզ), Ղուբաթլուի, Աղդամի (Բոյահմեղլի, Սոֆոլու) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին, որի ընթացքում ունեցավ զոհ (Մարգարիտա Սարգսյան) և վիրավորներ (Կարինե Դանիելյան, Եվգենյա Առստամյան):²

Կանայք ամենուրեք կամավորագրվում էին ԼՂՀ-ի և ՀՀ-ի ինքնապաշտպանական ուժերին՝ որպես ազատամարտիկ և բուժաշխատող: Ընդգրկվելով «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդի կազմ, նրանք (Կարինե Հովսեփյան, Մելսիդա Հարությունյան, Մարիետա Սարգսյան, Արմինա Նալբանդյան) մասնակից դարձան գնդի վարած ռազմական բոլոր գործողություններին՝ Գորիսի, Սիսիանի, Ստեփանակերտի (Կրկժան), Լաշինի, Քարվաճարի, Շուշիի, Մարտակերտի, Շահումյանի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:³

¹ «Ազատ Արցախ», 09.05.2009:

² Հայրաբարյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. համբագիտարան, 2004թ. Երևան, էջ 277-290

³ Նոյն տեղում:

Արժանավայել հաղթահարելով պատերազմի ծանր փորձությունը, նրանք սատար կանգնեցին մարտական ընկերներին և փրկեցին բազմաթիվ վիրավոր ազատամարտիկների:

Պատերազմը հաղթական ավարտին հասցնելու և նորաստեղծ հանրապետության կայացման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն Շուշիի ազատագրումը և շրջափակման ճեղքումը: Այդ կարևոր իրադարձությունների բովում հայտնված կանանց (Անուշ Ավագյան, Հասմիկ Բաղդասարյան, Մանուշակ Սարգսյան, Ֆլորա Հակոբջանյան, Զուլիրա Հայրապետյան, Սվետլանա Աբրահամյան, Տանյա Առստամյան, Մելսիդա Հարությունյան, Աղավնի Սահակյան, Համեստ Օհանյան, Շուշանիկ Աբրահամյան), մասը որպես ազատամարտիկ միացան ինքնապաշտպանական ջոկատներին, իսկ մի մասը կամավոր համալրեց բժշկական ջոկատը, որն ուներ մի նպատակ՝ վիրավորներին ցուցաբերել առաջին բժշկական օգնություն հենց մարտի դաշտում:

1992-ի մայիսի 7-ի գիշերը սկսվեց Շուշիի ազատագրման ռազմագործողությունը: Երկու օրվա մեջ հայ ռազմարվեստի փայլուն դրսերման և ազատամարտիկների անկոտրում կամքի շնորհիվ ազատագրվեց Շուշի բերդաքաղաքը, որին մասնակցեցին նաև կին ազատամարտիկները:

Հարկ է նշել հայ կամավորական ուժերի՝ «Արծիվ 24» գումարտակի (Նունե Աբրահամյան, Անահիտ Լոպոյան), «Գարեգին Նժդեհ» (Զարուհի Բադայյան), Էջմիածնի (Հեղինե Բդյան, Մարիետա Քալաշյան), «Մայիս» (Գայա Գյուրջյան, Լորետա Գյուրջյան), Ղազանչի (Ալվարդ Շելյան), Ուխտաձորի (Էլլա Խաչատրյան), Հաղբութի (Մելանյա Սաֆարյան, Էմնա Թունյան, Ժենյա Մովսիսյան, Սվետլանա Զավադյան, Լյուդմիլա Մայիլյան, Մանյա Գրիգորյան, Մարինե Բաղդասարյան), Փրջանալի (Նոյենգար Սարաջյան), Թաղասերի ջոկատի (Էլլա Գասպարյան), Բալուջայի (Վայա Վանեսյան, Զոյա Դանիելյան), Խրամորթի (Լենա Շամիրյան), «Աղանա» (Ալվարդ Կոստանդյան), «Սիսակ» (Մարիետա Խաչատրյան), «Տոռոզյան» և «Նաիրի» (Սուսաննա Կոստանդյան), «Անահիտ» (Անահիտ Մարտիրոսյան), «Մխիթար սպարապետ» (Արևիան Մարտիրոսյան), «Աղբյուր Սերոբ» (Նաիրա Սահակյան), «Եղմիկներ» (Արմինա Նալբանդյան), Ստեփանակերտի կոնդենսատորների (Վարդուհի Գևորգյան), «Աշոտ Երկաթ» (Անահիտ Վարդանյան), «Խաչակիրներ» (Անժելա Զայյան), «Վահրամ Պահլավունի» (Արմինե Սանթրոսյան), «Կարս»

(Նվարդ Դուդուրյան), Արմավիրի (Լոլիտա Վարդանովա), Սևանի (Ամսելա Հակոբյան) և «Զորավար Անդրանիկ» (Մարիետա Սարգսյան) ջոկատների կազմում ընդգրկված կանանց մասին, որոնք պատերազմի ողջ ընթացքում մասնակցեցին բոլոր ռազմագործողություններին: Նրանց անմիջական մասնակցությամբ ջոկատները հրականացրեցին ԼՂՀ Մարտակերտի, Մարտունու, Հաղորութի, Քաշաթաղի, Քարվաճառի, Աղդամի, Շուշիի, Ասկերանի, ինչպես նաև ՀՀ Արարատի (Երասխ), Վայքի (Բարձրունի), Գորիսի (Կոռնիձոր, Շուշնուխ), Կապանի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերը:¹ Նրանք որոշակի դերակատարություն ունեցան պատերազմի ողջ ընթացքում: Մարտի դաշտում հերոսացան ու առավել ևս՝ իրենց ներկայությամբ հերոսության մղեցին տղամարդկանց: Նրանցից ոմանք զոհվեցին (Նունե Աբրահամյան՝ «Արծիվ-24» գումարտակից, Հեղինե Բոյադյան, Մարիետա Քալաշյան, Ոուզաննա Եսայան՝ Էջմիածնի կամավորական ջոկատից, Ամսելա Զայյան՝ «Խաչակիրներ» ջոկատից, Նաիրա Սահակյան՝ «Աղբյուր Սերոբ» ջոկատից, Լոլիտա Վարդանովա՝ Արմավիրի ջոկատից) և վիրավորվեցին (Մելսիդա Հարությունյան՝ «Մեծն Տիգրան» ջոկատից, Անահիտ Մարտիրոսյան՝ «Անահիտ» ջոկատից) Արցախյան ազատամարտում՝ անձնական օրինակով ապացուցելով, որ հայ կինը կարող է լինել նաև հայրենիքի գինվոր:

1992թ. դրությունը ռազմաճակատում շարունակում էր մնալ ծայրահեղ լարված: Այդ ընթացքում (օգոստոսի 15-ին) ստեղծվեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեն (ՊՊԿ), որի նախագահ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը²:

Պատերազմական գործողությունների պայմաններում իշխանության նմանօրինակ կենտրոնացումը մեկ մարմնի մեջ արդարացված էր: Իր ստեղծման առաջին իսկ օրվանից ՊՊԿ-ն եռանդուն քայլեր ծեռնարկեց բանակը կազմակերպական տեսանկյունից մի կուռ համակարգի վերածելու ուղղությամբ: ՊՊԿ նախագահի հրամանագրով ԼՂՀ տարածքը բաժանվեց վեց պաշտպանական շրջանների:³

Օրվա պահանջներին համապատասխանեցվեցին պաշտպանական շրջանների մարտական կազմն ու կառուցվածքը, որտեղ ներկա էին նաև

¹ Նոյյն տեղում:

² «Մարտիկ», 26 հունվարի-1փետրվարի, 1995 :

³ Բաղայամ Վ., Ցշվ.աշխ. էջ318:

Կանայք: Համալրելով Կենտրոնական պաշտպանական շրջանի տարբեր ստորաբաժանումները՝ կին-ազատամարտիկները և կին-բուժաշխատողները (Նույն Արայան, Ստալինա Ասրյան, Անուշ Ավագյան, Ֆլորա Հակոբյանյան, Զուլսրա Հայրապետյան, Անյա Հակոբյան, Վայա Մեհրաբյան, Արինա Գրիգորյան, Ալվարդ Բաղդասարյան, Ելլա Աղաջանյան, Լյուդմիլա Սարինյան, Էլմիրա Աղայան, Սվետլանա Գրիգորյան, Էլմիրա Առաքելյան, Ալվինա Խաչատրյան, Ժենյա Հարությունյան, Գայանե Պողոսյան, Վայա Հակոբյան, Ժաննա Նասիբյան, Մարինա Մարտիրոսյան, Գայանե Ավետիսյան, Արդա Բադալովա, Մանյա Պետրոսյան, Մարինե Պետրոսյան, Կարինե Պետրոսյան, Անժելա Գալստյան, Լյուդմիլա Օվչարենկո, Լիանա Աբրահամյան, Հասմիկ Առաքելյան, Նաիրա Գևորգյան, Ելենա Թարխանյան, Էմնա Սարգսյան, Ռայա Գրիգորյան, Վերա Թեոսյան, Անահիտ Աբրահամյան, Ստելա Բաղդասյան, Սոնյա Մարտիրոսյան) նույնպես մասնակից դարձան 1992-1994թթ. տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերին՝ հյուսիսային ուղղությամբ կազմակերպված հակահարձակողական ռազմական գործողությանը, Քելբաջարի ռազմական հենակետի վնասազերծմանը, Մարտակերտի, Աղդամի ռազմական գործողություններին, ինչպես նաև Հորադիզի, Զանգելանի, Օմարի լեռնանցքի ռազմական գործողություններին¹:

Անբողջ ռազմական գործողությունների ընթացքում կանայք ևս իրենց պատասխանատու են զգացել երկրի համար ճակատագրական օրերին, և նույնպես Կենտրոնական պաշտպանական շրջանն ունեցավ գոհեր (Անուշ Ավագյան, Ստալինա Ասրյան) կանանց շարքերում:

1993-ի փետրվար-մարտ ամիսներին մարտական գործողությունները նոր թափով վերսկսվեցին Մարտակերտի շրջանի տարածքների հետագա ազատագրման և Աղրբեջանի զինված ուժերի Լաշին-Քելբաջարյան խմբավորման ջախջախման ուղղությամբ: Հայկական ուժերի ճնշման տակ հակառակորդն ստիպված էր թողնել Լաշինի և Քելբաջարի տարածքները: Այդ ժամանակ Հաղորդության և Մարտունու պաշտպանական շրջանների գորանասերը, դիմագրավելով հակառակորդի կողմից ձեռնարկված հարձակման բոլոր փորձերը, անցան հակահարձակման, որի ընթացքում էլ հաջողություններ արձանագրվեց, որի ընթացքում բանա-

¹ Արդյունագիտական կենտրոնի արխիվ, ֆ.2, ց.1, գ.1, պմ1, թ.1-3: Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. համբագիտարան, էջ277-290:

կային ստորաբաժանումներում ծառայող կանայք նույնապես ոչ պակաս կարևոր դեր ունեցան:

Կարևոր է հիշատակել Հադրութի և Մարտունու պաշտպանական շրջանների կազմում ծառայող կանանց մասին, որոնք որպես ազատամարտիկ և բուժքույր ստորաբաժանումների կազմում մասնակցեցին մի շարք ռազմագործողությունների՝ Մարտակերտի, Աղդամի, Լաջնի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:¹

Մարտի դաշտում նրանց պահվածքը հիացմունք ու պաշտամունքի հասնող պատկառանք էին առաջ բերում, ինչը բարձրացնում էր նրանց բարոյական ոգին: Կանանց ներկայության շնորհիվ ստեղծվում էին օհնվորական կոլեկտիվներ՝ ընդունակ կատարելու ամենաղժվար մարտական առաջադրանքները:

Դեպքերից առաջ ընկնելով, նշենք, որ Արցախի համարյա բոլոր գյուղերում նախապատերազմյան շրջանում ձևավորված ինքնապաշտպանական ջոկատներ ընդգրկվելուց բացի, կանայք նաև մեծ ակտիվությամբ զբաղվում էին գյուղատնտեսությամբ՝ սնունդ մատակարարելով ինքնապաշտպանական ջոկատներին: Նման ընթացքը շարունակվեց նաև պատերազմի ողջ ընթացքում: Այդ ժամը տարիներին դիմացավ հայ կինը՝ իր ուսերի վրա տանելով անասելի դժվարություններ:

Պատասխանատվությամբ և պատրաստվածությամբ էին ծառայում Ասկերանի, Մարտակերտի պաշտպանական շրջանների կազմերում ընդգրկված կանայք:

Ուզմական գործողությունների ողջ ընթացքում Ասկերանի պաշտպանական շրջանում ընդգրկված կանայք (Թամարա Նազարյան, Տանյա Առստամյան, Ալլա Արզումանյան, Սվետլանա Հովսեփյան, Գայանե Գաբրիելյան, Լյուդմիլա Մելքոնյան, Քանաքարա Ղարայան, Ռոզա Հարությունյան) մասնակցեցին գորամասերի մարտական գործողություններին՝ Ասկերանի, Շուշիի, Մարտակերտի, Աղդամի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Նույն ոգով էին կանայք ծառայում նաև Մարտակերտի պաշտպանական շրջանում (Գայանե Մարգարյան, Լիանա Մկրտչյան, Արկիկ Սարգսյան, Սվետլանա Աբրահամյան,

¹Արթէ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ.2, գ.1, պմ1, թ.1-3: Մաճա Գրիգորյան, Մարիելա Քալաջյան, Աղվարդ Արայիան, Արեգա Առատամյան, Իրինա Գրիգորյան, Էլենորա Աղարելյան, Այհնա Նասիբյան, Ռոզա Մուսայելյան, Աղետա Աղվայան, Անժելա Արգումանյան, Ռիտա Այրինյան, Սերգ Բարայան, Թամարա Բարյան, Արեգա Բարյան, Արգիշտիա Բարյան, Լարիս Խավադյան, Միջիա Բարյան, Անժելա Զամայյան, Վերա Հարությունյան, Մարգո Ազարյան, Սելմայա Սարգսյան, Հասմիկ Օհանջանյան, Ռայա Ավագյան:

Վայա Պետրոսյան, Գայանե Մեժլումյան, Թամարա Աբրահամյան), որոնք ևս մասնակցեցին պաշտպանական շրջանի վարած բոլոր մարտական գործողություններին՝ ԼՂՀ հյուսիսային տարածքների ազատագրմանը:¹ Նրանց շարքերում եղան զոհեր (Գայանե Մարգարյան՝ Մարտակերտի պաշտպանական շրջան, Քանաքարա Ղարայան, Ռոզա Հարությունյան՝ Ասկերանի պաշտպանական շրջան) և վիրավորներ (Թամարա Նազարյան՝ Ասկերանի պաշտպանական շրջան, Թամարա Աբրահամյան, Գայանե Մեժլումյան՝ Մարտակերտի պաշտպանական շրջան):²

Նման հերոսուիկներ ծնեց Արցախյան հերոսամարտը, որոնք եկան համալրելու նվիրյալների շարքը և հայրենիքի համար օրհասական պահին գենք վերցնելով՝ կանգնեցին ազատամարտիկների շարքերում:

Ազատամարտում առանձնակի եռանդ ցուցաբերեցին նաև զինվորական հոսպիտալի կին բուժաշխատողները: Ժամանակի թելադրանքով 1992-ի հունվարին ստեղծվեց կամավոր բուժաշխատողների խումբ (հիմնադիր՝ Վ.Մարության): Նրանք սկզբում թվով մի քանի տասնյակի էին հասնում և քաղաքացիական բժշկությունից միանգամից ոտք դրեցին ռազմական բժշկության ասպարեզ: Այնուհետև ստեղծվեցին ռազմադաշտային շարժական հոսպիտալներ, որոնք հետևում էին ինքնապաշտպանական ուժերին, իրագործում բուժօգնությունը դաշտային պայմաններում: Հոսպիտալների կին-բուժաշխատողները (Անժելա Հարությունյան, Լիդա Աղաբեկյան, Սվետլանա Աբրահամյան, Արևիկ Անդրյան, Արմիդա Ավանեսյան, Ավագարդ Բաղդասարյան, Անժելա Գրիգորյան, Անյուտա Թադևոսյան, Զուլիկետա Խաչատրյան, Գայանե Հայրապետյան, Անժելա Հարությունյան, Ալիդա Ղուլյան, Գայանե Տոնոյան, Համեստ Օհանյան, Ռոզա Դադյան, Օֆելյա Սարգսյան, Ժենյա Արստամյան, Թամարա Դանիելյան, Էմնա Աբրահամյան, Հայրիկյան Զուլիկետա, Գայանե Տոնյան, Գյուլզորա Գևորգյան, Նաիրա Խսրայելյան, Լյուդմիլա Իզմայլյան, Ռայա Գրիգորյան) պատերազմի տարիներին անհնարինը դարձնում էին հնարավոր՝ փրկելով հարյուրավոր զինվորների կյանքեր: Մարտական գործողությունների ամենավճռական ու թեժ պահերին նրանց մասնակցությամբ դաշտային հոսպիտալներում կատարվում էին բարդ վիրահ-

¹, «Ազատ Արցախ», 04.05.2003:

² Արդ՝ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ.2, գ.1, կազ1, պմ1, թ.1-3: Վարդումյան Հ. , Աշվաշյան, էջ14-152:

տություններ: Կանանց անմիջական մասնակցությամբ ստեղծվեցին երեք բաժանունքներ՝ Վերակենդանացման, Վիրահատման, Վիրակապման: Ընդ որում, այդ բաժանունքները Կենտրոնական զինվորական հոսպիտալի կայացման գործում առանցքային նշանակություն ունեցան¹:

Ազատամարտի տարիներին հայկական ինքնապաշտպանական ուժերի կողմից շարունակ մշակվում և իրականացվում էին ոչ սանդարտ բնույթի մարտական ռազմագործողություններ, որոնք շատ հաճախ շփոր և խուզապ էին առաջացնում հակառակորդի ձամբարում:

1993-ի օգոստոսին ռազմական գործողությունները նոր թափով վերսկսվեցին: ԼՂՀ Պաշտպանության բանակը ոչ միայն կասեցրեց թշնամու հարձակումը, այլև սրմնաց գրոհով շրջափակման մեջ առավ ադրբեջանական խմբավորումները (Հորադիզ): Այսպես աշնանային գորաշարժի ժամանակ ազատագրվեց դարերի ընթացքում հայ ժողովրդից այս կանային ճանապարհով խված պապենական հողերի մի հատվածը: Իրանի և ԼՂՀ-ի միջև Արաքս գետը դարձավ միջպետական սահման:

Հարկ է նշել, որ հայկական ուժերը, հակահարձակման անցնելով նախկին ԼՂԻՄ հարակից շրջաններում, նպատակ ունեին ԼՂՀ-ի համար ստեղծել անվտանգության գոտի: Քննարկելով ռազմական գործողությունների ընթացքը, տեսնում ենք, որ ամեն անգամ մի նոր շրջան էր ազատագրվում՝ ադրբեջանական գրոհները կասեցնելուց և պատասխան գործողություններ իրականացնելուց հետո: Ռազմավարական նշանակության շրջաններն ազատագրելով՝ ապահովվեց խաղաղ բնակչության անվտանգությունը: Այստեղ ևս արժե անդրադառնալ այն կանանց, ովքեր ամբողջ այս իրադարձություններին եռանդուն, անձնվեր մասնակցություն ցուցաբերեցին:

Քննարկելով կանանց մասնակցությունը ռազմական գործողություններին, հարկ է հիշել նաև նրանց, ովքեր լրացրին ազատագրական պայքարի ելած կամավորների շարքերը և որոնց մարտական ուղին անցավ մի քանի կամավորական ջոկատների, տարբեր գնդերի հետ: Նրանք (ժենյա Սարոյան, Անուշ Տեր-Թալյան, Կարինե Գևորգյան, Աղավնի Սահակյան, Շուշանիկ Թամարազյան, Աղավնի Տեր-Ստեփանյան, Կարինե Աղաբեկյան, Նազիկ Ամիրյան, Ալվարդ Վարդանյան, Նարինե Առաքելյան, Հեղինե Բդոյան, Մարիետա Սարգսյան, Կարինե Աղելյան, Սվետլա-

¹ «Մարտիկ», 13-20.01.2012:

նա (Լենա) Ավագյան, Սվետլանա Եսայան, Շուշանիկ Թահմիզյան, Հեղինե (Զեմնա) Հովհաննիսյան, Ելենա Մարտիրոսյան, Աիդա Սերոբյան, Նարինե Սահակյան, Ալվարդ Վարդանյան, Արմինե Սարգսյան, Գոհար Դունամայան, Վեհանուշ Այվազյան, Հերմինե Հյարապետյան) հայտնվում էին այնտեղ, որտեղ հարկավոր էր լարել ողջ ուժերը, գերմարդկային կարողությունները ձեռք բերել՝ հասցնել կատարելու ծանր ու պատասխանատու գործը: Գնում էին առաջին գիծ ոչ միան որպես ազատամարտիկ, այլ նաև բուժքույր և դաշտային պայմաններում ցուցաբերում առաջին օգնությունը: Նրանք ևս մասնակցեցին Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի, Աղդամի, Լաշինի, Հաղորդի, Քելբաջարի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Անցնելով ամբողջ ռազմաճակատի երկայնքով, ունեցան զոհեր (Աղավնի Սահակյան, Աղավնի Տեր-Ստեփանյան, Ալվարդ Վարդանյան, Նարինե Առաքելյան, Հեղինե Բդոյան, Մարիետա Սարգսյան) և վիրավորվերներ (Ժենյա Սարոյան, Կարինե Աղելյան)¹:

1993թ. նոյեմբերի 29-ից սկսած, ռազմական բոլոր հատվածներում՝ Օմարի լեռնանցքից մինչև Արաքսի ափերը, աղբբեջանցիները վերսկսեցին մարտական գործողությունները և մինչև 1994թ. հունվարի կեսերը որոշակի հաջողություններ ունեցան: Սակայն փետրվարի երկրորդ կեսին սկսվեցին հակառակորդի քելբաջարյան խմբավորման ոչնչացման ռազմագործողությունները: Աղբբեջանի ծմեռային արշավանքը ծախողվեց, որն էլ ստիպեց հարևան հանրապետության ղեկավարներին նստել բանակցությունների սեղանի շուրջ: Նոր տարածքներ կորցնելու վտանգը իրական ու շոշափելի էր:

1994թ. մայիսի 5-ին ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի միջնորդությանք Կիրգիզիայի մայրաքաղաք Բիշքեկում ԱՀ-ն, ՀՀ-ն և ԼՂՀ-ն ստորագրեցին հրադադարի մասին համաձայնագիր²:

Այսպես, ԽՍՀՄ և միջազգային իրավական նորմերի շրջանակներում հիշակված պետության՝ ԼՂՀ նկատմամբ 1991թ. վերջերից Աղբբեջանի կողմից սանձազերծվեց լայնամասշտար զավթողական պատերազմ, որը ոչ միայ վտանգեց ԼՂՀ գոյությունը, այլև դրեց արցախահայության լինելու հարցը: Արցախահայությունը, ի մի բերելով իր ներուժը, Հայաստանի Հանրապետության և սիյութքահայության աջակցությամբ իրեն

¹ «Մարտիկ», 1-8.04.2006:

² Բալայան Վ., Ցշվաշչու Էջ327:

պարտադրված պատերազմում հասավ հաղթանակի: Այս ամենին մասնակից դարձան հարյուրավոր կանայք: Նրանք ևս գիտակցում էին, որ տեսականորեն անհնար էր դիմակայի հակառակորդի ահրելի ուժերին, որի համար էլ դեռևս նախապատերազմյան տարիներին կամավոր միացան հայ ինքնապաշտպանական ուժերին: Իրենց անկասելի ոգով մեկնեցին ռազմաճակատ՝ որպես ազատամարտիկ ու բուժքույր և իրենց նվիրեցին հայրենիքի պաշտպանությանը:

Ամփոփում

Հոդվածում լուսաբանվում է կանանց մասնակցությունն արցախահայության ազգահն-ազատագրական պայքարի պատերազմական փուլին՝ 1991-1994թ.:

Այն պահից սկսած, երբ Արցախյան շարժումն ընդհատակյա բնույթ էր կրում, կանայք մասնակիցը դաշնալով այդ ամենին, ընդգրկվելով նախաձեռնող խմբերում, նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի:

1991 թվականի նոյեմբերից Ադրբեջանը գինված ագրեսիա սանձազերծեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ: Արցախահայությունը ստիպված էր դիմել կազմակերպված ինքնապաշտպանության:

Ինքնապաշտպանական մարտերի մասնակից դարձան նաև հարյուրավոր կին-կամավորակամներ՝ տղամարդ ազատամարտիկների հետ համահավասար կիսելով պատերազմի բոլոր դժվարությունները:

Участие женщин в военном этапе национально-освободительной борьбы армянства Арцаха(1991-1994гг.)

Искуи Аванесян

Резюме

Ключевые слова- женщины, общенациональный, самообороны, способствовать, борьба, освобождение, независимость, победа, ранены, жертвы.

В статье освещается участие женщин в военном этапе национально-освободительной борьбы армянства Арцаха в 1991-1994 гг.

Начиная с того момента, когда Карабахское движение пока еще несла подпольный характер, женщины не только стали участниками всех происходящих событий, но и включаясь в работу Инициативных групп, способствовали, чтобы движение переросло в общенациональную борьбу.

С ноября 1991 г. Азербайджан развернул вооруженную агрессию против Нагорного-Карабахской Республики. Армянство Арцаха вынужден был прибегнуть к организованной самообороне.

Участниками боев самобороны стали также сотни женщин, на равне с мужчинами-войнами разделяя все тяготы войны.

Participation of women in the military phase of the national-liberation struggle of the Armenians of Artsakh (1991-1994)

Iskuhi Avanesyan

Summary

Key Words – women, nationwide, self-defense, promote, struggle, liberation, independence, victory, wounded, victims.

The article highlights the participation of women in the military phase of the national-liberation struggle of the Armenians of Artsakh throughout 1991 and 1994. Women have participated in spontaneous underground movements since their very beginnings, not just as participants to their formative events, but as leaders and initiators who helped grow the movement into a nationwide struggle. In November 1991, Azerbaijan unleashed armed aggression against the Republic of Nagorno-Karabakh. The Armenians of Artsakh had to resort to organized self-defense.

Hundreds of women-volunteers also participated in self-defense fights sharing all the hardships of war together with men fighters.

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
«ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒԹՈՒԹՅԱՆ»
ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ¹**

Անահիտ Աքայան

Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
ԱրԴՀ

Բանալի բառեր. մանրապատում, բանահյուսություն, հնագույն սովորություններ, հանելուկներ, առած-ասացվածքներ, խաղիկներ, իմաստուն խոսքեր, անեծքներ, օրինանքներ, ժողովուրդ, մանկական բառաշարքեր, շուտասեղուկներ, ֆոլկորագետ, հետազոտություն:

«Ժողովրդական իին բանահյուսությունը ուսկեթև հավքերի մի արագաթոհի երամի է նման, որ գալիս է մարդկային կյանքի խորին խորքերից և անողորմ ժամանակ քամու բերանին գնում է անդարձ: Դաժան ու կենսաքաղ որսկաններից հալածական քանի կախարդական ուսկեվետուր է կորցրել նա, քանի անգամ թևակոտոր դարձել իր հողմածեծ ճանապարհի արյունոտ թնջուկներում:

Ինչ էլ որ պոկես թռչող ժամանակի բերանից, թեկուզ մի փետուրիկ, չնչին թվացող մի աղվանազ, լինելու է միակ և թանկագին, մեր ազգ ու տակի հիշատակի պես սիրելի», - կարդում ենք Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» գրքում²:

Իսկ «Գրառումներ ծոցատեսրից» գրքույկում նշանավոր բանահավաքը գրում է. «Ի ծննդե ապրելով զյուղաշխարհում, նրա բարձր սարերում, խեղիված սրբատաշ քարերի մեջ, լսելով դարերից եկած հոգեպարար մեղեդիները, իմաստուն խոսքն ու զրոյցը, խորանալով հնագույն սովորությունների մեջ, ես ակամայից դարձա դրանց գերին: Գրի էի առնում դեռևս այն ժամանակից, երբ նոր գրիչ բռնել էի սովորում, համոզված լինելով, որ ես իմ ժողովորի մոռացված կենսագրությունն եմ գրում:

Ես իմ երգերը կրակով եմ գրում,

Որ օրը թրթառ,

Որ մոմը քնքշանա ու վառվի:³

¹ Հոդվածը ընդունված է 10.10.14:

²Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Ե., 1991, էջ 3:

³Հարությունյան Լ., Գրառումներ ծոցատեսրից, Ստեփանակերտ, 2004, էջ 65:

L. Հարությունյանը, հիրավի, թումանյանական «Հուր Եմ դառել, լուս տվել» կարգախոսով է ապրել ու սերունդներին հանձնել Արցախի բանահյուսության գոհարակերտ նմուշները՝ հեքիաթները, զրոյցները, ավանդությունները, երգերը, խրատները, օրինանքները, առած-ասացվածքները, ազգագրական բազմաթիվ բանաձևումներ...»

Քաջ գիտակցելով, որ հայ բանագիտությունը մեր մշակույթի պատմության ուսումնասիրության մի ճյուղն է, նշանավոր բանասերը ուսումնասիրեց արցախյան ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը, հասարակական մտքի զարգացման հետ կապված բազում երևոյաներ, իին ծագում ունեցող բազմաթիվ ժանրեր և իր՝ բանագետի հմուտ դիտարկումներով վեր հանեց դրանց ժանրային ու գաղափարական խորքն ու կառուցվածքային առանձնահատկությունները:

Ժողովրդական բանահյուսության նյութեր պարունակող մնայուն հուշարձաններ են L. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» 5 հատորները: L. Հարությունյանը ոչ միայն բանահյուսական նյութեր հավաքող, այլ նաև ուսումնասիրող էր: Հայ բանարվեստի զարգացման տարբեր փուլերում նշանավոր բանագետների կողմից նշվել է ազգային երգերի, ավանդությունների մեծ արժեքը, խոսվել դրանց հավաքման և ուսումնասիրության անհրաժեշտության մասին:

Արցախյան բանահյուսությունը, լինելով հայ ժողովրդական բանահյուսության անբաժանելի մասը, ժամանակի մոռացության փոշուց փրկվեց նաև L. Հարությունյանի զանքերի շնորհիվ, մի մարդ, որը, հարմար արիթք և ժամանակ գտնելով, գրի է առել բանահյուսական պատահած կան լսած նյութը՝ առաջնորդվելով իր նախասիրություններով, երբեմն՝ մշակելով ու ոճավորելով նաև իր լսածն ու հավաքածը: L. Հարությունյանի կատարած տարերային բնույթ չի կրում, այլ գիտականորեն հիմնավորված է՝ կապված Արցախի ժողովրդի մշակույթի, նրա բանավոր ստեղծագործության ծագման, զարգացման, պատմական տարբեր ժամանակաշրջաններում կրած փոփոխությունների հետ: Արցախի կյանքի մեծ հեղաբեկումները, անընդիատ կրկնվող ասպատակությունները վտանգում էին բանահյուսական նյութերի ապրելու ծգոտումը: Եվ, ահա, L. Հարությունյանի «Նշխարները» դառնում են հայ բանահյուսության արխիվի ամենանշանակալից հուշարձաններից մեկը: Նշանավոր բանահավաքի թերթերում ու ամսագրերում տպագրված հոդվածները հավաստում են հեղինակի գիտական ուսումնասիրությունները բանահյուսական ժանրե-

րի գեղարվեստական առանձնահատկությունների, նրանց պատմափիլիստիկայության, գաղափարական բովանդակության, կառուցվածքային, լեզվաոճական առանձնահատկությունների խոր իմացության բնագավառում:

L. Հարությունյանի 5 ժողովածուներն ապացուցում են, որ բանահյուսությունն իր մեջ խտացրել է ոչ միայն ժողովրդի կենսափորձն ու իմաստությունը, այլև նրա հավատալիքները, նրա սովորույթները, Վարքն ու բարքը: Մի շարք հարցերի քննությամբ L. Հարությունյանն ապացուցում է, որ բանահյուսությունը նաև ազգագրական հարուստ շտեմարան է, որի կողքով անտարբեր անցնել հնարավոր չէ: Բանահյուսության բազմաթիվ հարցեր կարող են ճշմարտացի մեկնաբանվել, եթե հաշվի են առնվում ազգագրական տվյալները: Բանահյուսությունն ու ազգագրությունը միասին արտացոլում են ժողովրդի պատմական զարգացման ուղին:

Ժողովրդի պատմական զարգացման ուղին, նրա սովորույթները, Վարքն ու բարքը արտացոլող երկեր են ոչ միայն բանահյուսական մեծակտավ երկերը (որոնց մասին մի շարք անգամ խոսվել է), այլ նաև մանրապատում ստեղծագործությունները, որոնք ևս յուրօրինակ մարգարիտներ են, հինավոր ժամեր, կարճ, հիշողության մեջ պահպող քառատողեր, երկտողեր, միատողանի հյուսվածքներ, որոնք, հորինվելով տարբեր պարագաներում, դարձել են մարդկանց աշխարհայացքի դրսնորման միջոցներ:

Հակիրճ բանաձևումների մեջ ամփոփված առած-ասացվածքները, թևավոր խոսքերը, խրախճանականները, շուտասելուկներն ու սուտասելուկները, խաղիկները տարբեր են ժամրային առանձնահատկություններով ու արտահայտության ձևերով: Սակայն դրանք բոլորն ել արցախցու խաշնվածքի, կենցաղի, նիստուկացի, մարդկային բարոյական արժեքների վկայություններ են՝ ստեղծված պատմական տարբեր ժամանակներում: L. Հարությունյանը դրանք ժամանակագրական կարգով չի դասդասել, քանի որ գիտակցել է, որ խորն են դրանց արմատները և պատմական ցանկացած ժամանակահատվածում էլ դրանք բնութագրում են արցախցուն, նրա կենցաղը, սովորույթներն ու համոզմունքները, վերաբերմունքը շրջապատի հանդեպ:

Ուսումնասիրելով 5 ժողովածուների մանրապատում ստեղծագործությունները՝ նկատում ենք, որ նշանավոր բանահավաքը երբեմն ստեղծագործություններից ջնջել է լեզվաոճական թերություններն ու անկատար

մտքերը: Մենք հնարավորություն ենք ունեցել համատեղելու միևնույն հորինվածքի տարբեր պատումները: Մի բան պարզ է, որ բանահյուսությունը միշտ էլ աստիճանաբար հղվում է, հարթվում, կատարելագործվում: Շատ դեպքերում L. Հարությունյանը անկատար է թղթել տարբերակը՝ իր բնական հնչողությամբ՝ ընդգծելով տարբեր բանահավաքների յուրահատուկ ձիրքը: Այսուամենայնիվ, գրի առնված յուրաքանչյուր մանրապատում ստեղծագործություն խոսում է ժողովրդի հանձարեղության մասին: Իսկ Լ. Հարությունյան բանագետը, օժտված լինելով ստեղծագործելու բնատուր տաղանդով, պայծառ հիշողությամբ, բազում տարբերակներով վեր է հանել, կորսատից փրկել հետաքրքիր գործեր, որոնք բացահայտում են ժողովրդի կենսահայեցողությունը, ապրելու, արարելու տենչը:

Ժողովրդական մանրապատում բանաձևումներում L. Հարությունյանը դիմում է պատմությամբ՝ դառնալով յուրովի բանահավաք-պատմաբան: «Ֆոլկլորը սերտորեն կապված է պատմության հետ և հանդիսանում է նրա անբաժան ու յուրահատուկ ուղեցույցը: Չի կարելի լավ ինանալ առաջինը, առանց լավ ինանալու վերջինը: Այս թե ինչու իր հետազոտությունների ընթացքում ֆոլկլորագետը պետք է լայնորեն օգտագործի պատմության տվյալները, միաժամանակ լինի նաև պատմաբան»,- կարդում ենք Գր. Գրիգորյանի «Հայ ժողովրդական բանահյուսություն» գրքում:¹

L. Հարությունյանի առած-ասացվածքները, հանելուկները, դարձվածքները, առավել ևս՝ խաղիկները կապված են ժողովրդի պատմության, նրա պատմական ձակատագրի հետ:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից առած-ասացվածքները լայն ընդգրկում ունեն, բովանդակությամբ բազմազան են: Դրանցում դրսևորվել է մեծ բարոյախոսություն, որը հիմնվել է լավագույն կյանքի նկատմամբ մարդու հավատի և մարդու կատարելության գաղափարի վրա: Առաջներն ու ասացվածքները բարձր են գնահատվել ծողովրդի կողմից, որովհետև մեծ է դրանց դաստիարակչական արժեքը:

Իրենց թեմաներով, գաղափարական խոր բովանդակությամբ, փիլիսոփայական խորքով սրանք արտացոլում են կյանքը, մարդկային հարաբերությունները: Դրանց մեջ ժողովուրդն է՝ իր ըմբռնումներով, հավատով, հույսով:

¹ Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., 1967, էջ 19:

Առաջ-ասացվածքները լի են գեղեցիկ խորհրդանիշներով և փիլիսոփայական խորհրդածություններով: Չկա մի բնագավառ, որ դուրս մնացած լինի բանասացների, առաջասացների տեսադաշտից: Դիտելով վատն ու չարը՝ նրանք պահպանել են լավը, բարին, վեհն ու գեղեցիկը:

Առաջներն ու ասացվածքները խորապես ազգային են: Նրանք աչքի են ընկնում ձևի և բովանդակության միասնությամբ, խորիմաստ են, մի քանի բառով մեծ մտքեր են արտահայտում: Հեզնանքը, երգիծանքը, սիմվոլիկան, պատկերավորությունը, հանգավորումը, ռիթմիկան. սրանք առանձնահատկություններ են, որ հատուկ են ժողովրդական բանահյուսության քնարական ժամրերին:

Առաջ-ասացվածքները գրեթե մոտ են ժամրային առանձնահատկություններով, բայց տարբեր են արտահայտության ձևով, ասել է թե՝ ասացվածքը առանց փոխաբերական իմաստի ուղղակի ասված խոսք է, առաջն ունի փոխաբերական իմաստ:

L. Հարությունյանի «Նշխարների» III հատորում առանձին վերնագրի տակ հավաքված են առաջներ, ասացվածքներ, իմաստություններ (բանաձևային բանահյուսություն): Ասացվածքներ կան գրեթե բոլոր ժողովածուներում: Դրանց մի մասը մի տեսակ էնոցիոնալ բանաձևներ են՝ ուղիղ և փոխաբերական իմաստներով:

1-5-րդ գրքերում բազմաթիվ են աշխատանքն ու արհեստը փառաբանող, ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակն արտացոլող, փիլիսոփայական խորհրդածություններ, խրատ ու խորհուրդ արտահայտող առաջ-ասացվածքները:

Օր. Ամերնը ըրա, ծմերնը կեր:

Աշխադանքնան ըրխոթունը քուր ախապեր են:

Աշխադանքը ծիա, վեր երս ընում, եր-երա խաղում:

Աշխադած հացն ա հալալ:

Կարճ բանաձևներում հաճախ են ծաղրվում ծովությունը, անբան մարդը.

Անե Հուրին

Ծաղկե փուրին:

Ծերքը անպեն, լուգուն պենե:

Անպենը պընըվուրեն կործի տրավ:

Փիլիսոփայական խորհրդածություններ, խրատներ ու խորհուրդներ արտահայտող առաջ-ասացվածքների իմաստը բարի խրատն է, մարդուն փառաբանելը, լավ խորհուրդը.

Լավա անիս ուչ, իինչ փիս անիս:

Անումը քեղնամ չըն անել

Անպտուղ ծառեն քարավ չըն տամ

Անհամ խոսք անհամ ռխան տուս կյա:

Արցախցին միշտ էլ ապավինել է Աստծուն, նրա հետ կապել իր հույսն ու հավատը:

Աստված բիդիս, վեր կարիս Աստծու սերտը գիրյաս:

Աստուծ լավեն նիետա առուտուր անում:

Աստծու անա մեծը էլիա աստուծա:

Այ իմ մեխը մսմար Աստուծ, փառք քեզ:

Առած-ասացվածքները ներքին չափ ունեն, ռիթմիկա, ներքին հանգավորում:

Լ. Հարությունյանը ի մի է բերել բանասացներից լսած իմաստուն խոսքերը, որոնք մի-մի փիլիսոփայություն են, պատզամ, ժողովրդի փորձով հարստացած ասույթներ.

Թա իինչ անիս, իինչ չանիս, հոգուդ մեխսկ չանիս:

Պարզ ու մաքուր ապրելու ձգտումն է արցախցու կենսածկը.

Ճյուրը վեր պրոտոլից՝ յա կտրող կա, յա յեխտուտ ծերք կա մաչին:

Խուխսեն ծծին նիետ խրատե:

Արցախցին ինքնազնոհության գնալ գիտե.

Ինձ նեղ կանիմ, քեզ տեղ կանիմ:

Հնգրությունը հայոթունա,

Հայոթունը՝ ըխապրորունա:

«Բառարան» բաժնում (հ. 5) Լ. Հարությունյանը փորձում է մեկնաբանել «Վաղնջական ժամանակներից մեր օրերին հասած ժողովրդական բանահյուսության մասունքներ...»:

«Ծատ հարցերի պատասխաններ ամբողջացման կարիք ունեն: Կան վրիպումներ ու սխալներ, որոնց համար թող ինձ ների ընթերցողը>>,- իրավացիորեն գրում է հեղինակը:

Ժողովրդական ճանրապատում ստեղծագործություններից են անեծքները, օրինանքները, մաղթանքները, սպաւնալիքները, երդումներն ու ցանկությունները: Մրանք՝ երբեմն խրատական, բարին կամենալու ցանկությամբ, երբեմն չարը խափանելու ընդունակ, մեկ-մեկ էլ կծու, սառը խոսքեր են, երբեմն էլ՝ զավեշտական արտահայտություններ: Միշտ էլ

դրանք ուղղված են մարդկային արատների դեմ և կիրառվում են մարդու լավը ցանկանալու, նրան բարի տեսնելու, օգնելու նպատակներով:

Հետաքրքիր են ինքնախարազաննան, ինքնաքննադատության համար ստեղծված անեծքներն ու սպառնալիքները.

Օր. Թե սուտ ասիմ, տափակ թումբ անիմ:

Թե սուտ ասիմ, ծեր մեխքեն տրանամ

Լուզուս չուրանա:

Հարությունյանը այբբենական կարգով դասդասում է անեծքներն ու սպառնալիքները, որոնք տարբեր իմաստներ ու նպատակներ ունեն:

Ի հատորի «բանաձևային բանահյուսություն» վերնագրի տակ գետեղված են ասացվածքներ, պատկերավոր արտահայտություններ, դարձվածքներ, օրինանքներ, բարեմաղթություններ, կենացներ, սպառնալիքներ, ծիսական արտահայտություններ, անեծքներ, ժողովրդական խաղեր: «Պատասխանիր արագ» վերնագրի տակ I. Հարությունյանը ի մի է բերել ժողովրդի մեջ տարածված խաղային իմաստ ունեցող որոշակի արտահայտություններ, որոնք տրամաբանության զարգացման օրինակներ են: Ժողովուրդը նաև մտածել է դիմացինին «Խելքով գինելու մասին» ու ստեղծել է.

Մի կիլո պեմբակն ա ծանդր, թա մին կիլո արկաթը:

Ես մարթին կնօանը ախապերը իմ դայի յա, էս մարթը իմ հինչըսա:

Ծուկունկեսը կպիկեսա, օխտը ծուկունը քանե՝ կապեկ կընի¹ և այլն:

Երեխաների տրամաբանության զարգացման համար ժողովուրդը ստեղծել է նաև շուտասելուկներ ու սուրասելուկներ: Սրանք նաև խոսքի զարգացման միջոցներ են եղել, օգնել են լեզվական արատ ունեցող մարդկանց խոսքի կարգավորմանը:

Օր. Տնձը ծառեն էրկու ծանդր-ծունդր տանձ,

Ծոյը ծառեն էրկու մանդր-մանդր տանձ:

Բախտու սիրիմ Բաղրասար,

Բախտու մնաց Բախտասար:

Որպես խոսքի զարգացման միջոցներ՝ շուտասելուկները տարածված են եղել մեր դասագրքերում: I. Հարությունյանը «դասական հանձարեղ» երկ է համարում «Ակուփ ապեր» շուտասելուկը.

Ակուփ ապեր

Տու ինձետե

¹Հարությունյան I., Նշխարմեր Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 383:

Մին խուփ կապէ,
Մին կեփ կապէ,
Անունդ տնիմ
Խուփը կապէ,
Կփղկապէ
Տփղկապէ
Ակուփ ապեր:

Արհեստավորի հմայիչ կերպարն է այստեղ, փորձություն է նրա համար, որպեսզի վաստակի նշված անունները: Իսկ դրանք հարգի են հայ աշխատավորի, արհեստավորի համար, կեցության հիմք են: Դարաբաղյան կենցաղի գործիչները՝ խուփ, կեփ, տեփ, վկայում են ժողովրդի կապածությունը աշխատանքին, կենցաղին:

Նոյն հատորում I. Հարությունյանը բերում է ժողովրդի կողմից ասված հետևյալ խոսքերը, որոնք բարոյական դասեր են գալիք սերունդներին:

- Ա ժողովուրդ, լավ մարթին կենացը, լավ մարթան խունգավետ ալյամ, աշխարքս էլ նրան կենթանն ա: Փիսը վեր ընի վուչ, լավին դադրը գիդալ չընք, համ էլ՝ սայադ չընք կենալ: Մին պեն ըմ օգում, փիսին աստուծ էնքան շնորհը տա, վեր կարե լավեն տեղը գիդա: Ամենակարող աստված աձողություն տա ծառ տնգողեն, տոռ շինողեն, հղե քցողեն, ախայուր շնողեն, հանգիստարան վենն ընողեն, կյիր կյրողեն, պատկեր քշողեն, պարի պեն փոշողեն, մարթին սերտը գիդողեն... Եկեք մինչև մեռնելը՝ վեչ մեռնինք:² Սա դարաբաղցու մաղթանքն ու խրատն է ժողովրդին: Մրանք խրախճանքի ժամանակ ասված խոսքեր են, պատզամ ու խրատ, շատերին ուղղված խոսք՝ լավ մարդու, նրա լավ գործերի մասին:

I. Հարությունյանը գրի է առել նաև մանկական բառաշարքեր (1-1.5 տարեկան)` հո՞լա-ուր է, ծածառ-կանգնել, կակա-կոնֆետ և այլն:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություն է նաև հանգախաղը: Ըստ բանահավաքի՝ հանգախաղի մասնակիցները իրար առաջարկում էին բառեր, բառակապակցություններ և նախադասություններ, և հակառակորդները պատասխանում էին՝ ստեղծելով հանգախաղ: Երբեմն պատասխանները դառնում էին կարծ բանաստեղծություններ:

¹Հարությունյան I., Նշխարմեր Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 105:

²Նոյն տեղում, էջ 181:

Խաղաղական առաջարկվածին գեղեցիկ ու սահուն հանգեր հորինելն է՝ որքան հնարավոր է արագ ու զավեշտական:

Հանգախաղերը ծավալվում էին 2 հարևան գյուղերի պատանիների և աղջիկների միջև, որոնք այդ նպատակով հավաքվում էին սահմանագլխին: Հանգախաղերին մասնակցում էին նաև տարեցները:

L. Հարությունյանը հավաստում է, որ հանգախաղերը մտային մարզանքի ժամեր էին նաև դպրոցներում՝ Մեսրոպի ժամանակներից սկսած և դրան ի նպաստ կային ձեռնարկներ, որոնց մեջ ընդգրկված էին նաև խաղերգեր, շուտասելուկներ, հանելուկներ և այլն:

Տոնախմբությունների ժամանակ հանգախաղեր էին կատարվում տղաների և աղջիկների միջև:

Սրանք երեմն սիրային բնույթ էին ստանում.

Օր. - Սիրեկ

- Քեզ սիրիմ քշեր-ցիրեկ:

- Մնեշակ
- Ըստական փեշակ:

- Սամեթ
- Նեստա կենամ ժամետ:

Զավեշտական բովանդակություն ունեին հանգախաղերից շատերը.

Օր. Վեց

- Խզրտակեդ կյամ՝ տրխընետ կեց:

- Հաչիմ, հաչիմ,
- Թևադ քաշիմ,
- Թոշադ պաշիմ և այլն:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից են խրախճանականները: Այդ մասին է խոսում L. Հարությունյանը «Նշխարների» 4-րդ գրքում¹: Բանագետի հմտությամբ է հեղինակը մեկնաբանում խրախճանքն ու խրախճանականները: Ըստ L. Հարությունյանի՝ խրախճանք կոչվեցին Արև-Աստծուն ուղղված տոնախմբություններն ու կերուխումի արարողությունները: Ուրեմն դրանք դեռևս հեթանոսության ժամանակաշրջանում հանդես եկած երևույթներ են: «Կերուխումին արջնթեր ուրախընթաց միջոցները կոչվեցին խրախճանականներ: Սրանք էլ օգնում էին

¹Հարությունյան L., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 104:

մարդկանց երևակայության զարգացմանը, ձկուն մտածողության ձևավորմանը»: Լ. Հարությունյանը բացահայտում է, որ «արևապաշտական Հայաստանի բազմադար շրջաններում և նրանից հետո էլ հայի միտքն ու ստեղծագործ ոգին ավելի էին թևածում, քան խստավարժվում էր մարմինը: Զգուռմը դեպի արվեստն ու իմացությունը ջլատել էր ընչաքաղցության՝ առնելու, գրավելու, իրենը դարձնելու մոլուցքը: Անաշխատ բերկրանքը հեռու էր հայ անհատականությունից՝ ի սկզբանե», - գրում է բանահավաքը:¹

Հիրավի, արվեստասեր ժողովուրդը դեմ է չարին, սիրում է բարին ու բարությամբ է պայքարում չար ուժերի դեմ: Արևին պետք է սատար լինել՝ չար ուժերի դեմ մղվող պայքարում: Եվ բռնության դաժան ու բիրտ ուժերը չքանում էին խրախճանքներից ու զվարճանքներից:

Խրախճանքներն ու խրախճանականները դարերի ընթացքում փոխվում են՝ կապվելով սովորույթների, ծիսակատարությունների հետ: Տարածված էին ծիախաղը, կոխը, լարախաղացությունը, երգը, տաղը, հանգախաղը, գլուխկոտրուկը, հաշվեխաղերը, նմանակումները: Ծիծաղաշարժ ասույթները հեշտացնում էին ապրելը, բնության չար ուժերի դեմ պայքարելը:

Բանահյուսական հնագույն ժանրերից է հանելուկը: Սա մտավոր ժամանց էր գրեթե բոլորի համար: Այն ևս մտածողության զարգացման գործոն է: Առարկայի ծանոթ հատկանիշների թվարկումներով որոշվում է տվյալ առարկան: Հանելուկներով շատ հաճախ մրցում էր ժողովուրդը: Տարեց մարդիկ՝ տարեցների, տղաները՝ տղաների հետ, փոքրերը ևս փորձում էին անգիր անել: Հանելուկ բարի մասին Լ. Հարությունյանը գրում է. «Արցախի բարբառում այն ավանդվել է հնելիք տեսքով, որն ին համոզմանք առավել ստուգ է մատուցում նախնական իմաստը և ձևը՝ հանելիք, որ հեշտությամբ կարելի է փոխարինել մեկնաբանելիք, քննելիք, բացահայտելիք, հայտնաբանելիք և այլ հոմանիշներով: Հանելիք բառը իրեք և երևույթներ քննելու, նրանց գաղտնիքների մեջ խորանալու միտում ունի».² Այնուհետև բանագետը համոզիչ բացատրում է հանելուկի պնդը բարբառային անունը:

«Պնդը բառը բարբառում ունի որոշ առումով բացասական իմաստ (ոչ լուրջ բան, պատում): Այդ իմաստից ապահովված չեն նաև պնդաբանել,

¹ Նույն տեղում, էջ 104:

²Հարությունյան Լ., Նշխարմներ Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 107:

պնզլաբանող և այլ բառեր»: Լ. Հարությունյանը գտնում է, որ «նման իմաստ պնզլ բառն ստացել է ժողովրդական զվարձահարուց բանքի նկատմամբ քրիստոնեական գաղափարախոսության ունեցած վերաբերմունքով: Ըստ քրիստոնեական մոտեցման՝ պնզլաբանելը հեթանոսությունից ժառանգված պիղծ սովորություն է»: Սա, թերևս, վիճելի է, պարզապես միշտ չէ, որ հանելուկը լուրջ իմաստ է ունեցել կամ կարևոր առարկա է մատնանշել, հետևաբար, հնարավոր է, որ հենց այդ պատճառով է ժողովուրդը անվանել պնզլ, քանի որ տակակ ասույթներ չի սիրել, դրանք պետք է իմաստություն, իրենց մեջ «խելքի նշույլ» ունենային:

Բանահավաքը հիանալի մեկնաբանությամբ բացահայտում է «Քաթ, քաթ» բանահյուսական չափածո շարքը, որ բանասերներից շատերը դիտել են որպես հեքիաթների սկիզբ, նախաբան:

Ըստ Լ. Հարությունյանի մեկնաբանման՝ դա հանելուկների շարք է: Մեզ հասած կտորները բանահավաքը վերլուծում-մեկնաբանում է իբրև հանելուկներ: Համոզիչ են վերլուծվող կտորները.

Քաթ, քաթ, մի ջվալ ցակատ՝

Վեչ կոր օնե, վեչ՝ արկաթ...

Զվալը մարդու բերանն է, անկոր ու աներկաթ կտրիչները՝ ատամները: Եվ այսպես շարունակ: Ժողովուրդը հավանաբար քաթ է անվանում յուրաքանչյուր պատմվող, ասվող խոսք, որը պետք է հասցեատեր ունենա, լուծվի, բացահայտվի: Պատումի մեջ նկարագրվում է արցախյան օջախը, նիստուկացը, երեխաների հավաքվելն ու յուղապատառ ուտելը: «Պտկան կծողը տարեց երեխան է, իսկ տակը լաստողը տան փոքրիկը: Հանելուկաշարը ավանդական գեղեցիկ ու համեստ սովորույթների մասին է: Լ. Հարությունյանի հավաքածուներում կան հանելուկներ արցախցու կենցաղին, նիստուկացին, մարդկային հարաբերություններին վերաբերող.

Այսպես. Ցիրեկը խանում-խաթուն

Քշերը՝ ձռը կաթուն: (Սահճակալ)

Կամ

Հար տամ, պատ տամ,

Քաքուլադ ծիք տամ: (Կշեռք)¹

¹Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 116:

Հանելուկները վերցված են Արցախի բուսական, կենդանական աշխարհներից, առօրյա գործածական առարկաներից, մարդկային հարաբերություններից: Դրանք էլ առաջ-ասացվածքների նման ընդգրկում են կյանքի տարբեր բնագավառներ-աշխատանք, ընտանիք, մարդու մարմնի մասեր, մրգեր, բանջարեղենի տեսակներ, երևոյթներ, որոնք վերաբերում են մարդու աշխարհաճանաչողությանը: Խրատական բովանդակությամբ հանելուկները նպատակ ունեն շտկելու պիսալը, թերությունը: Դրանք տարածված են եղել նաև արցախյան խաղիկների մեջ: Բազմաթիվ առիթներով I. Հարությունյանը բացահայտում է ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների յուրահատկությունները, ընդգծում տվյալ բանասացի հասարակական-կենցաղային միջավայրի ազդեցությունը նրա հավաքած ստեղծագործության բնույթի վրա:

Արցախյան խաղիկները ևս իմաստուն քառատողեր են՝ «գերազանցապես՝ զյուղական բանաստեղծություններ և սիրո երգեր»: Սրանք հիմնականում ստեղծված են գեղջուկ պատամիների և երիտասարդների կողմից: Գրառումներում առկա են նաև տարեց մարդկանց (կանանց կամ ծերումիների) իմաստությամբ շաղախված տողեր: Խաղիկները համեմված են ժողովրդական սովորոյթներով, հարուստ են մարդկայնության, ազնվության ակորդներով: Սրանք հանգավորված են պարզ, ժողովրդախոսակցական լեզվին հատուկ հանգավորումով:

Սիրային խաղիկները ժողովրդի բանաստեղծական հանձարի վկայություններն են:

Սերս կրակ, սեր կասիմ,
Տեղդ ծոխ ա, եր կասիմ,
Հենց վեր տեսե քեփ չոնիս
Մեղրան անուշ երգ կասիմ:¹

Սիրառատ խաղիկներում նաև խօռվկան-նեղացած սրտի պոռթկումներ են, կես կատակ, կես լուրջ խոսքեր, ոչ իր կամքով ասված անեծքախառն տողեր: Բովանդակային բազմազանությամբ Արցախի բանահյուսական գոհարները քաղցր ու արինքնող են, լուսավոր ու հուսատու:

Սարերը լոխ ծխավուր ա,
Մին ծխավուր զռավուրա,

¹Հարությունյան I., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 3, Ստեփանակերտ 2007, էջ 24:

Խաղաղ ասում սարեն տոշին,
Խաղը քաղցր, հյավուրա:¹

Տարբերվում է հայոց երգն ու տաղը, տարբեր են նաև արցախցի ծիավուրմերը (ծիավուր անվանում էին քաջ, համարձակ, երևելի այրերին): Զիավորների մեջ մեկը զրավուր ա (նախշում), նրա երգն ու խաղն ել քաղցր է ու հայավարի: Հետաքրքիր են Արցախի գյուղերին, գյուղական սովորույթներին վերաբերող խաղիկները:

Օր. Նշան ա, հայ, նշանա,
Մշկապատը քշանա,
Ախճիգ օգինք Ննգվա
Կինին պիրինք Ծշանա:²

Գյուղերն իրար հետ համերաշխ են, մարդիկ մեկը մյուսի հանդեա սիրով լի, քանի որ նրանց սատար է սուրբը.

Մրասա հղեն տեսա,
Պերածդ կյառան մեսա,
Մարասը միշտ հակեդ ընի,
Այ իմ նանու ազիզ փեսա:

Արցախցին միշտ էլ թուրքից ահ է ունեցել: Բայց նրա մարդասիրությունը ծայրահեռ մեծ է, այն աստիճան, որ թուրքի հետ փորձել է համերաշխ լինել, սակայն չի ստացվել.

Հի՞նչ կընի՝ ափ զափու քինի,
Թորքեն փիսը տափու քնի,
Թորքեն գառին ծափ տա,
Հային տղան պար կյա:³

Մի այլ տաղում ժողովուրդը երգում է.

Հայը Թիֆլիս, Երևան ա,
Բաքուն լուս ա հային հետե՝
Մանթաշովեն ըրեսան ա,
Վախ ու ավա՞ն էն ազգեն,
Վեր թուրքեն հրեսան ա:⁴

¹Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 3, Ստեփանակերտ 2007, էջ 25:

²Նոյն տեղում, էջ 24:

³Նոյն տեղում, էջ 28:

⁴Նոյն տեղում, էջ 25:

Հայի տարագիր, պանդուխտ վիճակը բնորոշում են մի շարք խաղիկմեր

Նանի, նանի, նան չունիմ,
Մե գդալ թքու թան չունիմ,
Սև արին հայաց Նուխին,
Անտեր եմ, վաթան չունիմ:
Կամ Ես բաղչա ու բեր չոնիմ
Շատ դարդ օնիմ, դեղ չոնիմ,
Բնավեր հավքի նման
Մեկ նստելու տեղ չոնիմ:¹

Ընտանեսիրության, արցախյան բարոյականության, հավատարմության բազում օրինակներ կան ժողովրդական երգերում: Խաղիկներուն առկա է մեծերի օրինանքը ջահելներին:

«Մուղանա հորովել» չափածո տաղում ժողովրդի վիշտն ու ցավն է, որովհետև թուրքը միշտ է վիշտ ու ցավ, չարիք է եղել հայի համար:

Թարթառ, աշկդ պաց արա,
Տափիդ վարե, հաց արա,
Մին ծերքավ էլ դամադ սրե
Ալուն ծուցը լաց արա:
Արա հո, վարա հո...

Ցրիլ մի ցավը ու ալիք
Տարնալ մի դու խաղալիք,
Ծերք մեկնե Արաքս, Քուրին,
Հալածիր թուրք ու չարիք,
Արա հո, վարա հո²...

Բանահյուսության նյութերի հետազոտության ընթացքում Լ. Հարությունյանը շատ անգամ է այս կամ այն բառի իմաստի մեկնությամբ բացահայտում հյուսվածքի գաղափարական ու գեղարվեստական արժեքները՝ համոզված, որ ֆոլկլորագետի համար մեծ գենք է ստուգաբանությունը, որն օգնում է բացահայտելու շատ ու շատ առեղծվածներ:

Լ. Հարությունյանի բանահավաքչական աշխատանքները, այդ թվում ժողովրդական մանրապատում երկերը, դրանց վերլուծությունները, եգ-

¹Հարությունյան Լ., Նշխարմեր Արցախի բանահյուսության, գիրք 3, Ստեփանակերտ 2007, էջ 25:

²Նոյն տեղում, էջ 25:

բահանգումները մեծ նշանակություն ունեն Արցախի ժողովրդական բանահյուսության գնահատման ու արժենորման համար:

Դրանք վերաբերում են տարբեր ժամանակների՝ սկսած հեթանոսությունից մինչև մեր օրերը, և վկայում են ժողովրդի անխարդախ հոգու, բարձր բարոյականության, հպարտ կենցաղավարության, բնատուր շնորհիքի, մտավոր ըմբռնումների մասին:

Լ. Հարությունյանի 5 ժողովածուները, մամուլում ցրված բազմաթիվ նյութերը վկայում են Ղարաբաղի ժողովրդի հազարամյակների ու հարյուրամյակների կենսագործունեությունը՝ միահյուսված հույսի, լուսի, վեհի ու գեղեցիկի որոնումներին:

Ամփոփում

«Ժողովրդական մանրապատումները Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» ժողովածուներում» հոդվածում քննարկվում են հեղինակի 5 ժողովածուների նյութերը՝ մեկնաբանելով բանաձևային բանահյուսության նմուշները՝ կապված արցախցու կյանքի, պատմության, կենցաղի, սովորույթների հետ: Լ. Հարությունյանի գործը նպատակային բնույթ է կրում, գիտականորեն հիմնավորված է՝ կապված Արցախի ժողովրդի մշակույթի, նրա բանավոր ստեղծագործության ծագման, զարգացման, պատմական տարբեր ժամանակաշրջանում կրած փոփոխությունների հետ:

Լ. Հարությունյանի 5 ժողովածուների մանրապատումները վկայում են ժողովրդի բարձր բարոյականության, հպարտ կենցաղավարության, բնատուր շնորհիքի, մտավոր ըմբռնումների մասին:

Народные эскизы в сборниках Левона Арутюняна

“Реликвии фольклора Арцаха“

Анаит Атаян

Резюме

Ключевые слова: эскиз, фольклор, древние традиции, загадки, пословицы – поговорки, игры, изречения, проклятие, благословение, народ, детские словесные ряды, скороговорки, фольклорист, исследование.

В статье “Народные эскизы в сборниках Левона Арутюняна “Реликвии фольклора Арцаха” обсуждаются материалы пяти сборников, комментируя примеры эскизов, касающихся жизни, истории, быта, традиций арцахца.

Деятельность Л.Арутюняна носит целенаправленный характер, научно обусловлен, связан с культурой народа Арцаха, зарождением, развитием его устного творчества, несущем изменения в различные исторические периоды.

Эскизы в пяти сборниках Левона Арутюняна свидетельствуют о высокой морали, гордом быте, природном даре, умственном восприятии народа.

"Folk sketches in the collections of Levon Hayrapetyan",

"Relics of Artsakh folklore"

Anahit Atayan

Summary

Key words: sketch, folklore, ancient traditions, mystery, proverbs, sayings, games, curses, blessings, people, children's verbal series, tongue twisters, folklorist, investigation.

In the articles "Folk sketches in the collections of Levon Hayrapetyan", "Relics of Artsakh folklore" the materials of 5 collections of the author are discussed, interpreting samples of sketches related to life, history, mode of life, Artsakh traditions.

The activity of Levon Hayrapetian has a purposeful character, scientifically proved, connected with the culture of Artsakh people, generation, with the development of the spoken creativity that brings changes to different historical periods.

Sketches in the 5 collections of Levon Hayrapetian witness about the high moral, proud mode of life, natural gift and mental perception of the people.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԻՇԾ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄՔ¹

Սուկրատ Խանյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԿրՊՀ

Բանալի բառեր. Հայաստան, ժողովուրդ, երիտրուրքեր, 1915թ., ցեղասպանություն, հայ գրականություն, Մարինա Առատամյան, գերմանական գրականություն, ավստրիական գրականություն, ռէքվիեմ, Արմին Վեզմեր, Էդգար Հիլգենրաթ, Ֆրանց Վերֆել:

Համաշխարհային գրականության պատմության մեջ ցեղասպանության թեման սկսեց հոլովվել 20-րդ դարի սկզբից: 1915 թվականի ապրիլի 24-ի Հայոց մեծ եղեռնից հետո գրվեցին եղերերգեր, ռէքվիեմներ, պատմվածքներ, վիպակներ, վեպեր, դրամատիկական երկեր, որոնցում ականավոր գրողները ոչ միայն գեղարվեստորեն պատկերեցին մեր ժողովուրին անարդարացիորեն հասած արհավիրքը, այլև անարգանքի սյունին գամեցին երիտրուրքական ավագակախմբին և գերմանական միլիտարիստներին՝ Վիլհելմ Երկրորդի գլխավորությամբ: Օգտվելով Առաջին համաշխահային պատերազմի խառնաշփոթ իրավիճակից՝ երիտրուրքերը զազազած ամբոխի միջոցով սրի քաշեցին մեկուկես միլիոն անմեղ հայերի՝ իրենց իսկ սեփական հողի վրա, պապենական օջախների հայաշունչ բակերում, նշակած այգիներում, աստվածախոս եկեղեցների ու վանքերի խորաններում:

Այդ ամենը տեղի ունեցավ աշխարհի խոշոր տերությունների աչքերի առջև: Ցեղասպանությունը դարձավ ոչ միայն մխացող պատմություն, այլև վերածվեց չխամրող ցավի, չլոռող արյան կանչի ու մտավ գրականություն՝ ուղղված ապագա սերունդներին: Հայ ժողովրդի անանցանելի այդ վիշտը նկարագրվեց Ա. Ահարոնյանի, Հ. Թումանյանի, Վ. Տերյանի, Ավ. Խսահակյանի, Հ. Մնձուրու, Ե. Չարենցի, Հ. Օշականի, Դ. Ղեմիրճյանի, Ստ. Զորյանի, Շ. Շահնուրի, Ա. Բակունցի, Համաստեղի, Գ. Մահարու, Ն. Զարյանի, Վ. Թեքեյանի, Մ. Իշխանի, Խ. Դաշտենցի, Հ. Շիրազի, Պ. Սևակի և մյուս նշանավոր գրողների երկերում: Ստեղծված գեղարվեստական երկերի հիման վրա ուսումնասիրություններ իրատարակվեցին գրականագետների ու պատմաբանների կողմից:

Սակայն Հայոց ցեղասպանությունը միայն հայ ժողորդի ցավը չէ: Աշխարհի մեծանուն գործիչներն այդ ցավը համարում են մարդկության սիր-

¹ *Հոդվածը ընդունված է 10.09.14:

տը բզկտող մի երևույթ, որը չի կարելի մոռացության մատնել, այլապես կարող է կրկնվել՝ ինչպես հրեական Հոլոքոսը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ հիտլերյան Գերմանիայում և Եվրոպայում:

Եվ անհանգիստ այս ժամանակաշրջանում, երբ մեր ժողովուրդը գնում է դեպի Հայոց ցեղասպանության 100-ամյակը, լույս են տեսնում նորանոր պատմագեղարվեստական ստեղծագործություններ և ուսումնասիրություններ, որոնցում հեղինակները պատմության դատին են հանձնում երիտրուրքերին ու նրանց հանցակիցներին, պահանջում նոր Նյուրնբերգ՝ ընդդեմ չարիքի, բռնության, մարդկային անինաստ ու անմիտ դաժանության: Նման արժեքավոր մի գիրք է «Հայոց ցեղասպանության թեման գերմանական և ավստրիական գրականություններում» աշխատությունը, որը հրատարակվել է Վերջերս, ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Ա. Ղուլյանի անմիջական հովանավորությամբ:

Ակտուանքով նշենք, որ արժեքավոր այս ուսումնասիրության հեղինակը՝ Մարինա Առստամյանը, կյանքից հեռացել է 2012-ին, հիսունը դեռ չլրացած: Մարինան ԱրՊՀ երիտասարդ դասախոսներից էր, դասավանդում էր արտասահմանյան գրականություն: Նշված աշխատությունը նրա ատենախոսությունն է, որի համար արժանացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի: Սական, ավաղ, ձականագիրը դաժան գտնվեց նրա հանդեպ, անբուժելի հիվանդությունը խլեց նրա կյանքը: Սակայն ինչպես ժողովուրդն է ասում՝ մարդը մոռացվում է այն ժամանակ, երբ ոչինչ չի թողնում իր հեռանալուց հետո: Մարինայի տպագրած տասնյակ հոդվածներն ու նշալ ուսումնասիրությունը արժեքավոր ներդրումներ են մեր մշակութի պատմության մեջ: Նկատի ենք առնում նրա ուսումնասիրության մեջ արձարձված թեմայի արդիականությունն ու արձագանքները ընթերցողների լայն շրջանում: Ինչպես նշում է նշանավոր բանաստեղծ ու գրականագետ Հենրիկ Էդոյանը, Մարինայի գիրքը գրված է «նյութի խոր իմացությամբ, վերլուծական հմտությամբ, գրագետ շարադրանքով, և որ ամենակարևորն է, անկեղծ սրտով, սիրով ու նվիրվածությամբ»:¹

Հիրավի, դժվար ու բազմաշերտ թեմա է ընտրել Մարինան: Նա ուսումնասիրել, վերլուծել ու գնահատել է գերմանացի և ավստրիացի

¹ Արստամյան Մ. - « Тема армянского геноцида в немецкой и австрийской литературах», Степанакерт, изд. «Дизак плюс», 2013, с. 5.

հռչակավոր այնպիսի գրողների երկերը, ինչպիսիք Արմին Վեգների հրապարակախոսական ելույթները, նամակները, ուղերձներն ու պատմվածքներն են, Ֆրանց Վերֆեի «Մուսա լեռան քառասուն օրը», Էդգար Հիգենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» վեպերը: Ի դեպ, նշյալ վեպերը թարգմանված են աշխարհի մի շարք լեզուներով, որոնք անգնահատելի ենրդումներ են Հայ Դատի կարևոր գործընթացում:

Աշխատությունը ստեղծելու համար Մարինան ուսումնասիրել ու քննության է առել հարյուրավոր պատմագեղարվեստական սկզբնադրյուրներ ու կատարել ուսանելի ընդհանրացումներ: Ուշադրության կիզակետում պահելով սկզբնադրյուրների հասարակական-պատմական արժեքին առնչվող խնդիրները՝ նա կատարել է այնպիսի մեկնաբանություններ, որոնք կամքջում են դառն անցյալը մարտնչող ներկային ու ներկան՝ ապագային: Ամեն դեպքում Մարինայի մտորումներում մեր ազգային աննինջ ցավն է և տագնաապը՝ մարդկության ճակատագրի հանդեպ:

Մարինան կոնկրետ օրինակներով ու գեղարվեստական խոսքի գնահատման կարողությամբ գրքի առաջին գլխում ներկայացրել է 20-րդ դարի գերմանական գրականության հռչակավոր ներկայացուցիչներից մեկի՝ Արմին Վեգների այն գործերը, որոնցում նա բարձրացրել է բողոքի իր ձայնը Օսմանյան Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանության դեմ: Ա. Վեգները երբեք չի մոռացել այն տառապանքը, ինչ տեսել է մեր ժողովուրդը 1915-1923 թվականների ընթացքում: Նա լեփսիուսի, Ռոհրբախի, Մորգենթաուի և նման հումանիստ մարդկանց հետ դատապարտել է խոշոր տերությունների քարացած խիղճն ու անտարբերությունը Հայոց ցեղասպանության հանդեպ:

Իրավագիտության դոկտոր Ա. Վեգները ներկայացավ որպես հայ ժողովորդի իրավունքի պաշտպան: Մ. Առստամյանն այդ ապացուցում է Վեգների կրակոտ նամակներով՝ հղված մեծ տերությունների դեկավարներին: Լինելով Արևմտյան Հայաստանի մահվան ճամբարներում, ականատես լինելով անմեղ հայերի աննկարագրելի տառապանքին, Վեգները վտանգի ենթարկելով իր իսկ կյանքը, իր նամակներով ազդարարեց աշխարհին քաղաքակիրք հայ ժողովորդի հանդեպ կազմակերպված թուրքական չարագործությունների մասին: Նա, որպես հայ ժողովորդի բարեկամ, հանդես է եկել նաև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Այսպես, խնդրո առարկա գրքի հեղինակը բերում է մի հատված Վեգների՝ 1919 թվականին Բեռլինում ունեցած ելույթից. «Գերմա-

նացիներ, այն իրադարձությունները, որոնց մասին ցանկանում եմ այսօր պատմել, դա մահվան պատմություն է: Այն դժբախտությունը, դաժան տառապանքները, որոնց միջով անցել է հայ ժողովուրդը այս տարիներին, ոչ ոք չի տեսել ոչ այս պատերազմում և ոչ էլ մարդկության ամբողջ պատմության մեջ».¹ Նույն տարում նա նամակ է հղել ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին, որտեղ քննադատել է խոշոր տերություններին Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած հայկական ջարդերի կապակցութամբ: Նա այդ նամակում գրել է. «Եթի ես անցնում էի անապատներում փախստականների ճամբարներով, երբ նստում էի նրանց վրաններում մեռնողների ու սովամահ եղողների մոտ, զգում էի նրանց պահատող ձեռքբերը իմ ձեռքբերում, այն ժամանակ, երբ լսում էի նրանց քահանաների աղոթքները մի քանի հարյուրի հասնող մեռածներին հողին հանձնելիս, ես ևս աղոթում էի նրանց համար և երդվում՝ երբեք չմոռանալ նրանց».² Իր մի ուրիշ նամակ-պամֆլետում, որ կոչվում է «Ճիշ Արարատից», Վեգները խստորեն խարազանում է եվրոպական այն տերություններին, ովքեր նպաստել են Օսմանյան Թուրքիայում իրականացնելու հայերի ցեղասպանությունը: «Ի՞նչ են արել Արևմուտքի հաղթանակած տերությունները, որպեսզի պաշտպանեն փոքր մի ժողովրդի, որին ոչնչացնում էին իր հավասի ու ոգու պատճառով»:³

Սի քանի տասնյակի հասնող ցասումնալից նամակների վերլուծությամբ Մարինա Առստամյանը ասես ստեղծում է Արմին Վեգների մարդկային ազնիվ կերպարը՝ որպես հայ ժողովրդի մեծ քարեկան: Վերլուծելով նաև Ա. Վեգների պոեզիան՝ գրված հայկական թեմայով, Մ. Առստամյանը անդրադարձել է նաև Ա. Վեգների «Փոքրիկ Աղամը», «Ներխուժում կանանց բաղնիք» և այլ պատմվածքների՝ հայտնելով այն կարծիքը, որ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում շարունակվել է երեսուն տարի անընդմեջ՝ 1894-ից մինչև 1923 թվականը:

Աշխատության երկրորդ գլուխը Մ. Առստամյանը նվիրել է ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հանրահայտ վեպի վերլուծությանը՝ բնութագրելով ոչ միայն դրական կերպարներին, այլև բացահայտելով հայ ժողովրդի արյունախում դահիճների՝ թալեաթի, Էնվերի, Ջեմալի գագանային բնակորությունները: Մարինան առանձին

¹ Նույն տեղում, էջ 33:

² Նույն տեղում, էջ 35:

³ Նույն տեղում, էջ 35:

մի խանդաղատանքով է գնահատում վեպի գլխավոր կերպարին՝ Գաբրիել Բագրատյանին, որը Մուսա լեռան հերոսամարտի կազմակերպիչն ու ոգեշնչողն է: Ազատագրելով իր հայրենակիցներին՝ Գաբրիելը մնում է Մուսա լեռան վրա, մինչև վերջին շունչը մարտնչում թուրք հրոսակների դեմ՝ ծովվելով այն հողին, որտեղ ննջում են իր նախնիները:¹

Ուսումնասիրության երրորդ գլուխը նվիրված է Էդգար Հիլգենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» վեպի վերլուծությանը: Այստեղ կարող ենք նշել, որ Մարինան նշանակալից գործ է կատարել՝ առաջին անգամ խորապես ուսումնասիրելով ականավոր այդ գրողի ծավալուն երկը հայ ժողովրդի անցած ճանապարհի և նրա ճակատագրի մասին:

Մարինա Ալուտամյանը գրականագիտական հմտությամբ դիտարկում, վերլուծում ու գնահատում է անսովոր կառուցվածք ունեցող մի վեպ, որի թեման վերցված է 1915 թվականի օգոստոսին՝ բռնագաղթի ճանապարհին ծնված մի որբի և նրա ծնողների՝ Վարդան Խատիսյանի և Անահիտի կրած տառապանքների մասին:

Ինչպես հանգամանալից պատմում է Մարինան, Հիլգենրաթն ուսումնասիրել է հայ ժողովրդի դարավոր պատմությունը, միաժամանակ ծանոթացել Օսմանյան Թուրքիայի թուրք ազգաբնակչության կենցաղին ու բարբերին և ստեղծել մի երկ, որն արժեքավոր ներդրում է Հայոց ցեղասպանության իրական պատմության մեջ: Ուսումնասիրության հեղինակը բերում է գրողի հետևյալ խոսքը. «Թուրքահայաստան կոչված երկրում հայերն ապրում են իրենց բնիկ հայրենիքում: Իր ստեղծարար գործով հայը շենացնում է այդ երկիրն ու թուրք ժողովրդի կյանքը: Հայ կոշկակարը քաղաքակիրթ և Ճտքավոր ոտնամաններ է հազցնում բոբիկ և տրեխավոր թուրքական բանակին: Մյուլիր-բեյը՝ ոստիկանապետը, գանգատվում է, որ իր համար կոշիկ կարող հայ վարպետին սպանելուց հետո այլևս իր ոտքին հարմար կոշիկ չի գտնում: Բայց արհեստավոր ու շենացնող հայը գրգռում է այլատյաց ու մոլագար թուրք ամբոխին: Աղ ամբոխը նախանձում է հայ կանանց նրբակիրթ ոտքերին, որոնք սովոր են մետաքսե գուլպաների»:

2015-ին կաշվի մեր ազգային այդ անանցանելի կորուստների 100-րդ տարին: Սակայն դա միայն տառապանքի մխացող հիշողություն չէ: Հայ ժողովուրդը պահանջատեր է, նա այսուհետ ևս պահանջելու է, որ

¹ Նոյն տեղում, էջ 145:

Թուրքական իշխանությունները ճանաչեն 1915 թվականին իրենց նախորդների կազմակերպած Հայոց ցեղասպանությունը և ներողություն խնդրեն հայերից: Սակայն ինչպես հայտնի է, թուրքական կառավարող շրջանները ձգտում են չճանաչել այն և ամեն կերպ շրջանցում են այդ երևույթը՝ պնդելով, որ Թուրքիայում ընդհանրապես ցեղասպանություն չի եղել:

Մարինա Առստամյանի «Հայոց ցեղասպանության թեման գերմանական և ավստրիական գրականություններում» ուսումնասիրությունը ոչ միայն կարևոր ներդրում է մեր ժողովրդին հուզող պատմության մեջ, այլև շարաչող ապտակ է ժամանակակից Թուրքիայի այն ցինիկ դեկավարության, ովքեր ձգտում են ժխտել իրենց նախնիների հանցագործությունը՝ իրենք իսկ դաշնալով հանցակիցներ, վտանգելով մարդկության խաղաղստեղծարար կյանքը:

Սակայն, ինչպես ասված է, կրակ էլ տաս, Ճշնարիտին մահ չկա: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են աշխարհի երկու տասնյակից ավելի պետություններ: Գալու է օրը, երբ թուրք ժողովուրդը ներողություն է խնդրելու հայ ժողովրդից:

Այդ ոչ հեռու ժամանակի համապատկերի վրա ճշալու են այն առաջադիմ գործիչները, ովքեր ցավով գրել են Հայոց ցեղասպանության մասին, ինչպես նաև այնպիսի գրքեր, ինչպիսին Մարինա Առստամյանի ուսումնասիրությունն է:

Ամփոփում

Սույն հոդվածում քննարկվում է ԱրՊՀ երջանկահիշատակ Մարինա Առստամյանի «Հայոց ցեղասպանության թեման գերմանական և ավստրիական գրականություններում» ուսումնասիրությունը:

Հոդվածի հեղինակը նշում է, որ Մ. Առտամյանը հանգամանորեն ուսումնասիրել է գերմանացի հռչակավոր գրողներ Արմին Վեգների հրապարակախոսական ելույթները, եղաքր Հիլգենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» վեպը, ավստրիացի Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» ստեղծագործությունը և ընդհանրացրել, որ համաշխարհային հանրության պահանջով թուրք կառավարիչները պետք է ճանաչեն Հայոց ցեղասպանությունը, դրանով իսկ կկանխվեն ցեղասպանությունները ժամանակակից աշխարհում:

"Крик Армянского геноцида в новом освещении".

Ханян Сократ

Резюме

Ключевые слова: Армения, народ, младотурки, 1915г, геноцид, армянская литература, Марина Арутамян, немецкая литература, австрийская литература, реквием, Армин Вегнер, Эдгар Илзенрат, Франц Верфель.

В данной статье обсуждается книга Марины Арутамян: "Тема армянского геноцида в немецкой и австрийской литературах".

Автор статьи отмечает, что М. Арутамян тщательно исследовала публицистические выступления, письма и обращения писателя Армина Вигнера и роман "Сказка о последней мысли" Эдгара Илзенрата, знаменитое произведение австрийца Франса Верфеля "Сорок дней Мусы - дага". Делается вывод о том, что под влиянием мировой общественности турецкие правители должны признать армянский геноцид, предотвращая этим повторение геноцида в мире.

"Scream of the Armenian Genocide in a newlight"

Sokrat Khanyan

Summary

Keywords: Armenia, the people of the Young Turks in 1915, the genocide, Armenian literature, Marina Arustamian, German literature, Austrian Literature, Requiem, Armin Wegner, Edgar Hilsentrath, Franz Werfel.

This paper discusses the book of unforgettable Marina Arustamian. The subject is Armenian genocide in German and Austrian literature. The author of article notes that M. Arustamyan scrutinized journal is speeches, letters and appeals writer Armin Wigner and the novel "The Tale of the last thought" of Edgar Hilsentrath and the famous work of Austrian Frans Werfel "Forty Days of Musa Dagh".

Generalized that under the influence of the international community the Turkish rulers must recognize of the Armenian genocide, preventing the recurrence of genocide in this world.

ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ¹

Զինաիդա Բալայան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱրԴՀ

Բանալի բառեր. Արցախյան հանելուկներ, Արցախյան ավանդություններ, Ղարաբաղ, բարբար, բառարան, մտախառնվածք (մենթալիտետ), արցախահայ բանահյուսություն, տոհմիկ հոգեբանություն, պատմական հիշողություն, ասացող, վիպասաց, ավանդաշատ, հեքիաթասաց, հանելուկ, ավանդություն:

Արցախահայ բանահյուսությունը ամբողջության մեջ՝ չհայտնաբերվածությամբ, չմշակվածությամբ հանդերձ, հայ ժողովրդական ստեղծագործությունների ոսկե երակն է կազմում, միաժամանակ, առանձնանալով իր ինքնատիպ թե՛ ժամրային կառուցվածքով, թե՛ ապացույցների որակական պսակով, բարձր ու հետաքրքիր գաղափարայնությամբ, թե՛ աշխարհագրական լանդշաֆտի յուրատիպ գծույթներով, արցախահայ բարբարի տեղայնային տարբերակիչ օղակներով, թե՛ նյութերի, երևույթների, ազգային ավանդությունների, պատմական հիշողությունների, տոհմիկ հոգեբանության, արցախցու հետաքրքիր բառ ու բանի անգերազանց գեղարվեստական խտացումներով-ընդհանրացումներով:

Արցախական աշխարհը, որպես Ավետյաց երկիր, իր բարձրագահ ու թափանիստ սար ու ծորերով ոգեղեն արարումների մի բանադաշտ է՝ ինքնատիպ, ժայռեղեն կերտվածքով, լեզվաոճական հարուստ դրսնորումներով, անկրկնելի բարբառով՝ կապուտիկյանական ճշմարիտ բանացուցնամբ՝ «շուրբերիդ Վրա այնպես է բառը, ինչպես ժայռը հողում խրված»։ անբեկանելի՝ ճշմարտություն։

Տոհմիկ արցախցին և ստեղծաբան է, ասացող, և վիպասաց, ավանդութակիր, ավանդաշատ, և հեքիաթասաց-հեքիաթաստեղծ։ Մի խոսքով՝ նախնի ժամանակներից էլ նա հիշողութակիր-Վիպող-Վիրտուոզ (հանկարծաստեղծ) է։ («Աստված, թա կարում չըս մըէզ պահիս, վեր եք, մունք քեզ Ճըղուապուրու մաշու նման պահինք»), կամ («Հըյավուր ընք, սըվավուր ընք, թըվավուր ընք»), կամ («Հայ ընք, վայ ընք, ըստծու թայ ընք»), - փիլիստփայում է իմաստասեր արցախցին։

Հայ և արցախահայ բանահավաքչական աշխատանքները վավերագրել են իրենց հետաքրքիր դրսնորումները. իրատարակվել են տար-

¹Հորդածք ընդունված է 22.10.14:

բեր ժանրատեսակներով (հաճախ՝ միախառն) բովանդակային, մեկնողական, քրիստոնատիկ, բանաձևային ժողովածուներ:

Նմանատիպ շնորհակալ աշխատանքի է որդեգրվել նաև բ.գ.թ., դոցենտ Արմեն Յուրիի Սարգսյանը, որի ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակը իր մեջ ներառում է նաև արցախահայ բանահյուսական երկերի որոշ ժանրատեսակների (հանելուկ, ավանդություն, զվարձախոսություն, հեքիաթ և այլն) հավաքումը, քարտավորումը և հրատարակումը:

Արցախահայ բանահյուսական երկերի բանահավաքագրական ու հրատարակչական մասնակի աշխատանքներ են ամփոփված Սարգիս Զալայյանցի «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» ուսումնասիրության I (1842թ.) և II (1858թ.) մասերում, Մակար Բարխուդարյանի «Արցախ» (1885թ.), «Աղվանից աշխարհը և դրացիք» (1893թ.), Մ. Բարխուդարյանի գրաբարից աշխարհաբար թարգմանությամբ «Գաղտնիք Ղարաբաղի» (1886թ., Սանկտ Պետերբուրգ), Լեոյի «Ուխտավորի հիշատակարանը» (1885թ.), «Իմ հիշատակարանը» (1890թ.), «Մելիքի աղջկը», Ռաֆֆու «Երկու ամիս Աղվանից աշխարհի շուրջ», «Խսամսայի մելիքությունները» (1895թ.), Ս. Լալայանի «Վարանդա» (Ազգագրական հանրես, Թ գիրք, 1897թ.), Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ» ուսումնասիրություններում, որոշները՝ ի ամփոփ Ա. Ղանալանյանի «Ավանդապատում»-ում:

Ա. Սարգսյանը ևս մատնանշում է այս աղբյուրները՝ իրենց տեսակի մեջ դրանք որպես գնահատված-արժենորված ժողովածուներ ներկայացնելով:

Արցախահայ բանահյուսական նշանարների ամբողջական հրատարակչական աշխատանքներից առանձնանշելի են Մ.Գրիգորյան-Սպանդարյանի «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» (1971թ.), Մ. Առաքելյանի և Ռ. Ղահրամանյանի «Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողբանահյուսությունից» (1978թ.), Ս. Լիսիցյանի «Լեռնային Ղարաբաղի հայերը» (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, 1981թ.), Լ.Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» (1991թ.), Հր. Բեգլարյանի «Արցախ-Նամե», «Պըլը Պուղի» (Ստեփանակերտ, 2007թ.), Ա. Սարգսյանի 2014թ. հրատարակված «Արցախյան զվարձախոսություններ» և այլ ուսումնասիրություններ:

Ա. Սարգսյանի Ստեփանակերտի «Դիզակ պյուս»-ում, 2007թ. հրատարակված «Արցախյան ավանդություններ» ժողովածուն վերոհիշյալ շարքի արժեքավոր ննուշներից է:

Հեղինակի նախասիրած ժանրը այս անգամ (2002թ. բանագետը «Դիզակ պյուս» հրատարակչությունում լույս է ընծայել բանահյուսական՝ հանելուկի ժանրը Ներկայացնող «Արցախյան հանելուկներ» ժողովածուն) արցախահայ ավանդություններն են, ժանրատեսակ, որը ստեղծագործական բավականին լուրջ և հիմնավոր ձանապարհ է անցել, ունեցել է զարգացման պատմական և վիպական շերտեր, տեղագրական և ազգագրական, աշխարհագրական հետաքրքիր երանգներ, թեմատիկ տարբերակումներ, հայրենասիրական և լուսավորչական մեկնումներ, լեզվական յուրահատուկ տարանցումներ, բարբառային ինքնատիպ դրսնորումներ:

Արցախահայ բանահյուսական հնարնջուղ ու ճոխ ժանրանիի այդ պատումային զարմանահենք տեսակը՝ ավանդությունը, հնադեմ է, պատմական զարգացման տարբեր ժամանակների վիպական-դիցարանական երևույթների, ֆոլկլորային ակունքների, էթնիկ շերտերի կրողը:

Հարկավ. ինչպես մեծն Խսահակյանն է բնութագրում, ավանդությունները «երկիրը շենացնում են, բովանդակություն, խորություն, խորը տալիս, իմաստավորում, բանական դարձնում, բանաստեղծացնում, վիպային դարձնում, անհատականացնում, անձնավորում, հոգեշինացնում, մարդկայնացնում, ազգայնացնում, վրան կնիք ու դրոշմ դնում, կերպարանք տալիս, թե՛ ձև, թե՛ հոգի»¹, ազգային խառնվածքները թրծում՝ նրանց նկարագիրը տեսանելի դարձնելով:

Ավանդությունները կարելի է որպես հնագույն արցախահայ մարդու՝ պատմականորեն վավերացված վիպական, տոհմիկ նկարագիր, աշխարհաընկալումի պատումնաշար, ավանդույթների վիպասինթեզ, հերոսականության, մաքառումների, ազգային գենագծերի, ոգորումների, լինելության, լուսապաշտության, միֆական ասացումների, ավանդույթների գանձարան, իր արմատների ցուցանեկնարան գեղարվեստական նրբին ու ընդգրկված խտացումներով:

Անշուշտ, այս հատկանիշների գերակա ոճասինթեզը գերել է Ա. Սարգսյանին, որի արդյունքում նա ընթերցողների սեղանին է դրել «Արցախյան ավանդությունները»:

¹ Խսահակյան Ավ., Խտացումներ, «Գրական թերթ», 1960, թիվ 44:

Գիրքը հետաքրքիր, ուսանելի, արժեքավոր է մասնագիտական միքանի տեսանկյունից: Նախևառաջ առաջնանշենք. Ժողովածուն կազմված է հեղինակային ուղենչող խոսքից, ներածությունից, ժամրի մեջ երկնային մարմիններն ու երևոյթները ցուցող մասից, ընդգծված է ավանդութակիր Ղարաբաղ աշխարհը իր հինգ շրջաններով (Հաղորութ, Մարտունի, Մարտակերտ, Շահումյան, Շուշի) ու դրանց մեջ վերոհիշված այն գյուղերը, որոնց շուրջ ժողովուրդը հնուց հյուսել է պատումներ, և որոնք հաճախ մեկնում են նրանց ծնունդը, անվանադրությունը, հերոսականությունը, խառնվածքային գծերը: Այս տեսանկյունից հատկապես հատկանշական է Ղարաբաղին վերաբերող ավանդությունը.

«Ասում ըն՝ Լենկ-Թեմուրը վեր հըսալ ա Գօրիս, ուրան մարթկանցան մին քանէ հօրու դարկալ ա մէր յէրգիրը, թա.

-Քյըէցէք, տըէսէք էտ հուվէրք ըն, հինչ հըրըստօթուն օնին:

Տահանք էլ յըէկալ ըն, տը էսալ, քյըէցալ, լօխ նաղլ ըրալ.

-Յէրգիրը յավ յէրգիր ա՝ կանանց բըղէրում թաղված, ամմա ժուղօվուրթը շատ դօճաղ ըն, յավ կինի դըրաղ շող տաս:

Ես ըռնըխըմէն էլ ըսկացալ ա, ըսկացալ, թա.

-Յըէս հանց քըրըքանդ բիդի անին էտ կանանց բաղէրը, վեր տըէրնակարա (սկ) բաղէր:

Ըստրղան ա մէր յէրգիրին անումը մընացալ Ղարաբաղ»¹:

Ուսումնասիրող-բանահավաքը, նոյն հաջորդականությամբ նշելով շրջաններն ու նրանց մեջ ներառած տարածքները, առանձին մասով ներկայացնում է լեռները, բերդերը, ժայռերը, քարերը, ձորերը, դաշտերը, կամուրջները, տեղամասերը, ձանապարհները, դրանք իմաստաբանում ըստ ավանդության տրված անուններով ու հատկանշող բացահայտումներով:

Հաջորդ մասը ներկայացնում է կրոնական բնույթ կրող ավանդությունները, որոնք վերնագրված են «Վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, գերեզմաններ, սրբավայրեր» սկզբունքով: Այնուհետև հեղինակը առանձին բաժնով ներկայացնում է աղբյուրները, լճերը, գետերը՝ նոյն վարչատարածքային սահմաններով: Մաս են կազմում նաև բույսերի ու կենդանիների վերաբերյալ պատում-բացահայտումները: Առանձնաբաժնով են միաժամանակ Արցախա տան նշանավոր դեմքերը, տոհմերը, գերդաս-

¹ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, Ստ., «Դիզակ պյուս» տպ., 2007, թիվ 10, էջ 17:

տանները: Նախավերջին բաժինը օղակում է այլ ժանրատեսակներ և՝ առաջ-ասացվածքներ, անեծքներ, դարձվածներ, մականուններ:

Գիրքն ունի նաև կարճամետրած՝ այլևայլ բաժին ներկայացնող մաս, որին հաջորդում են ծանոթագրությունները:

Կազմված բաժինները հեշտացնում, դյուրին են դարձնում նյութը թե՛ բովանդակային, թե՛ ձևային, թե՛ ավանդությունների աշխարհագրական-տարածքային-ստեղծաբանական, կրոնական ու աշխարհիկ առանձնացումներով, թե՛ բուսական ու կենդանական աշխարհներին վերաբերող կտրվածքների, թե՛ ազգային, տոհմաբանական ճյուղագրությունների, գերդաստանների խրոնիկան մեկնելու, արժեքավոր դիրքերում այն տեղադրելու տեսանկյուններից, որը բանագետը ըստ սկզբունքի է կատարել: Այն նաև ուսուցողական, մեթոդական տեսանկյունից շահեկան է:

Նախամուտքում («Հեղինակի կողմից» վերտառությամբ) Ա. Սարգսյանը մեկնում և արժևորում է որոշ բանագիտական կարևոր տեղեկություններ: Նրա ընդգծմամբ՝ «Արցախյան ավանդություններ» ժողովածուն պարունակում է 266 ավանդություն ու ավանդագրույց (Երկու ժանրատեսակների հիմքն էլ իրական և հավաստի պատմություններ, պատմականազգային դիմագիծը վեր հանող նկարագրություններ են՝ 55 տարբերակումներով):

Ըստ Ա. Սարգսյանի՝ նշված քանակից 244-ը գրավոր խոսքում ներկայացվում է առաջին անգամ, որն ավելի է բարձրացնում ժողովածուի տեսակարար կշիռը՝ հատկանշելով նրա աղբյուրագիտական որակը:

Ժողովրդական այդ հրաշակտորները բանասացներից 1992-2006թթ. լսել ու գրի է առել հեղինակը նրանց իսկ ծննդավայրում ու ապրած վայրերում:

Ավանդությունների մի այլ մասը՝ մեկնաբանի տեղեկատվությամբ, գտնվում է հայագետ-բարբառագետ, բառարանագիր, մեծ որբություն ձաշակած, նախսկին վանեցի Կարո Դավթյանի (1904-1965) անձնական, մի մասն էլ՝ ԱրՊՀ հայագիտական կենտրոնի արխիվներում: Այդ կտորները գրի են առնվել ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողների կողմից¹:

Իր կողմից ասված նախախոսքում գիտնականը ընթերցողին ներկայացնում է ներածության ամփոփ նկարագիրը՝ մասնագիտական հմուտ

¹ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, էջ 3:

մեկնություններով: Այստեղ արդեն գործ ունենք խելացի բանահավաք-լեզվաբանի, բարբառագետի, իր երկրի ֆոլկլորի բնույթին, ակունքներին, սեռերին, ժանրերին ու նրանց առանձնահատկություններին քաջատեղյակ քննաբանի հետ:

Հեղինակը վերոցուցված՝ ինը մասից բաղկացած ժողովածուի նյութում ներկայացված ավանդությունները ճշտամարս, հեշտամարս դարձնելու նպատակով համարակալել է համապատասխան վերնագրերով:

Ներկայացրած նյութի հաջորդականությունը տրված է աշխարհագրական վայրի ցուցմանը՝ հարավից հյուսիսի հաջորդականությամբ:

Բանահավաքը, միաժամանակ, հնուտ ուսումնասիրողի է նման. իր նյութը դասդասելուց հետո այն ստուգում է նույն վայրի մի քանի բարբառախոսների վկայությամբ՝ այսպիսով ապահովելով նյութի հավաստիությունը:

Ժողովածուի նյութը ոչ միայն Դարաբաղի բուն բարբառը, այլև Հադրութի, Շատախի, Շահումյանի, Մեհտիշենի Ենթարբառներն է ընդգրկում՝ 80 խոսվածքաշերտերով:

Բանահավաքական աշխատանքների տպագրությունը հուշում է, որ որոշ պաշտոնապես նշանակված խմբեր նույնիսկ չեն ցուցաբերել համապատասխան մասնագիտական մոտեցում: Հաճախ պարզապես նյութը բանասացներից գրանք են՝ առանց նշելու գրառման վայրը, ժամանակը, Ենթարբառի տեղը, բանասացի ինքնությունը և այլն և այլն:

Այս պարագայում՝ պարզապես հիանալ կարելի է Ա. Սարգսյանի շնորհակալ աշխատանքով: Նա պահպանել է (նույնիսկ գերակատարել) բանահավաքական աշխատանքներից պահանջվող մասնագիտական բոլոր նրբությունները:

Դրվատելի է նաև այն փաստը, որ բանահավաքը ընթերցողին (իսկ այն համոզված ենք, բազմատար է) օգնելու նպատակով, ժողովածուն ներկայացնում է Արցախի բարբառատարածքի խոսվածքային այն բնորոշ հնչյունները, որոնք չկան գրական հայերենում: Դրանք են.

ա - ա ձայնավորի քնային տարբերակը՝ արուն, ահատ, հար, հալա;

ու – ու ձայնավորի քնային տարբերակը՝ ուրուգ յուն, վուրք յ-տուրք յ, տուզնը, սուրու;

օ – օ ձայնավորի քնային տարբերակը՝ օօօ, շօր, ծօր, քյօրիսա;

ը է – ը և է ձայնավորների միջին աստիճանը՝ մըէծ, խըէլք, վըէտք, ծընըէրնը;

ը ի (գործածական է միայն որոշ՝ հատկապես Մարտակերտի շրջանի խոսվածքներում) – ը և ի ձայնավորների միջին աստիճանը՝ ըիվիլանալ, խըհլա, նըհստա, լըիվօթուն;

զյ - գ բաղաձայնի քնային տարբերակը՝ գյիղալ, զյօլ, դագյա, խօրագյ;

կ յ – կ բաղաձայնի քնային տարբերակը՝ կ յուտիլ, կ յուլ, կ յումաշ, կ յըրկ յամօտ;

ք յ – ք բաղաձայնի քնային տարբերակը՝ ք յօրիկա, ք յօթուկ, բալք յի, մարաք յ:

Որոշ խոսվածքներում հազվադեպ գործածություն ունեն դ յ, զ յ, թ յ, լ յ, ծ յ, ճ յ, ս յ, ց յ և այլ բաղաձայններ, որոնք ներկայացնում են գրական հայերենի համապատասխան հնչյունների քնային տարբերակները՝ քրդքանդ յ, մազ յ, խութ յ, լ յավ, կըծ յաքար, ճ յինանչիլ, քըս յիլ, քըց յիլ։ Տարածքի բոլոր խոսվածքներում բացակայում է ֆ հնչյունը, որի փոխարեն ամենուր գործածվում է փ բաղաձայնը¹:

Ներածությունում հեղինակը սեղմ բնութագրում է ավանդության ժանրը և մեկնում այն բնութագրող հատկանիշները, ցուցում՝ գտնելով, որ «հնում տեղի ունեցած պատմական դեպքերը, ներքին և արտաքին շփումներն ու փոխհարաբերություններն արտացոլող պատմությունները փոխանցվում են սերնդեսերունդ՝ նպաստելով ժողովրդի պատմական գիտակցության ձևավորմանն ու ինքնության հաստատմանը»։

Վերոհիշյալ բաժնում հեղինակը հավուր պատշաճի սեղմ ներկայացնում է հայ բանահավաքչական աշխատանքների պատմությունը՝ դրանց մեջ առանձնացնելով բուն Արցախի ժողբանահյուսությանը վերաբերող ուսումնասիրությունները։

Թե՛ ժողովրդական, թե՛ գեղարվեստական գրականության, ֆոլկլորային երկերի մեջ հաճախ մի ժանրի գործը ներկայացվել է մի այլ ժանրի տակ։ Ո՞րն է կարգը գեղարվեստական կամ ֆոլկլորային երկի ժանրի բացահայտման ուղղությամբ։

Հովհաննես Թումանյանի «Գեղարվեստական երկեր» ժողովածուի առաջաբանում Եղիշե Չարենցը դիրքորոշող կերպով կատարել է հայտարարություն։ «Անհրաժեշտ է մի քանի խոսք ասել մանավանդ այդ չարաբաստիկ «ժանրերի» մասին։ Թե որքան խախուս բան է «ժանր» հասկացությունը, զուրկ գիտական որևէ օբեկտիվ հատկանիշից, ապացու-

¹ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, էջ 3։

ցում է թեկուզ հենց այն հանգամանքը, որ ինքը՝ Հովհ. Թումանյանը իր ժողովածուները կազմելիս շատ հաճախ միևնույն գրվածքը գետեղել է մերթ իբրև «լեզենդ», մերթ իբրեւ «հեքիաթ» (կավելացնեմ նաև՝ իբրև «ավանդություն», «բալադ»։ Ընդգծումը՝ Զ. Բալայան) և այլն, - և բոլոր դեպքերում էլ հավասար իրավունքով, որովհետև ամբողջ գրականության մեջ չենք գտնի երկու հոգի, որ միևնույն բնորոշումը տային պոեմին կամ բալադին, պատմվածքին կամ վեպին...»¹:

Բանահյուսական ժանրերի տարբերակնան մեկնությունները հայ բանագիտական միտքը այլևայլ ձևերով է ներկայացնում։ Հաճախ հիմք են ներկայացնում թեմատիկ հատկանիշները, ոմանք էլ՝ ձևական-կառուցվածքային կողմը։ Նշանավոր բանագետ Վ. Պրոար, քննելով հարցը, ներկայացնում է ժանրի տարբերակնան չորս չափանիշ՝ ա) նրա պոետիկան, բ) կենցաղային կիրառությունը, գ) կատարման ձևը, դ) դեպի երաժշտությունն ունեցած հակումը։ «Ոչ մի հատկանիշ առանձին վերցրած, իբրև կանոն, դեռ չի բնորոշում ժանրը։ Ժանրը որոշվում է այդ հատկանիշների ամբողջությամբ»², - եզրահանգում է գիտնականը։

Ա. Սարգսյանը «Արցախյան ավանդություններ» ժողովածուի ներածությունում նույնպես նշում է նման բանագիտական փոխանցումների մասին՝ հատկանշելով հայ բանագիտության պատմության փաստերը ևս։ «Տումի գյուղի Պըօըվալէնց տեղանքի մասին պատմվող ավանդությունը (թիվ 93) բանագիտական գրականության մեջ ներկայացվում է նաև որպես հեքիաթ³: Գիշերվա և ցերեկվա հաջորդականությունն բնորոշող ավանդությունը (թիվ 8.բ) հանդես է գալիս «Սինան թագավէրը» հեքիաթի մեջ⁴ և նույնիսկ գործածվում որպես հանելով (Սին պառավ կընէգ՝ ըռըշկին մին սըէվ, մին սպիտակ կըծէգ, մինը կըզկում ա, մինը յըէտ տամ)։

....Քիչ չէ նաև ավանդությունների վերածված անեկուտների և գրույցների թիվը։ Որոշ ավանդություններ էլ ժամանակի ընթացքում դարձել են առած-ասացվածքներ, դարձվածներ, օրինանքներ, անեծքներ՝ իրենց մեջ խտացնելով հարազատ ժողովրդի իմաստությունն ու փիլիսոփայությունը⁵, - եզրահանգում է բանագետը։

¹ Զարենց Ե., Եժ, հ. 6, Ե., 1967, էջ 249:

² Պրոռ Բ., Принципы классификации фольклорных жанров, "Советская этнография", 1964, N 4, стр. 149.

³ Տե՛ս Դավիթ Ժայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, Ե., 1966, էջ 675:

⁴ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, էջ 29:

⁵ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, էջ 4:

Ա. Սարգսյանը խոսում է ավանդության ժամրին հատուկ ժամրի ստեղծման պատմության, կառուցվացքի ու ձևի, գեղավեստական, ապա նաև պատմական ու ճանաչողական արժեքի ու նրա հատկանիշների մասին, նաև արժեքորելով իր գնահատումները, ցույց տալով, որ ավանդությունները երբեմնակի ուսումնասիրողների համար դառնում են որպես անհերքելի սկզբնաղբյուրներ:

Սակայն, ինչպես գիտենք, հաճախ բանահյուսական ժամրերը, սերնեց սերունդ փոխանցվելով, շեղումներ են ունենում, կորցնում իրենց հավաստիությունը և արտահայտման ձևերը: Դրա վառ օրինակը կարող է հանդիսանալ Ա. Սարգսյանի հատկանշած Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի վերաբերյալ ավանդությունը.

ՍԸՆՏՈՒՐԱԾԵՆ

Հու Վեր Սուխտուրաշեն իլած ա, տըէսած կինի, թա իինչ տըրախստ տըէտ ա՝ գօրտ-գօրտ Ճիրէր, կանանց հանդէր, ծառէր, ծօրէր: Դէ, ըշխարքավը մին անումը յէր իլած տինջիրին էլ Ճօկ պէն ա: Շատէրը գյուդում ըն, թա ըտըէտ սըխտօղը շատ ա, ըտըրա հէտէ յա անումը ըտի, ամիա չ: Սըխտօղը ըստըէտ լավ չի տըրէնում: Ես շինատըէտը քյոհնա վախտէրը իլալ ա Իրանէն շահէն դըշատըէտը: Վեր շահը գզզանան յէկալ ա, ըտըէտ Վեր յէկալ, շինըտըէտէն անումը տիրալ ըն Շախ դուրան շէն (շահէն վըէննը կընալի շէն): Դէ, պարպառ ա լի՞, ժուկ ա ընցալ, ժամանակ ա ընցալ, էս անումը փոխվալ ա, տըէռալ Շըխդուրաշեն, յէտնան էլ՝ Սըխտուրաշէն¹:

Ըստ Ա. Ղանալանյանի՝ ավանդությունները տեսակավորվում են երեք կարգով.

ա) ստուգաբանական ավանդություններ (մեկնվում, ստուգաբանվում, իմաստավորվում են անհասկանալի բառերը),

բ) բացատրական ավանդություններ,

գ) Վարքաբանական ավանդություններ:

Ա. Սարգսյանի դիտմամբ՝ արցախսահայ բանահյուսությունում գերակշռում են ստուգաբանական ավանդությունները:

Հետևելով բանագիտության մեջ տարածված ավանդությունների ազգային հատկանիշների (դրանք լինում են ազգային, միջազգային և եկամուտ) քննությանը՝ բանահավաքը կարծիք է հայտնում, որ արցախսահայ

¹ Սարգսյան Ա., Արցախյան ավանդություններ, թիվ 32, էջ 23:

բանարվեստում՝ ըստ քանակի և պատմական ու ձանաչողական արժեքի՝ գերակշռում են ազգայինները:

Իսկ դրանք Արցախի ու արցախցու ճակատագրի, պատմության, նրա խառնվածքի, էթնիկ պատկանելության, ոգեղենի գեղեցիկ, լակոնիկ, ստեղծագործական շերտերն են վերհանում:

Ժողովածուում ամփոփված (ինը բաժին) ավանդությունները հեղինակը, ինչպես նշել ենք, դասդասել է ըստ արցախցու ունեցած հավատալիքների, ծեսերի, սրբությունների, սրբատեղինների (իսկ դրանք կարող են լինել հայրենի բնաշխարհը՝ լեռները (Քիրս, Մռով, Դիզափայտ), գետերը (Տրտու-Թարթառ-Կարկառ), աղբյուրները, խորշերը, ջրերը, եկեղեցինները, բույսերը, կենդանինները, թռչունները, մայրը, հայրենիքը, կաթնասունները (կատուններ), երկնային լուսատունները և այլն և այլն), սիրած հերոսների (Վարքաբանական ավանդություն Թյուլի Արգումանի (թիվ 28), Հոք Երանելու (թիվ 29), Խրիմյան Հայրիկի (թիվ 30), Վանի Յուզբաշու (թիվ 31) և այլոց մասին), ծաղրի արժանացած մարդկանց, ատելության արժանացած թշնամինների (Լենկ Թեմուր, Բուլա, Փանահ և Իբրահիմ, Մեհսի խաններ) և այլ երևույթների շուրջ:

Հետևելով բանագիտական ժողովածուների կառուցքաբանական փորձին՝ Ա. Սարգսյանը «Արցախյան ավանդությունների» նյութը դասդասել է ըստ թեմայի, թեմատիկայի, պաշտանմունքային ծևի, վայրի, աշխարհագրական, պատմական տարածքի, իմաստի ու բովանդակության, կենդանական ու բուսական աշխարհների, երկնային մարմինների ու երևույթների, գյուղերի, մարդկային և տոհմային պատկանելության, կրոնական սյուժեների, մարդկային հարաբերությունների ցուցման:

Բանագետը խոսում է միաժամանակ միջազգային և եկամուտ արժեքների՝ երկերի մասին: Դրանք փոխառություններն են և ունեն թափառող բնույթ: Ըստ բանագիտական քննության՝ դրանք մտնում են փոխառությունների կամ թափառիկ սյուժեների դպրոցի կամ ուղղության ոլորտը:

Այս կարգի ավանդությունները հետևանք են հայ ժողովրդի՝ տարբեր ժամանակներում այլևայլ ժողովուրդների հետ ունեցած բազմադեմ բանահյուսական շփումների:

Ժողովածուի նյութը դասդասաված է, խմբագրված, ամբողջացված, քարտավորված՝ բոլոր կողմերով:

Ներածությանը կցված է ժանրին վերաբերող համարյա սպառիչ օգտագործված գրականության ցանկ:

Հարուստ ու տեսականորեն գնահատելի է ցուցված ծանոթագրություններ բաժինը: Նախ ներկայացված են յուրաքանչյուր ավանդության բանասացի ինքնությունը, ծննդավայրը, ապա տվյալ ավանդության համեմատությունը՝ հրատարակված գիտական աղբյունների հետ:

Միանգամայն ամփոփ, արժեքավոր աշխատանք:

Ժողովրդին է վերադարձվում ժողովրդի ստեղծածը, հնարավորինս՝ հավաքական տեսքով՝ իրենց հայթայթած արժեքներով:

Հայոց մեծերից քանի՝ քանիսներն են մղվել այդ սուրբ գործին՝ ժողովրդի ստեղծած բանավոր արժեքները հավաքելու, պահ տալու գրավոր հիշողությանը և այն վերադարձնելու ժողովրդին: Այդ նրանք են՝ նվիրյալները:

Այս սուրբ առաքելության մի վկան էլ, նվիրյալը՝ բանահավաք- գիտականն է, լեզվաբանը, բարբառագետը, մշակութային, կրթական գործիչը՝ Ա.Յ. Սարգսյանը:

Ավանդությունները առողջ և նորոգվող ժանր են, ժամանակի և մարդկային հարաբերությունների վկայակիմը, որն ազնիվ նպատակ ու խորհուրդ ունի՝ պահել ու պահպանել, մոռացության կորուստներից փրկել ազգի արարությունների, հավատալիքների, պատմության, բառ ու բանի, հարատևության խորիուրդը, լինել ազգի հոգևոր, մարմնավոր, ոգեղեն արժեքների անխաթար վկայագիրը՝ զոր ու զորընդեղ:

Ժողովածուն, նախկինի՝ «Արցախյան հանելուկներ»-ի ու նոր հրատարակվածի՝ «Արցախյան զվարձախոսություններ»-ի հետ միասին մի թանգագին ու արժեքավոր, բանագիտական բույլ է, չխամրող հիշողության դաշտ, որի մեկնությամբ կարող ենք ճանաչել ինքներս մեզ և մեր ցավանախշ պատմությունը, լինելության արմատը:

«Արցախյան հանելուկները» և «Արցախյան ավանդությունները», «Արցախյան առակները», «Ղարաբաղի բարեարի բառարան», «Արցախյան զվարձախոսությունները», որոնց դեռևս կանդրադառնանք՝ արցախահայ բանագիտական ուսումնասիրությունների շարքը համալրող լուրջ, արժեքավոր ժողովածուներ են:

Դրանց ընթերցողը ոչ միայն ուսանողը, մանկավարժը, բանագետը, բարբառագետը, բանահավաքը, գիտնականը կլինեն, այլև՝ ամբողջ ազգը:

Գիրքը խնբագրել է բ.գ.թ. Ավարդ Ղազիյանը, ով մեծ ավանդ ունի հայ և հատկապես՝ արցախահայ բանագիտության մեջ:

ժողովածուն՝ «Արցախյան ավանդությունները», տպագրության է երաշխավորել ԼՂՀ կողմության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

Այն արժանացել է ԼՂՀ կողմության և գիտության նախարարության մրցանակի՝ որպես տարվա լավագույն գիտական աշխատանք:

Անվիրվում

Արմեն Սարգսյանի «Արցախյան հանելուկներ», «Արցախյան ավանդություններ», «Արցախյան առաջնային աշխատանք», «Արցախյան զվարձախոսություններ», «Դարաբաղի բարբարի բառարան» և այլ բանահյուսական-հայագիտական ժողովածուներ հայ բանագիտական մտքի արժեքավոր նմուշներից են, որոնց մեջ արտահայտված են արցախահայության ինքնատիպ մտածելակերպը, մտախան-վաժքի (մենքալիտետի) հզորագոր երակը, դարավոր արարումների ուսկե բիլագուկը, ներքին ու արտաքին բռնակալների, հարստահարիչների դեմ սուր, ընդգծված պայքարը, մշտարթուն, աննվաճ, ազատասեր ոգին, իմաստասեր և հավատավոր բարքը, որոնք ընդգծում են նրա անկրկնելի հանձարը:

Արցախցու ազգային և համազգային որակների, տոհմիկ, հրաշակերտ հոգեբանության շերտերի, ֆոլկլորային ակունքների վերհանման հիմանալի և դրվատելի գործին է լծված երիտասարդ տաղանդավոր բանագետը, որը երևան է հանված վերոդիտված գրքերում, հատկապես «Արցախյան ավանդություններ» գրքում:

Ценное фольклорное исследование

Балаян Зинаида

Резюме

Ключевые слова: Арцахский фольклор, своеобразный, народная психология, историческая память, новеллист, богатый традициями, говорящий, рассказчик, загадка, традиции, арцахские загадки, арцахские традиции, Карабах, диалект, словарь.

Коллекция книг Армена Саркисяна "Арцахские загадки", "Арцахские традиции", "Арцахские смешные истории", "Словарь арцахского диалекта" и другие фольклорные сборники являются одним из ценных доказательств армянской творческой мысли, в них отражен своеобразный ход мыслей армян Арцаха, мощная жилка менталитета, золотой венец векового творчества. Острая борьба против внешних и внутренних диктаторов и угнетателей, всегда бодрствующая и свободолюбивая душа, философский и религиозный образ жизни подчеркивают его непревзойденное мастерство.

Национальным и общенациональным качествам арцахца, его родовой психологии, и изучению фольклорных источников посвятил себя молодой талантливый фольклорист, что и проявляется в вышеупомянутых книгах, особенно в книге "Арцахские традиции".

A Valuable Creative research

Zinaida Balayan

Summary

Keywords: Artsakh folklore, folk psychology, historical memory, novelist, rich in tradition, the speaker, the narrator, a mystery, tradition, Artsakh puzzles, Artsakh tradition, Karabakh,dialect, dictionary.

The collection of Armen Sargsyan's books "Artsakh Puzzles", "Artsakh Tradition", "Artsakh Funny Stories", "Dictionary of the Artsakh Dialect" and other folklore collections are one of the valuable evidence of armenian creative thought, they reflect the original thinking of Artsakh, powerful vein mentality, gold crown of sentury creativity. The struggle against external and internal dictators and oppressors always cheeful and freedom-loving soul, philosophical and religious life emphasize its excellence.

National and nationwide qualities of Artsakh people, its generic psychology and the study of folklore sources devoted himself to a young talented folklorist, which is manifested in the above mentioned books, especially in the book "Artsakh tradition."

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԱՆԵՍ ՎԱՐԴՊԵՏԸ ՉԱԼԵՋՈՐ ԳՅՈՒՂԻՑ	4	
Սերգեյ Հախվերդյան	4	
 ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՆՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ Գոհար Միսիթարյան		10
 ԴԱՐԱԲԱՂԸ՝ ԳՅՈՒԼԻՍԱԾԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՉԼՈՒԾՎԱԾ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵճԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ Նելլի Բաղդասարյան		26
 ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԸ՝ ԱՐՑԱԽ «ԱՇԽԱՐԴԻ»ՊԱՏՄԱՎԻՍՏԱԳՐԱԿԱՎԱՆ ԷԹԱՆԻԿ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ Է Նունե Սարումյան		31
 ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՆՄԲՄԱՆ ԳՈՐԾՈՆԹԱՑԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ Վահրամ Բալայան		47
 1921թ. ՓԵՏՐԿԱՐՅԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱՊԱՐՁ Կ.ՊՈԼԻԿ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ԹԵՐԹԻ ԷԶԵՐՈՒՄ Խաչատոր Ստեփանյան		56
 1918-1920 թթ. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՐՑԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱԴՐԵՖԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ Արմինե Առատամյան		67
 ԴԱՐԱԲԱՂԻ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄ ՅԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԵՖԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ Ստեփան Դադայան		87
 ԱՐԴԻ ԱԴՐԵՖԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԳ Վարդգես Սաֆարյան		103
 ԽՈՐՀՈՂԱՅԻՆ ԱԴՐԵՖԱՆԻ ԷԹԱՆԻԿ ԽՃԱՆԿԱՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒՇԱՆ ԱԴՐԵՖԱՆԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ Վահագն Դադայան		115
 «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱՎՅՈԶՅԱՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ Արարատ Վարդանյան		127

ԿԱՆԱՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ- ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԻՆ (1991-1994թ.) Իսկուհի Ավանեսյան	136
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍՈՎԱՏՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆՇՆԱՐՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒԹՅՈՒԹՅԱՆ» ԺՈՂՈՎՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ Անահիտ Արայիան	150
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԻՇԾ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ Սոկրատ Խանյան	166
ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱԿՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ Զինափոխ Բալայան	173

СОДЕРЖАНИЕ

Сиранес вардапет из села Алидзор Сергей Ахвердян	4
Социальный и правовой статус армян северо-восточного закавказья во второй половине XVIII века Гоар Мхитарян	10
Карабах среди нерешенных территориальных споров Гюлистанского договора Нелли Багдасарян	26
Северный Арцах-этнически и экономически историко-географическая часть Арцаха Нуне Сарумян	31
Процесс национальной консолидации армян в начале 20 века Ваграм Балаян	47
Отражение Февральской революции 1921г. на страницах константинопольской газеты “Чакатамарт” Хачатур Степанян	56
Отражение арцахской проблемы (1918-1920 гг.) в азербайджанской историографии Армине Арутсамян	67
Фальсификация истории Карабаха первой трети XIX в. азербайджанскими историками Степан Дадаян	87
К вопросу фальсификации истории Южного Кавказа в современной азербайджанской историографии Вардгес Сафарян	103
Этническая мозаика Советского Азербайджана и азербайджанские методы решения национального вопроса Ваагн Дадаян	115
Деятельность фонда “Товард Карагезян” на Родине Аракат Варданян	127
Участие женщин в военном этапе национально-освободительной борьбы армянства Арцаха(1991-1994гг.) Искуи Аванесян	136

Народные эскизы в сборниках Левона Арутюняна “Реликвии фольклора Арцаха“	150
Анант Атаян	150
"Крик Армянского геноцида в новом освещении". Ханян Сократ	166
Ценное фольклорное исследование Балаян Зинаида	173

CONTENT

Siranes Vardapet from the village of Halidzor Sergey Hakhverdian	4
The Social and legal status of north-east Transcaucasia in the second half of the 18th century Gohar Mkhitaryan	10
Karabagh among the Unresolved Border Disputes of the Treaty of Gulistan Nelly Baghdasaryan	26
Nort Artsakh is history geographical economic area of Artsakh "World" Nune Sarumyan	31
The process of national consolidation of Armenians at the beginning of the 20th century Vahram Balayan	47
Reflection of 1921 February rebellion in Costantinopolis's "Chakatamart" Daily Khachatur Stepanyan	56
The Artsakh ussue in the azerbaijans historiography in 1918-1920 Armine Arstamyan	67
The Falsification of the History of Karabakh of the first Quarter of the XIX century by Azerbaijan Historians Stepan Dadayan	87
On the issue of falsification of the South Caucasus history in the modern Azerbaijani historiography by Vardges Safaryan	103
The ethnic mosaic of Soviet Azerbaijan and the Azerbaijani methods of solving national issue Vahagn Dadayan	115
The activity of the Howard Karagheusian Foundation in Homeland Ararat Vardanyan	127

Participation of women in the military phase of the national-liberation struggle of the Armenians of Artsakh (1991-1994)	
Iskuhi Avanesyan	136
"Folk sketches in the collections of Levon Hayrapetyan", "Relics of Artsakh folklore"	
Anahit Atayan	150
"Scream of the Armenian Genocide in a newlight"	
Sokrat Khanyan	166
A Valuable Creative research	
Zinaida Balayan	173

ԱՐՑԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
(периодический сборник научных статей)

ARMENOLOGY RESEARCHES
(periodical collection of scientific articles)

5

Տեխնիկական
Խմբագիր՝ Լիլա Գրիգորյան

Հանձնված է շարվածքի՝ 07.10.14 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 19.05.15 թ.:
Չափսը՝ 70x108 1/16: Ծավալը՝ 12 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 100:

ԱրՊՀ հրատարակչություն
ք. Ստեփանակերտ, Ա. Գոշի փ. 5

